ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳԻՐ

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերություն

Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2

Հեռ.՝ (+37410) 60 55 55, (+37410) 20 55 55

էլ. փոստ՝ hello@evoca.am, կայք՝ www.evoca.am

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերություն

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2

Հեռ.՝ (+37410) 60 55 55, (+37410) 20 55 55

էլ. փոստ՝ hello@evoca.am, կայք՝ www.evoca.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի տեսակը	անվանական, արժեկտրոնային պարտատոմս		
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային		
Արժեթղթերի քանակը	500,000 հատ	200,000 հատ	100,000 հատ
Արժեթղթերի թողարկման ծավալը	5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ	20,000,000 (քսան միլիոն) ԱՄՆ դոլար	10,000,000 (տասը միլիոն) Եվրո
Արժեթղթերի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար	100 (մեկ հարյուր) Եվրո
Արժեկտրոնը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ		
Շրջանառության ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ		

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԲԱԺԻՆ 1.ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ		3
ԲԱԺԻՆ 2. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ		5
2.1	Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	5
2.2	Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	11
2.3	Բանկի զարգացման միտումները	13
2.4	Համառոտ տեղեկություններ Բանկի աուդիտն իրականացնող անձանց մասին	14
2.5	Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը	15
2.6	Առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները	17
2.7	Վերջնական պայմանների հրապարակման ձևը	18
2.8	Ամփոփ ֆինանսական տվյալներ	19
ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		21
3.1	Ռիսկային գործոններ	21
3.2	Հիմնական տեղեկատվություն	22
3.3	Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն	22
3.4	Առաջարկի ժամկետները և պայմանները	30
3.5	Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	38
3.6	Լրացուցիչ տեղեկատվություն	39
ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		40
4.1	Անկախ աուդիտորները	40
4.2	Ռիսկային գործոններ	40
4.3	Տեղեկատվություն Բանկի մասին	43
4.4	Բիզնեսի նկարագիրը	46
4.5	Բանկի կառուցվածքը	50
4.6	Զարգացման վերջին միտումները	50
4.7	Շահույթի կանխատեսումը և գնահատումը	51
4.8	Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	52
4.9	Հսկող անձինք	64
4.10	Տեղեկատվություն Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ	65
4.11	Էական պայմանագրեր	65
4.12	Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը եվ երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	65
4.13	Այլ տեղեկատվություն	66
	Հավելվածներ	67

ԲԱԺԻՆ 1 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՔ

Մենք՝ ստորագրող անձիք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ՝ մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկատվության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձիք՝

Խոսե Մարիա Մորենո դե Բարրեդա	**Խորհրդի նախագահ**		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Գեղամ Գևորգյան	**Խորհրդի անդամ**		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Վարուժան Ավետիքյան	**Խորհրդի անդամ**		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Մարինա Փսոմաս	**Խորհրդի անդամ**		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Կարեն Եղիազարյան	**Վարչության նախագահ**		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Արմեն Հակոբյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ**		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Տաթևիկ Խաչատրյան	**Վարչության նախագահի տեղակալ**		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**

Հայկ Պետրոսյան	Վարչության նախագահի տեղակալ		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Լիլիթ Գաբոյան	Վարչության նախագահի տեղակալ ֆինանսական գծով		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Էմմա Ջանինյան	Գլխավոր հաշվապահ		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սմբատ Մարտիրոսյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միեր Սահակյան	Վարչության անդամ, Ծրագրավորման և գործառնական համակարգերի վարչության պետ		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տաթևիկ Ջանոյան	Վարչության անդամ, ՄՌԿ բաժնի պետ		20.02.2023թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 2. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՇԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ
ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու դեպքում (այդ թվում նաև թարգմանությանը վերաբերող մասով) ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք կրում են քաղաքացիականպատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով՝ Բանկի Գլխավոր գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ www.evoca.am**:**

2.1 Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

2.1.1. Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Բանկի լրիվ ֆիրմային անվանումը՝

հայերեն՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ռուսերեն՝ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО “ЭВОКАБАНК”
անգլերեն՝ “EVOCABANK” CLOSED JOINT STOCK COMPANY

Բանկի կրճատ ֆիրմային անվանումը՝

հայերեն՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ռուսերեն՝ ЗАО “ЭВОКАБАНК”
անգլերեն՝ “EVOCABANK” CJSC

Բանկի պետական գրանցման վայրը՝
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2

Բանկի գտնվելու վայրը՝
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2

Բանկի պետական գրանցման համարը՝ 27

Կապի միջոցները՝
Հեռ.՝ (+37410) 60 55 55, (+37410) 20 55 55
էլ. փոստ՝ hello@evoca.am
էլ. հասցե՝ www.evoca.am
Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Բանկի Ներդրումային գործառնությունների բաժնի որևէ աշխատակցի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 60 55 55 (15-03, 15-11, 15-12), (+374 10) 20 55 55:

2.1.2. Թողարկողի համառոտ պատմությունը

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն 1990թ. հունիսի 1-ին ՀՀ օրենսդրության համաձայն հիմնադրվել է որպես «Պրոմեթևս» Առևտրային Բանկ և գործում է բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա:

Ստորև ներկայացված է համառոտ պատմական ակնարկ Բանկի հիմնադրման և զարգացման մասին.

- 1990թ. Բանկը հիմնադրվել է որպես «Պրոմեթևս» առևտրային բանկ:
- 1991թ. հոկտեմբերի 2-ին լիցենզավորվել է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ թիվ 27 ընդհանուր արտոնագրով:
- 1996թ. Վերանվանվել է՝ «Պրոմեթևս Բանկ» ՍՊԸ:
- 2001թ. Վերանվանվել է «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ:
- 2007թ. Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է 3.5 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 7.2 մլրդ ՀՀ դրամ:
- 2011թ. Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է ևս 7.2 մլրդ ՀՀ դրամով, կազմելով՝ 14.4 մլրդ ՀՀ դրամ:
- 2016թ.
  - տեղի է ունեցել Բանկի կազմակերպաիրավական ձևի փոփոխություն՝ վերակազմավորվելով ՍՊԸ-ից ՓԲԸ-ի
  - արտոնյալ բաժնետոմսերի թողարկման միջոցով իրականացվել է կանոնադրական կապիտալի համալրում ևս 3.550 մլրդ ՀՀ դրամով, ինչի արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կազմել է 17.950 մլրդ. ՀՀ դրամ:
- 2017թ. Բանկը վերանվանվել է «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի՝ փոխելով իր ռազմավարությունը և բիզնես մոդելը՝ անցնելով mobile-first ֆորմատի:
- 2020թ. մայիսի 29-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում կայացված որոշմամբ՝ Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է ևս 2.050 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 20 մլրդ ՀՀ դրամ
- 2022թ.
  - մարտի 12-ին բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում կայացված որոշմամբ՝ Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է ևս 2.250 մլրդ ՀՀ դրամով,
  - իսկ արտոնյալ բաժնետոմսերի թողարկման միջոցով իրականացվել է կանոնադրական կապիտալի համալրում 750 մլն ՀՀ դրամով, ինչի արդյունքում բանկի կանոնադրական կապիտալը կազմել է 23 մլրդ ՀՀ դրամ:

2.1.3. Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալը կազմում է 23 մլրդ ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 172,500 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) հատ թողարկված և տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 57,500 (հիսունյոթ հազար հինգ հարյուր) հատ թողարկված և տեղաբաշխված արտոնյալ տեսակի բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով), ընդ որում՝ արտոնյալ տեսակի բաժնետոմսերը բաժանված են 35,500 (երեսունհինգ հազար հինգ հարյուր) հատ

07.10.2016թ. թողարկման, 14,500 (տասնչորս հազար հինգ հարյուր) հատ 29.05.2020թ. թողարկման և 7,500 (յոթ հազար հինգ հարյուր) հատ 12.03.2022թ. թողարկման արտոնյալ տեսակի բաժնետոմսերի:
Բանկի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է ՀՀ դրամով:

Բանկի կանոնադրական հիմնադրամի մեծացումն իրականացվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.1.4. Բանկի մասնաճյուղերը

Բանկն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում գործող Գլխամասային գրասենյակում և թվով 13 մասնաճյուղերում:
Բանկի մասնաճյուղերի ցանկն ու հասցեները ներկայացված են ստորև բերված աղուսյակում.

Անվանում	Հասցե
Գլխամասային գրասենյակ	ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 44/2
Պարոնյան	ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 15/3
Կասյան	ՀՀ, ք. Երևան, Կասյան 5
Թումանյան	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 15
Ազատություն	ՀՀ, ք. Երևան, Ազատության 12
Գարեգին Նժդեհ	ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհ 9
Էրեբունի	ՀՀ, ք. Երևան, Գաջեգործների 76
Դավթաշեն	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Պետրոսյան 32/8
Կիևյան	ՀՀ, ք. Երևան, Կիևյան 2
Մալաթիա	ՀՀ, ք. Երևան, Անդրանիկի 134/8
Նոր-Նորք	ՀՀ, ք. Երևան, Գայի պողոտա 14/9
Գյումրի	ՀՀ, ք. Գյումրի, Ռուսթավելի 63/1
Կոտայք	ՀՀ, ք. Աբովյան, Օգոստոսի 23 1/2
Վանաձոր	ՀՀ, ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչի 34


2.1.5. Բանկի կառավարման կազմակերպական կառուցվածքը

Բանկի գործող կառավարման կազմակերպական կառուցվածքը հետևյալն է.

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
Գործում է 2022թ. հունվարի 1-ից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ 17.12.2021թ.
Խորհրդի նիստի թիվ 25 որոշմամբ

Վ. Գևորկյան



2.1.6. Բանկի համառոտ բիզնես նկարագիրը

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա մատուցում է ունիվերսալ բանկային ծառայություններ ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ կորպորատիվ հաճախորդներին:

Բանկի հիմնական գործունեությունն է. ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը:

Բանկը հաճախորդների սպասարկումն իրականացնում է Գլխամասային գրասենյակի և 13 մասնաճյուղերի, ինչպես նաև հեռահար սպասարկման՝ EvocaOnline համակարգի և EvocaTouch բջջային հավելվածի միջոցով:

Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառությունն ու օրեցօր զարգացող տեմպերը ամբողջ աշխարհում, քայլելով ժամանակի պահանջներին համահունչ և լինելով նորարար բանկ՝ հաճախորդներին բանկային ծառայությունների մատուցումը պարզ, արագ և հարմարավետ դարձնելու նպատակով Բանկն աշխատում է mobile-first ձևաչափով:

Բանկը հանդիսանում է SWIFT միջազգային վճարային համակարգի, մի շարք միջազգային դրամական փոխանցումների համակարգերի, Visa միջազգային վճարային համակարգի անդամ, ArCa վճարային համակարգի լիիրավ անդամ և բաժնետեր, MasterCard միջազգային վճարային համակարգի աֆիլացված անդամ, Հայաստանի Ֆոնդային Բորսայի և Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի, Հայաստանի Բանկերի Միության անդամ:
2021թ., հայաստանյան ֆինանսական շուկայում թվային և նորարարական լուծումների ներդրման և շուկայի զարգամանը խթանելու նպատակով, Բանկը սկսել է անդամակցել «ՖԻՆԱՐՄ» Ֆինանսական Շուկայի Մասնակիցների Ասոցիացիային, գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսական միջոցների հասանելիությունը ընդլայնելու նպատակով սկսել է համագործակցել Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի՝ IFC-ի հետ, իսկ, Բանկի հաճախորդներին մասնագիտացված լիզինգային ֆինանսավորման համար, համագործակցության պայմանագիր կնքել «Արմենիան Լիզինգ Քամփնի»-ի հետ:
Բանկը համագործակցում է նաև Եվրոպական Ներդրումային Բանկի, Գերմանահայկական Հիմնադրամի, Symbiotics S.A. շվեյցարական ներդրումային ընկերության հետ:
Բանկի գործունեությունը կարգավորվում և վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից:

2.1.7. Բանկի տեսլականը, առաքելությունը, արժեքներն ու սկզբունքները

Բանկի տեսլականը. Լինել ամենանորարար և առաջադեմ բանկային ծառայություններ մատուցող ֆինանսական հաստատությունը Հայաստանում, որի բոլոր ծառայություններից հնարավոր կլինի օգտվել առանց բանկ այցելելու:

Բանկի առաքելությունը. Նորագույն տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ մատուցել ֆինանսական ծառայությունները պարզ, արագ, և հարմարավետ եղանակով՝ գործելով mobile-first ձևաչափով:

Բանկի արժեքներն ու սկզբունքները.

Արժեքներ	Սկզբունքներ
Ազնվություն	Մենք ազնիվ ենք գործում բոլոր հարաբերություններում:
Նորարարություն	Մենք շարունակաբար ներդնում և կիրառում ենք նորարարություններ՝ առաջարկելով հաճախորդներին նորագույն տեխնոլոգիաների լավագույն լուծումները:
Հուսալիություն	Մենք կայուն ենք և հուսալի թե՛ հաճախորդների, և թե՛ գործընկերների համար:
Թափանցիկություն	Մենք բաց ենք և թափանցիկ հանրության առջև, միաժամանակ փակ՝ հաճախորդի բանկային և առևտրային գաղտնիքի պահպանման հարցում:
Հաճախորդների վստահություն	Հաճախորդները մեր գործունեության կենտրոնում են. մենք գնահատում և ամուր ենք պահում հաճախորդների վստահությունը:
Հարմարավետություն	Մենք ձգտում ենք բարելավել հաճախորդների կենսակերպը՝ դարձնելով այն առավել հարմարավետ
Գործարար հեղինակություն	Բարի համբավը մեր ամենաթանկ և անփոխարինելի ակտիվն է:
Թիմային ոգի	Մենք համախմբել ենք լավագույն թիմը՝ մեր հաճախորդներին լավագույն սպասարկում ապահովելու համար:

2.1.8. Բանկի ակտիվների համարժեքությունը, որակը և իրացվելիությունը.

Ակտիվների համարժեքություն

2022թ. արդյունքներով Բանկի զուտ շահույթը կազմել է 25.724 մլրդ. ՀՀ դրամ, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունն կապիտալի միջին մեծությանը)՝ 54.04%: Լևերիջի գործակիցը (ընդհանուր կապիտալի միջին մեծության հարաբերակցությունն

ընդհանուր ակտիվների միջին մեծությանը) կազմել է 16.5%, իսկ կապիտալի համարժեքությունը (նորմատիվային կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը) 25.93%:

Ակտիվների որակ

2022թ. վերջի դրությամբ Բանկի համախառն վարկային պորտֆելը կազմել է 164.329 մլրդ ՀՀ դրամ, իսկ չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում՝ 2.82% (փուլ 3-ում գտնվող վարկեր): Բանկի եկամուտ գեներացնող ակտիվները կազմում են ընդհանուր ակտիվների 88.3%:

Ակտիվների իրացվելիություն

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: 2022թ. դեկտեմբերին Բանկի ընդհանուր իրացվելիության նորմատիվը կազմել է 42.4%, ինչը գերազանցում է ԿԲ պահանջվող սահմանաչափը 27.4 տոկոսային կետով:

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ-ի սահմանած թույլատրելի մեծությունը	Փաստացի մեծություն 2022	Փաստացի մեծություն 2021	Փաստացի մեծություն 2020	Փաստացի մեծություն 2019
$Ն_2^{1*}$	15%	42.40%	31.29%	26.00%	21.85%
$Ն_2^{2**}$	60%	143.94%	161.04%	152.21%	142.64%
$Ն_2^{3***}$	100%	445.60%	199.20%		
$Ն_2^{4****}$	100%	173.00%	141.00%		

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն:

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն:

*** Բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցություն:

**** Հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցություն:

2.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ներդրողը պետք է գիտակցի, որ որոշակի ռիսկային գործոնների ի հայտ գալու դեպքում (որոնք բացասական ազդեցություն կունենան Բանկի ֆինանսական ցուցանիշների, համբավի, մրցակցային դիրքի վրա) դրանք ուղղակիորեն կանդրադառնան նաև պարտատոմսերի գնի և

իրացվելիության վրա: Ստորև ներկայացված են պարտատոմսերում ներդրումների հետ կապված թողարկողին և պարտատոմսերին առնչվող հնարավոր ռիսկերի հիմնական տեսակները.

2.2.1. Թողարկողին առնչվող ռիսկեր

Բանկն, ինչպես և ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ, որոնցից հատկապես կարևոր են ռիսկերի հետևյալ տեսակները.

- **Վարկային ռիսկ:** Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չէ կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ:
- **Շուկայական ռիսկ:** Շուկայական ռիսկը առաջանում է շուկայում տոկոսադրույքների, գների, փոխարժեքների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում: Շուկայական ռիսկն իրենից ներկայացնում է արտարժութի, տոկոսադրույքի, գների փոփոխության հետ կապված ռիսկերի հանրագումար: Բանկը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկերի կառավարմանը, որոնց անբարենպաստ փոփոխությունը կարող է բացասական հետևանք ունենալ բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա և իրական վտանգ հանդիսանալ բանկային գործունեության ընթացքում:
- **Իրացվելիության ռիսկ:** Ռիսկի այս տեսակը կապված է ֆինանսական պարտավորությունները՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում, ժամանակին մարելու կարողության հետ: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:
- **Տնտեսական ռիսկեր:** ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար անդրադառնալ բանկային համակարգի գործունեության վրա:
- **Օրենսդրական և նորմատիվային ռիսկեր:** Լինելով ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկը՝ իրականացվող օրենսդրական և նորմատիվային փոփոխություններըը հնարովոր է թե դրական և թե բացասական ազդեցություն ունենան բանկերի գործունեության և ֆինանսական արդյունքների վրա:
- **Գործառնական ռիսկեր:** Բանկի գործունեության հետևանքով առաջացող հնարավոր կորուստների ռիսկն է:

Բոլոր ռիսկային գործոնները անընդմեջ գտնվում են Բանկի Ռիսկերի կառավարման վարչությունը ուշադրության կենտրոնում և մշտապես մշակվում և ներդրվում են այդ հնարավոր ռիսկերի՝ ժամանակին բացահայտման, կառավարման, սահմանափակման և նվազեցման արդյունավետ մեխանիզմեր:

2.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկեր

- **Տոկոսադրույքի ռիսկ:** Շուկայում տոկոսադրույքների տատանումները կարող են էական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գների վրա: Մասնավորապես,

տոկոսադրույքների բարձրացումը ենթադրում է պարտատոմսի գնի նվազում, ինչը ենթադրում է, որ ներդրողը այդ պարտատոմսերի վաճառքի դեպքում կարող է չստանալ նախատեսվող շահույթը կամ նույնիսկ՝ կրել վնասներ:
Սակայն ներդրողը չի առնչվի նման ռիսկի հետ, եթե չի նախատեսում պարտատոմսերը վաճառել մինչև դրանց մարումը:

- **Իրացվելիության ռիսկ:** Չնայած նրան, որ Թողարկողը մշտապես իրականացնում է մի շարք միջոցառումներ իր կողմից թողարկված պարտատոմսերի իրացվելիությունը բարձրացնելու համար, այնուամենայնիվ չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը ներդրողները կարող են ցանկացած պահի իրացնել կամ ձեռք բերել իրենց համար շահավետ գներով:
- **Վարկային/դեֆոլտի ռիսկ:** Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացման կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:
- **Արտարժույթային ռիսկ:** Երբ թողարկվող պարտատոմսերը արտարժութային են, ներդրողը կարող է կորուստներ կրել փոխարժեքի տատանումներից: Սույն ռիսկը հատկապես առնչվում է այն ներդրողներին, որոնք պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացված գումարները փոխարկելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

2.3. Բանկի զարգացման միտումները

Բանկի հեռանկարային զարգացումը մշտապես գտնվել և շարունակում է գտնվել Բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Այդ նպատակով Բանկում մշտապես հետևում են շուկայում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին և զարգացումներին՝ ձգտելով մշտապես համապատասխանել շուկայի նոր պահանջներին և միտումներին:

Այդ մասին են վկայում Բանկում իրականացված հիմնարար փոփոխությունները, որոնք ակնհայտ կերպով դրսևորվեցին վերջին տարիների ընթացքում:

Բանկը ներկայացավ ոչ միայն նոր բրենդով, այլև՝ նոր գաղափարախոսությամբ, նոր մշակույթով և նոր տեսլականով:

Գործելով տեղեկատվական տեխնոլոգիաների օր օրի զարգացող ժամանակաշրջանում, կարևորելով թվային տեխնոլոգիաների ընձեռած լայն հնարավորությունները և ունենալով երկար տարիների փորձ բանկային համակարգում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա Բանկը ներդրեց հաճախորդների սպասարկման նոր մշակույթը: Հաճախորդների սպասարկումը պարզ, արագ և հարմարավետ դառնձնելու նպատակով, Բանկը սահուն անցում կատարեց mobile-first ֆորմատի:

Նոր ձևաչափում Բանկի գործունեության հաջողությունների մասին է վկայում այն փաստը, որ 6-րդ տարին անընդմեջ Global Finance հեղինակավոր ամսագրի կողմից Բանկը ճանաչվում է «Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում», ինչպես նաև՝ Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում (2022թ.) իսկ Global Banking & Finance Review ամսագրի կողմից 4-րդ տարին անընդմեջ՝ «Լավագույն թվային բանկը Հայաստանում: Բանկը նաև Visa International-ի կողմից ստացել է մրցանակ՝ Strong Visa Premium Issuance-ի համար:

Չնայած նոր ձևաչափում արդեն իսկ գրանցած հաջողություններին՝ ունենալով իր առջև դրված բարձր նշաձողեր՝ Բանկը շարունակում և շարունակելու է պահպանել և ավելի ամրապնդել իր դիրքերը որպես լավագույն թվային բանկ՝ մշտապես իր ուշադրության կենտրոնում պահելով թվային, տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բլոկների զարգացումը:

Ինչ վերաբերում է արժեթղթերի շուկայում Բանկի ունեցած դիրքին և առաջիկա զարգացմանը՝ Բանկը մշտապես եղել է և շարունակում է մնալ արժեթղթերի շուկայի ակտիվ մասնակիցներից մեկը:

Դեռևս 2008թ.-ին, առաջին անգամ Հայաստանում, Բանկը թողարկել և Շվեյցարական առաջատար բանկերից մեկին է վաճառել սեփական ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր:
2021թ. մարտ ամսվա ընթացքում, Բանկը՝ պայմանավորված ներդրողների բարձր հետաքրքրվածությամբ, չորս թողարկմամբ տեղաբաշխել է 10 մլն ԱՄՆ դոլար և 1 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով պարտատոմսեր տեղաբաշխման առաջին իսկ օրը՝ հաշված ժամերի ընթացքում: Լինելով նորարար և միակ mobile-first ձևաչափով գործող Բանկը Հայաստանում՝ առաջին անգամ հայաստանյան ֆինանսական համակարգում պարտատոմսերը հնարավոր է եղել գնել նաև online տարբերակով՝ Բանկի EvocaTOUCH հավելվածի միջոցով: 2022թ. մարտ ամսին Բանկը պարտատոմսերի ևս 2 թողարկում իրականացրեց, որի արդյունքում տեղաբաշխվեցին 10 մլն ԱՄՆ դոլար և 2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով պարտատոմսեր:

Ինչ վերաբերում է ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում Բանկի գործունեությանը, ՀՀ Ֆինանսների Նախարարության կողմից 2016թ. 4-րդ եռամսյակից ի վեր հրապարակվող շուկայի մասնակիցների վարքագծի գնահատման ցուցանիշների համաձայն, Բանկը եղել և շարունակում է մնալ ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում Գործակալ չհանդիսացող մասնակիցներից ամենաբարձր ակտիվություն, հետևաբար նաև Գործակալ դառնալու առաջնահերթություն ունեցող մասնակիցներից մեկը:

2.4. Համառոտ տեղեկություններ Բանկի աուդիտն իրականացնող անձանց մասին

2020-2021թթ. Բանկի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից: Բանկի 2022թ ֆինանսական գործունեության աուդիտը ևս իրականացնելու է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ. Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի անդամ: ՀՀ-ում շուրջ 20 տարի զբաղվում է աուդիտորական և խորհրդատվական գործունեությամբ:

Հասցե. ՀՀ, ք. Երևան, 0015, Գրիգոր Լուսավորիչ 9
Հեռ. +374 (10) 500 964/961
Վեբ-հասցե. www.grantthornton.am

2.5. Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը

Համաձայն Բանկի կանոնադրության, Բանկի կառավարման մարմիններն են.

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը, որը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է,
- Բանկի Խորհուրդը, որն ընտրվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- Բանկի Վարչությունը,
- Բանկի Վարչության նախագահը:

2.5.1. Բանկի բաժնետերերը

Բանկի **ուղղակի նշանակալից մասնակիցը** Մարետա Ռուդիկի Գևորկյանն է, ում պատկանում են Բանկի հասարակ անվանական բաժնետոմսերի 100%-ը, ինչպես նաև Բանկի՝ 2016թ. թողարկման արտոնյալ բաժնետոմսերի 100%-ը, 2020թ. թողարկման արտոնյալ բաժնետոմսերի 99.95%-ը և 2022թ. թողարկման արտոնյալ բաժնետոմսերի 100%-ը:

2.5.2. Բանկի Խորհուրդը

Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում:

Խորհրդի անդամ կարող է լինել ՀՀ քաղաքացի կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող գործունակ անձը, որը համապատասխանում է ՀՀ գործող օրենքների և ՀՀ ԿԲ իրավական ակտերի չափանիշներին: Խորհրդի անդամները ընտրվում են բաժնետերերի տարեկան ժողովի կամ խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից:

Սույն ազդագրի կազմման պահին Բանկի Խորհուրդը բաղկացած է 4 անդամից և գտնվում է ձևավորման փուլում: Մոտ ապագայում Խորհրդի կազմը կհամալրվի ևս մեկ անդամով:

Պաշտոն	Անուն, Ազգանուն	Փորձառություն
Խորհրդի նախագահ	Խոսե Մարիա Մորենո Դե Բարրեդա	31 տարի

Խորհրդի անդամ	Գեղամ Գևորգյան	42 տարի
Խորհրդի անդամ	Վարուժան Ավետիքյան	15 տարի
Խորհրդի անդամ	Մարինա Փսոմաս	29 տարի

2.5.3. Բանկի Բանկի Վարչությունը և Վարչության նախագահը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը՝ Բանկի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում, իրականացնում են Բանկի Վարչությունը և Բանկի Վարչության Նախագահը:

Բանկի Վարչության անդամները նշանակվում են խորհրդի կողմից: Բանկի վարչության անդամների հետ աշխատանքային պայմանագիր կնքում է Բանկի վարչության նախագահը:

Բանկի Վարչության նախագահը նշանակվում է խորհրդի կողմից: Բանկի վարչության նախագահի հետ աշխատանքային պայմանագիր կնքում է Բանկի խորհրդի նախագահը:

Բանկի Վարչությունը բաղկացած է Վարչության նախագահից և Վարչության 9 անդամներից:

Պաշտոն	Անուն, Ազգանուն	Փորձառություն
Վարչության նախագահ	Կարեն Եղիազարյան	23 տարի
Վարչության նախագահի առաջին տեղակալ	Արմեն Հակոբյան	31 տարի
Վարչության նախագահի տեղակալ	Տաթևիկ Խաչատրյան	12 տարի
Վարչության նախագահի տեղակալ	Հայկ Պետրոսյան	32 տարի
Վարչության նախագահի տեղակալ	Լիլիթ Գաբոյան	15 տարի
Գլխավոր հաշվապահ	Էմմա Ջանինյան	12 տարի
Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	Սմբատ Մարտիրոսյան	13 տարի
Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ	Տաթևիկ Ջանոյան	16 տարի
Ծրագրավորման և գործառնական համակարգերի վարչության պետ	Միեր Սահակյան	20 տարի

2022թ. 4-րդ եռամսյակի դրությամբ Բանկի աշխատակիցների ընդհանուր թվաքանակը կազմել է 438 աշխատակից:

2.6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային, առանց հետգնման հնարավորության, ոչ փոխարկելի, անբաժանելի պարտատոմսեր են:

Բնութագրիչի անվանումը	Հիմնական տվյալները		
Արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
Թողարկման ընդհանուր ծավալը	5,000,000,000 (հինգ միլիարդ)	20,000,000 (քսան միլիոն)	10,000,000 (տաս միլիոն)
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տասը հազար)	100 (մեկ հարյուր)	100 (մեկ հարյուր)
Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը	500,000 հատ	200,000 հատ	100,000 հատ
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	եռամսյակային		
Տարեկան արժեկտրոնի մեծությունը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ		
Շրջանառության ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ		
Մարման օրը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ		
Շրջանառության ձևը	Ազատ շրջանառության իրավունքով		
Պարտատոմսերի ապահովվածությունը	Առանց ապահովվածության		
Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ		

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են՝ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար ԱՄՆ դոլարով, իսկ եվրոյով թողարկված պարտատոմսերի համար եվրոյով:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ինչպես նաև Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները, վաճառքի պայմանները ենթակա են հաստատման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.7. Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 3 (երեք) օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում:

2.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանում (հազ. ՀՀ դրամ)	2022 (աուդիտ չանցած)	2021 (աուդիտ անցած)	2020 (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	25,724,399	1,128,026	761,954
Սեփական կապիտալի միջին մեծություն	47,586,562	33,879,603	32,428,797
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)*	54.06%	3.33%	2.35%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	25,724,399	1,128,026	761,954
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	288,903,691	217,536,414	183,283,168
Ակտիվների շահութաբերություն (ROA)*	8.90%	0.52%	0.42%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	25,724,399	1,128,026	761,954
Գործառնական եկամուտ	41,379,125	8,255,229	8,971,810
Զուտ շահույթի մարժա (NPM)	62.17%	13.66%	8.49%
Գործառնական եկամուտ	41,379,125	8,255,229	8,971,810
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	288,903,691	217,536,414	183,283,168
Ակտիվների օգտագործման գործակից (AU)*	14.32%	3.79%	4.90%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	288,903,691	217,536,414	183,283,168
Սեփական կապիտալի միջին մեծություն	47,586,562	33,879,603	32,428,797
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.071	6.421	5.652
Զուտ տոկոսային եկամուտ	9,594,101	6,466,935	7,651,582
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	212,133,197	165,949,076	144,510,456
Զուտ տոկոսային մարժա (NIM)*	4.52%	3.90%	5.29%
Տոկոսային եկամուտ	20,957,238	15,796,564	15,052,441

Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	212,133,197	165,949,076	144,510,456
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն*	9.88%	9.52%	10.42%
Տոկոսային ծախսեր	11,363,137	9,329,629	7,400,859
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	234,931,132	182,053,170	148,445,694
Տոկոսային ծախս առաջացնող պարտավորությունների ծախսատարություն*	4.84%	5.12%	4.99%
Սպրեդ*	5.04%	4.39%	5.43%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի և արտոնյալ բաժնետոմսերի գծով կուտակված շահաբաժինների նվազեցումից հետո	25,724,399	557,026	280,111
Հասարակ բաժնետոմսերի միջին կշռված քանակ	150,000	150,000	146,400
Զուտ շահույթ մեկ հասարակ բաժնետոմսի հաշվով (EPS)*	171.50	3.71	1.91

*Աղյուսակում ներկայացված միջին մեծությունները հաշվարկված են աուդիտ չանցած ցուցանիշների վրա

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Ռիսկային գործոններ

Ներդրողը պետք է գիտակցի, որ որոշակի ռիսկային գործոնների ի հայտ գալու դեպքում (որոնք բացասական ազդեցություն կունենան Բանկի ֆինանսական ցուցանիշների, համբավի, մրցակցային դիրքի վրա) դրանք ուղղակիորեն կանդրադառնան նաև պարտատոմսերի գնի և իրացվելիության վրա:

Իրացվելիության ռիսկը. Ի տարբերություն պետական պարտատոմսերի, որոնց համար առկա է համեմատաբար իրացվելի շուկա, կորպորատիվ պարտատոմսերի պարագայում, միշտ առկա է ռիսկ, որ ներդրողն ի վիճակի չի լինի վաճառել իր կորպորատիվ պարտատոմսերը հնարավորինս արագ և շահավետ գնով, քանի որ ելնելով տնտեսության վիճակից՝ շուկան կարող է լինել փոքր՝ կազմված միայն մի քանի վաճառողներից և գնորդներից: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով Բանկը նախատեսում է ապահովել թողարկվող պարտատոմսերի համար շուկա ստեղծողի գործառույթների իրականացում: Այդ դեպքում ներդրողը ցանկացած պահին կկարողանա վաճառել իր պարտատոմսերը, սակայն դա չի երաշխավորում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից շահավետ գնով վաճառք:

Արտարժութային ռիսկ. Երբ թողարկվող պարտատոմսերը արտարժութային են, ներդրողը կարող է կորուստներ կրել կապված փոխարժեքների տատանումների հետ: Սույն ռիսկը հատկապես առնչվում է այն ներդրողներին, որոնք պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացված գումարները փոխարկելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկ. Տոկոսադրույքները և պարտատոմսերի գները իրար հետ ունեն հակադարձ կախվածություն, այն է՝ երբ շուկայում տոկոսադրույքները նվազում են պարտատոմսերի գները շուկայում աճման միտում ունեն, և հակառակը՝ երբ տոկոսադրույքներն աճում են, պարտատոմսերի գները նվազման միտում ունեն: Այդ իսկ պատճառով տոկոսադրույքների փոփոխությունները կարող են հանգեցնել թե՛ թողարկողների և թե՛ ներդրողների կողմից պարտատոմսերի համապատասխանաբար թողարկման և ներդրումների իրականացման մասով քաղաքականության վերանայման և փոփոխման:

Վերաներդրման ռիսկ. Հավանականությունը, որ թողարկողի պարտատոմսերում կատարված սկզբնական ներդրումից ստացվող եկամուտներն (արժեկտրոնային վճարումներ կամ պարտատոմսերի մարման ժամանակ ստացվող գումարներ) այլևս հնարավոր չի լինի առնվազն նույն եկամտաբերությամբ ներդնել: Նշյալ վերաներդրման ռիսկը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ ներդրողների երկարաժամկետ ներդրումների վրա, սակայն էական գործոն չի կարող հանդիսանալ կարճաժամկետ ներդրումների համար:

Վարկային/դեֆոլտի ռիսկ. Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման,

արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Գնաճային ռիսկ. Երբ ներդրողը գնում է պարտատոմս, ի սկզբանկե ակնկալում է որոշակի եկամատաբերություն մինչև պարտատոմսի մարման ժամկետը կամ մինչև պարտատոմսն օտարելը, որը կարող է լինել ֆիքսված կամ փոփոխուն: Սակայն գնաճի բարձր մակարդակի դեպքում արաջարկվող պարտատոմսերի իրական եկամատաբերությունը կարող է դառնալ զրոյական կամ նույնիսկ բացասական:

3.2 Հիմնական տեղեկատվություն

Բանկի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման հիմնական նպատակը միջոցների ներգրավումն է, որոնք ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

3.2.1 Թողարկման վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ներկայացվում են ՀՀ ԿԲ և հրապարակվում՝ տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

Թողարկողը պարտավորվում է թողարկման վերջնական պայմանները հրապարակել իր ինտերնետային կայքում:

3.3 Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

3.3.1 Պարտատոմսերի տեսակը և դասը

Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային, առանց հետգնման հնարավորության, ոչ փոխարկելի, անբաժանելի պարտատոմսեր են: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

Թողարկվող պարտատոմսերը **ապահովված չեն**:

3.3.2 Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ օրենսդրության համաձայն, իսկ դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3.3 Պարտատոմսերի ձևը

Թողարկվող պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը վարելու է «Հայաստանի Կենտրոնական

Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ, հեռ.՝ +374 60 61 55 55, ինտերնետային կայք՝ www.cda.am)՝ ըստ համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

3.3.4 Պարտատոմսերի անվանական արժեքը և քանակը

Սույն ծրագրային ազդագրի շրջանակներում Բանկը նախատեսում է տեղաբաշխել 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ, 20,000,000 (քսան միլիոն) ԱՄՆ դոլար և 10,000,000 (տասը միլիոն) Եվրո անվանական ծավալով պարտատոմսեր:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ է, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, իսկ Եվրոյով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 100 (մեկ հարյուր) Եվրո: Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում կազմում է 500,000 (հինգ հարյուր հազար) հատ, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 200,000 (երկու հարյուր հազար) հատ, Եվրոյով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 100,000 (մեկ հարյուր հազար) հատ:

3.3.5 Թողարկման արժույթը

Թողարկման արժույթը ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար և Եվրո:

3.3.6 Տեղեկատվություն պարտատոմսերի դասակարգման վերաբերյալ

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ.

- *առաջին*՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,
- *երկրորդ*՝ այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,
- *երրորդ*՝ ՀՀ և օտարերկյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ մինչև 7 միլիոն դրամին համարժեք չափով: Ընդ որում՝ Բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջն արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում՝ տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով

(պահանջն արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող մասը՝ չորրորդ հերթով:

• *չորրորդ*՝ բանկի այլ պարտավորությունները, ներառյալ՝Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,

• *հինգերորդ*՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները,

• *վեցերորդ*՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները,

• *յոթերորդ*՝ բանկի մասնակիցների պահանջները:

Յուրաքանչյուր հերթի պարտատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Բանկի սնանկ ճանաչվելու դեպքում պարտատերերին վճարումները կատարվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են չորրորդ հերթով՝ բացառությամբ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի իմաստով ավանդ հանդիսացող ներդրումներից, որոնք հատուցվում են երրորդ հերթով: Ընդ որում, յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով Բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից) ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով.

ա) եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն ՀՀ դրամ է.

բ) եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն ՀՀ դրամ է,

գ) եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն ՀՀ դրամից ավել է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն ՀՀ դրամի չափով,

դ) եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն ՀՀ դրամից,

ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:
Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս՝ առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները:
Ավանդների հատուցումը երաշխավորում է Ավանդների հատուցումն երաշխավորող հիմնադրամը (ՀՀ ք. Երևան, 0010 Մ. Խորոնացի 15, Էլիտ պլազա բիզնես կենտրոն, հեռ.՝ +374 10 58 35 14, ինտերնետային կայք՝ www.adgf.am):
Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ):
Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները:

Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր է, ապա երաշխավորվում է նրա առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում իր մասնաբաժնի հանրագումարը՝ սույն օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե ներդրողն անվճարունակ բանկի նկատմամբ ունի խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության հաշվարկված դրական տարբերության հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով և չափով: Խնդրահարույց պարտավորությունների տեսակները, հատուցման ենթակա ավանդի հաշվարկման կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Երկու կամ ավելի ներդրողների համատեղ բանկային ավանդը համարվում է որպես յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ներդրողի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ներդրողների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդը ներդրողների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկի կամ մի քանի բանկերի՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացման պայմանագիրը օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու և գրանցվելու պահից միացող յուրաքանչյուր բանկում առկա միևնույն ներդրողին պատկանող ժամկետային

ավանդները երաշխավորվում են որպես առանձին բանկային ավանդներ մինչև ավանդի պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ներդրողի բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 (հազար) հայկական դրամից:

3.3.7 Պարտատոմսերից բխող իրավունքները

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

1. ինքնուրույնաբար տնօրինել, տիրապետել և օգտագործել իր սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը,
2. Պարտատոմսերով իրականացնել ցանկացած գործառույթ, որը բխում է սեփականության իրավունքից,
3. Թողարկման օրվանից հաշված եռամսյակային պարբերությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
4. Պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
5. Բանկի կողմից պարտատոմսերի մարման գումարը և/կամ արժեկտրոնի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարմանն ուղղված օրենսդրությամբ թույլատրված գործողություններ,
6. Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը,
7. «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք,
8. Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Միաժամանակ, պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենքով

նախատեսված այլ պարտականություններ:

3.3.8 Արժեկտրոնի տոկոսադրույքը, վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց վճարվելու է արժեկտրոնային տոկոսադրույք, որի մեծությունը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ: Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են՝ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար՝ ԱՄՆ դոլարով, իսկ Եվրոյով թողարկված պարտատոմսերի համար՝ ՀՀ դրամով:

Արժեկտրոնները վճարվելու են եռամսյակային պարբերությամբ, թողարկման օրվան հաջորդող յուրաքանչյուր եռամսյակի համապատասխան օրը: Եթե արժեկտրոնի վճարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնը վճարվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամտի գումարը վճարվելու է հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ավարտի դրությամբ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր)՝ վերջիններիս հաշվեհամարներին համապատասխան դրամային փոխանցումների միջոցով: ՀՀ տարածքից դուրս գործող բանկերի հաշվեհամարներին փոխանցումների պարագայում միջազգային փոխանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է տվյալ ներդրողը:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարները հաշվարկվելու են տասնորդական ճշտությամբ՝ ըստ կլորացման թվաբանական կանոնների:

Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ սխալ լինելու դեպքում՝ գումարը կմուտքագրվի Բանկի համապատասխան տարանցիկ հաշվին՝ մինչև պարտատոմսի սեփականատիրոջ/անվանատիրոջ կողմից համապատասխան հանձնարարականի ստացումը:

Արժեկտրոնի կուտակումը իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$\boldsymbol{AI = FV * \frac{C}{k} * \frac{DCS}{DCC}}$$

AI - կուտակված արժեկտրոնային եկամուտն է

FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է

C -տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով

k - մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը

Օրերի հաշվարկման պայմանականությունը թողարկվող պարտատոմսերի համար սահմանվում է **փաստացի/փաստացի** (Actual/Actual)-ը, ընդ որում

DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/կուտակման սկզբի ամսաթվից մինչև գործարքի կատարման օրը եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում **(D2M2Y2 - D1M1Y1)**

DCC - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրվա և գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան օրերի հաշվարկման պայմանականության դեպքում **(D3M3Y3 - D1M1Y1)**:

D1M1Y1 - գործարքի օրվան նախորդող արժեկտրոնի վճարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է

D2M2Y2 - գործարքի կատարման ամսաթիվն է

D3M3Y3 - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթիվն է:

3.3.9 Պարտատոմսերի մարման ժամկետը

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերը մարվելու են անվանական արժեքով: ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով պարտատոմսերի մարումն իրականացվելու է համապատասխանաբար ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով, անկանխիկ եղանակով:

Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի մարման և վճարման ամսաթվերը նույնն են:

Պարտատոմսերի մարումն իրականացվում է մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ավարտի դրությամբ պարտատմոսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձանց բանկային հաշիվներին համապատասխան դրամային փոխանցումների միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ սխալ լինելու դեպքում գումարը կմուտքագրվի Բանկի համապատասխան տարանցիկ հաշվին՝ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականի ստացումը:

Թողարկողի կողմից պարտատոմսերի մասնակի մարումներ կամ վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

3.3.10 Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի եկամտաբերությունը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ՝ սույն Ազդագրի **3.4.3.1** կետում բերված բանաձևի համաձայն:

3.3.11 Թողարման վերաբերյալ տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ թիվ 02 որոշումն ընդունվել է 2023 թվականի փետրվարի 7-ին, Բանկի Խորհրդի կողմից:
Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանների վերաբերյալ որոշումների կայացումը վերապահվել է Բանկի Վարչությանը:

3.3.12 Շրջանառության սահմանափակումները

ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման մասին Բանկի խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ չեն սահմանվում:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ վաճառել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և/կամ առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով: Միևնույն ժամանակ ներդրողները պետք է ի նկատի ունենան, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից դուրս (ֆոնդային բորսա) վաճառել կարգավորվող շուկայում ցուցակված և/կամ առևտրին թույլատրված արժեթղթերը:

3.3.13 Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկումը

Բանկի պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց դեպքում) և եկամտային հարկ (ֆիզիկական անձանց դեպքում)

Պարտատոմսերից կարելի է եկամուտ ստանալ հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը)
2. Կապիտալի հավելաճ (ձեռքբերման պահից հետո պարտատոմսի գնի աճը, հաշվարկվում է որպես մինչև մարման օրը պարտատոմսի վաճառքի և գնման գնի դրական տարբերություն):

Շահութահարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Ներկա պահին շահութահարկի դրույքը 18 տոկոս է:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի համար կազմում է 10 տոկոս: Բանկի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Բանկը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ. մարտի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված և/կամ առևտրին թույլատրված պարտատոմսերից սատացվող տոկոսային եկամտի, ինչպես նաև տվյալ պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առեւտրին թույլատրվել) են մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

Եկամտային հարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ռեզիդենտությունը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ: Հարկվող եկամուտը հաշվարկվում է որպես ֆիզիկական անձի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերություն: Ֆիզիկական անձանց պարագայում հարկման ենթակա է միայն պարտատոմսերից ստացված տոկոսային եկամուտը: Ներկա պահին եկամտահարկի դրույքաչափը 10 տոկոս է: Բանկի պարտատոմսերում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Բանկը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ. մարտի 1-ից ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված և/կամ առևտրին թույլատրված պարտատոմսերից սատացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի կողմից թողարկված այն պարտատոմսերը, որոնց մարման ժամկետը պակաս է 2 տարուց: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առեւտրին թույլատրվել) են մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

3.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

3.4.1 Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են հրապարակային առաջարկի միջոցով, իսկ տեղաբաշխումը սկսելու օրը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

3.4.1.1 Առաջարկի ընդհանուր ծավալը

Բանկի կողմից թողարկվող անվանական պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է.

5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ, քանակը՝ 500,000 (հինգ հարյուր հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

20,000,000 (քսան միլիոն) ԱՄՆ դոլար, քանակը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով:

10,000,000 (տասը միլիոն) Եվրո, քանակը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) Եվրո անվանական արժեքով:

Տեղաբաշխումը կարող է իրականացվել մի քանի տրանշերով: Թողարման և տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի ծավալը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից՝ Պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

3.4.1.2 Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխման սկզբի և ավարտի օրերը, ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից՝ Պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ: Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման սկզբի ամսաթվերը համընկնում են: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են հրապարակային առաջարկի միջոցով:

Հրապարակային առաջարկի սկզբի օրվանից անվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկն այդ մասին տեղեկատվությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Վերջինս տվյալ տեղեկությունը կարող է հրապարակել, տարածել նաև այլ միջոցներով:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել միայն անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):
Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ծրագրային ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման

պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 5 աշխատանքային օրը՝ Ծրագրային ազդագրի լրացման հրապարակումից հետո:
Արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են Բանկի կողմից՝ հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:
ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում Ներդրողների գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով՝ Հայտերում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Տեղաբաշխման ընթացքում Հայտերի բացակայությունը և պարտատոմսերով գործարքների չկատարումը պարտատոմսերի տեղաբաշխումը չեղյալ ճանաչելու հիմք չեն:

3.4.1.3 Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի հաշվի օպերատորներից որևէ մեկում ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ:

Պոտենցյալ ներդրողները Պարտատոմսերի Ծրագրային ազդագրին կարող են ծանոթանալ Բանկի գործունեության վայրից՝ ՀՀ ք. Երևան, 0010, Հանրապետության 44/2, ինչպես նաև Բանկի ինտերնետային կայքից՝ www.evoca.am:

Պարտատոմսերի ձեռք բերման համար ներդրողները պետք է պատշաճ կերպով լրացնեն և Բանկ ներկայացնեն սույն Ազդագրի Հավելված 1-ում (իրավաբանական անձանց համար) կամ Հավելված 2-ում (ֆիզիկական անձանց համար) ներկայացված պարտատոմսերի ձեռքբերման

Հայտը (այսուհետ Հայտ), որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր: Հայտը պարտադիր պետք է պարունակի Ներդրողի բանկային հաշվեհամարի և արժեթղթերի հաշվի վերաբերյալ տեղեկություններ: Հայտերը կարող են ներկայացվել տեղաբաշխման ժամկետի ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում ժամը 09:30-16:30-ն ընկած ժամանակահատվածում:

Պարտատոմսերի փաստացի ձեռքբերումն իրականացվում է Ներդրողի կողմից Հայտում նշված ծավալով Պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցները (որը որոշվում է հետևյալ ձևով՝ Պարտատոմսերի ձեռքբերվող քանակ բազմապատկած գին՝ հաշվարկված սույն Ազդագրի **3.4.3.1** կետում բերված բանաձևով) այդ նպատակով բացված բանկային հաշվին/հաշիվներին մուտքագրելուց հետո:

Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարները թողարկման նպատակով Բանկում բացված հաշվին/հաշիվներին մուտքագրվում են կանխիկ կամ անկանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում Ներդրողը Հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև /եթե տվյալ ներդրողը չի հանդիսանում Բանկի հաճախորդ/ հայտում նշում է այլ բանկում ունեցած համապատասխան արժույթով հաշվի համար: Անկանխիկ եղանակով գումար փոխանցելու դեպքում Ներդրողը Հայտին կից պարտավոր է ներկայացնել նաև ձեռք բերման ենթակա Պարտատոմսերի դիմաց վճարումը հավաստող փաստաթուղթ, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը, եթե տվյալ Ներդրողը Բանկի հաճախորդ չի հանդիսանում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Եթե Ներդրողի կողմից համապատասխան դրամական միջոցները թողարկողման նպատակով Բանկում բացված բանկային հաշվին/հաշիվներին մուտքագրվել են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված կհամարվեն տվյալ աշխատանքային օրը, իսկ եթե համապատասխան գումարները մուտքագրվել են տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված կհամարվեն մուտքագրմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը կորոշվի այդ օրվա հաշվարկով: Ընդ որում, եթե Հայտում նշված Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը թողարկողման նպատակով Բանկում բացված հաշվին/հաշիվներին մուտքագրվում է մաս առ մաս, ապա Հայտի համապատասխան դրամական միջոցների մուտքագրման ժամ կհամարվի դրամական միջոցների վերջին մասի մուտքագրման ժամը:

Թողարկողման նպատակով Բանկում բացված հաշվին/հաշիվներին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Բանկը «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ին է

ներկայացնում պարտատոմսերի փոխանցման հանձնարարական՝ Թողարկողի թողարկման հաշվից ներդրողի արժեթղթերի հաշվին համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման համար:

Տեղաբաշխման ողջ ընթացքում, յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար թողարկողման նպատակով Բանկում բացված բանկային հաշվին/հաշիվներին հավաքագրված ողջ գումարը կարող է ազատ տնօրինվել Բանկի կողմից:

Բանկը մերժում է սույն բաժնով սահմանված կարգից շեղումներով ներկայացված Հայտերի կատարումը:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի Հայտեր:

3.4.1.4 Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման կարգով պայմանավորված հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ Հայտի և/կամ Հայտերի մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ Հայտում նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակը գերազանցում է Հայտը ներկայացնելու պահին առկա տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը:

Միաժամանակ ներկայացված Հայտերի դեպքում, եթե այդ Հայտներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա տվյալ Հայտերը բավարարվում են համամասնորեն՝ ըստ Հայտերում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակում յուրաքանչյուր Հայտով նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակի մասնաբաժնի:

Չբավարարված/մասնակի բավարարված Հայտերի համապատասխան դրամական միջոցները Բանկի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Հայտերում Ներդրողի կողմից նշված բանկային հաշվին/հաշիվներին փոխանցելու միջոցով:

3.4.1.5 Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Տեղաբաշխման ընթացքում ներդրողները պարտատոմսերով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ կարող են ստանալ Բանկից կամ իրենց սպասարկող Հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից:

Պարտատոմսերի ձեռքբերման Հայտի նարկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների Հայտերը համարվում են անվավեր:

Ներդրողը կարող է հետկանչել նախկինում ներկայացված Հայտը համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով՝ եթե տվյալ Հայտը մասնակի կամ ամբողջությամբ չի բավարարվել և տվյալ Հայտի հիման վրա գործարք չի կատարվել:

Հայտի հետկանչման դիմումը բավարարելու արդյունքում Ներդրողին վերադարձման ենթակա գումարը, Հայտում կամ Դիմումի մեջ նշված հաշվեհամարին փոխանցվում կամ կանխիկ տրամադրվում է Դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.4.1.6 Նվազագույն և առավելագույն գումարները

Թողարկման ընթացքում կարող են լինել Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ, եթե նման որոշում կայացվի Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

3.4.1.7 Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը

Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են թողարկման նպատակով Բանկում բացված հաշվեհամարին:
Համապատասխան Հայտերը բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց Հայտերի բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

3.4.1.8 Առաջարկի արդյունքների հրապարակումը

Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը, տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, Թողարկողը պարտավոր է ՀՀ ԿԲ ներկայացնել

հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:

3.4.1.9 Նախապատվության իրավունքը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման Հայտերի և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում Հայտի համաձայն վճարումը Թողարկման նպատակով Բանկում բացված հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

3.4.2 Տեղաբաշխման պլանը

3.4.2.1 Ներդրողների խմբերը

Սույն Ծրագրային ազդագրով ներկայացվող առաջարկն ուղղված է ներդրողների բոլոր խմբերին՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ներառյալ որակավորված և/կամ ինստիտուցիոնալ ներդրողների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի:

3.4.2.2 Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Ներդրողն իր կողմից ներկայացված հայտի բավարարման մասին տեղեկանում է Թողարկողից, մինչև Հայտի ներկայացման աշխատանքային օրվա ավարտը հնարավոր սեղմ ժամկետներում: Ներդրողները արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կամ հաշվետվություն կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող պահառուից կամ Հաշվի օպերատորից: Հայտերի բավարարման մասին ներդրողը տեղեկացվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման Հայտը/Հայտերը:

3.4.3 Առաջարկի գինը:

3.4.3.1 Պարտատոմսերի գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{(1+\frac{y}{100*f})^{i-1+\tau}} + \frac{100}{(1+\frac{y}{100*f})^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,
DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,
f- արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,
N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը
C - տարեկան արժեկտրոնը ***100*** միավոր անվանական արժեքի դիմաց
y - մինչև մարում եկամտաբերություն:

3.4.4 Տեղաբաշխումը

3.4.4.1 Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերի տեղաբաշխման համար նախատեսված չէ երաշխավորված տեղաբաշխում:

3.4.4.2 Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Սույն Ծրագրային ազդագրով նախատեսված պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումն (լավագույն ջանքերի գործադրմամբ, չերաշխավորված եղանակով) իրականացնելու է «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն (հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 44/2):

3.4.4.3 Տեղաբաշխման պայմանները

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն է՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ: Թողարկող/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ տեղաբաշխողների խմբի հետ համատեղ տեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

3.4.4.4 Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

3.4.4.5 Վճարում ընդունող բանկերը և պահառուները

Թողարկվող պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում (ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 44/2) բացված հաշվեհամարին:

Թողարկվող պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարումն իրականացվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ, հեռ.՝ (+374) 60 615555,

էլ.փոստ՝ info@amx.am) միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից («Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ ենթապահառու)՝ վերջինիս մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր է հանդիսանում «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն:

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

3.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

3.5.1 Առևտրին թույտվությունը

Սույն Ծրագրային ազդագրում ներկայացված պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո հնարավոր սեղմ ժամկետներում Բանկը դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ն կարող է չբավարարել Բանկի հայտը: Այս դեպքում թողարկումը համարվում է չեղյալ և համապատասխան գումարները Պարտատոմսերի սեփականատերերին հետ են վերադարձվում սույն Ծրագրային ազդագրի **3.4.1.2** կետում սահմանված կարգով:

Տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն չեղյալ ճանաչելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակահատվածի համար:

Թողարկված պարտատոմսերը տրանշերով տեղաբաշխման դեպքում՝ յուրաքանչյուր առանձին տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Բանկը դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին՝ տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար:

3.5.2 Շուկաները

Տվյալ պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային Ազդագրով առաջարկվող պարտատոմսերը որևէ շուկայում հրապարակային առևտրի թույլատրված չեն:

3.5.3 Շուկա ստեղծողները

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու դեպքում Թողարկողը կարող է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր՝ երկրորդային շուկայում սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերի իրացվելությունն ապահովելու նպատակով:

Ներդրողները Թողարկողի պարտատոմսերի համար ներգրավված շուկա ստեղծող(ներ)ի մասին կարող են տեղեկանալ Հայաստանի ֆոնդային բորսայի կայքից՝ www.amx.am:

3.6 Լրացուցիչ տեղեկատվություն

3.6.1 Պարտատոմսերի մասին տեղեկությունների մասում ներկայացված տեղեկությունների հետ կապված խորհրդատու հանդես չի եկել:

3.6.2 Բացի սույն Ծրագրային ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Ծրագրային ազդագրի Հավելված 7-ում:

3.6.3 Ծրագրային ազդագրի սույն մասում ներկայացված տեղեկատվության մեջ երրորդ անձանցից ստացված տեղեկություններ առկա չեն:

3.6.4 Բանկին և թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1 Անկախ աուդիտորները

Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի իր ֆինանսական հաշվետվություններն աուդիտի ենթարկելու նպատակով հրավիրում է արտաքին աուդիտ: Աուդիտի հիմնական նպատակներից մեկն այն է, որ ձեռք բերվի բավարար երաշխիք՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

Բանկի 2020-2021թթ. ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Գրանդ Թորնթոն» ՓԲԸ կողմից, հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 9, հեռ.՝ +374 10 500 964/961, ինտերնետային կայք՝ www.grantthornton.am: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեյշնալի» անդամ:

Բանկի 2022թ ֆինանսական գործունեության աուդիտը ևս իրականացնելու է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

Վերջին երեք տարիների ընթացքում Բանկի աուդիտն իրականացնող անձի փոփոխություն և/կամ հեռացում չի եղել:

4.2 Ռիսկային գործոններ

Ներքոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել Թողարկողի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և կանխիկ դրամական հոսքերի վատթարացմանը, ինչպես նաև շուկայական դիրքի, մրցունակության և հեռանկարային զարգացման վատթարացմանը, ինչը հավանական է, որ կարող է հանգեցնել Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների՝ լրիվ կամ մասնակի չկատարմանը կամ որոշակի կերպով դժվարացնել ներդրողների կողմից ապագայում պարտատոմսերի արագ և շահավետ գնով իրացումը, արժեկտրոններով նախատեսված տոկոսագումարների ստացումը և մարումը: Ներդրողները պետք է հաշվի առնեն նաև, որ ստորև ներկայացվող ռիսկերից բացի հնարավոր է նաև այլ խնդիրների առաջացում, որոնք հետագայում կարող են անցանկալի հետևանք ունենալ Թողարկողի ֆինանսական վիճակի, արդյունքերի, ինչպես նաև պարտատոմսերի ներդրումային որակների (իրացվելիություն, եկամտաբերություն) վրա:

Բանկի գործունեությանն առնչվող հիմնական ռիսկերն են.

Վարկային ռիսկ: Վարկային ռիսկը Բանկի վարկառուների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների ժամանակին և ամբողջական չկատարելու ռիսկն է, որը կարող է հանգեցնել բանկի շահույթի և/կամ կապիտալի նվազմանը: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի

ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Նշված ռիսկը կառավարելու համար Բանկը սահմանել է վարկային ռիսկի կենտրոնացման սահմանաչափեր առանձին փոխառուների և նրանց փոխկապակցված խմբերի, տնտեսության ճյուղերի և աշխարհագրական վայրերի նկատմամբ:

Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ ռիսկի դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

	Համախառն վարկային պորտֆելը	Չաշխատող վարկեր	Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում
2022	164,328,937.00	4,630,066	2.82%
2021	142,070,486.00	1,584,415	1.10%
2020	115,806,732.00	3,852,562	3.30%
2019	104,513,987.00	3,191,680	3.10%

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը Բանկի կողմից իր պարտավորությունները ժամանակին և ամբողջական կերպով չկատարելու ռիսկն է, որը կարող է առաջանալ ակնկալվող դրամական հոսքերի չստացման, անակնկալ կորուստների, օրենսդրական փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Բանկն իր միջոցների մի մասը ներդնում է բարձր իրացվելի ակտիվներում, ինչպես նաև հնարավորինս համապատասխանեցնում է ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետներն ու ծավալները և իրականացնում դրամական հոսքերի պարբերական մոնիթորինգ: 31.12.2022թ. դրությամբ իրացվելիության նորմատիվները (Ն2.1 և Ն2.2) կազմում են 42.4% և 143.94% նախատեսված 15% և 60%-ի փոխարեն: Սթրես թեստերը ցույց են տալիս, որ ֆիզիկական անձանց կողմից ժամկետային ավանդների չերաշխավորված մասի 52.19%-ի և ցպահանջ միջոցների (բանկային հաշիվների) 70%-ի հետ պահանջումը իրացվելիության նորմատիվների վրա կունենա համապատասխանաբար 13.13% և 27.85%-ի ազդեցություն:

Շուկայական ռիսկ: Շուկայական գործոնների ազդեցության ներքո Բանկի ներդրումների արժեքը կորցնելու ռիսկն է: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը:

Գնային ռիսկ: Նյութական ակտիվների (գույք, գրավ) գների փոփոխության արդյունքում բանկի կորստի ռիսկն է: Գրավների արժեզրկման ռիսկի կառավարման տեսակետից կիրառվում է վարկ/գրավ ցուցանիշի ճկուն կառավարում, գրավների կենտրոնացվածության կառավարում, ինչի արդյունքում չաշխատող ակտիվների կեսից ավելին վերադարձվում են առնվազն մեկ տարվա ընթացքում:

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը Բանկի՝ կորուստներ կրելու հավանականությունն է շուկայական տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով: Նշված ռիսկի զսպման նպատակով Բանկում վերահսկվում է և պարբերաբար վերանայվում է ակտիվների գնագոյացման գործընթացը: Բանկում տոկոսադրույքի կառավարման նպատակով կիրառվում են եկամտաբերության կորի փոփոխության, տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ժամկետային անհամապատասխանության և շուկայական տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների գծով ռիսկերի վերլուծություններ: 31.12.2022թ. դրությամբ, սթրես թեստերը ցույց են տալիս, որ շուկայական տոկոսադրույքների 1% անբարենպաստ աճի դեպքում Բանկի կորուստը չի գերազանցի Բանկի ընդհանուր կապիտալի 0.19%-ը, իսկ եկամտաբերության կորի համամասնական 1% աճը կհանգեցնի նորմատիվային կապիտալի 1.25%-ով նվազմանը:

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկը ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժութային ռիսկի զսպման նպատակով Բանկը սահմանել է արտարժութային դիրքերի ներքին առավելագույն սահմանաչափեր և իրականացնում է դրանց պահպանման օրական վերահսկողություն: Փակ դիրքերի քաղաքականության պայմաններում ԱՄՆ դոլարի փոխարժեքի նույնիսկ 20% տատանման դեպքում արտարժութային դիրքի ճեղքվածքի գծով Բանկի կորուստները չեն գերազանցի կապիտալի 1%-ը:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկը ներքին գործընթացների և համակարգերի ոչ համարժեքության կամ խափանումների, ինչպես նաև մարդկանց և արտաքին գործոնների անբարենպաստ ազդեցության արդյունքում կորուստների առաջացման հավանականությունն է: Բանկի գործառնական ռիսկերի կառավարումը և դրան վերաբերող գործընթացները կանոնակարգված են ներքին իրավական ակտերով և վերահսկվում են Ռիսկերի կառավարման վարչության կողմից: Գործառնական ռիսկերը բավական տարաբնույթ են և կարող են պայմանավորված լինել ինչպես տեխնիկական միջոցների խափանմամբ, այնպես և մարդկային գործոններով: Տեխնիկական միջոցների խափանման հետ կապված ռիսկերից Բանկի համար առավել մեծ նշանակություն ունեն տվյալների բազայի ամբողջական պահպանմանը վտանգող ռիսկերը: Այս առումով Բանկը իրականացնում է տվյալների բազայի պարբերաբար արխիվացում, որոնց կրկնօրինակները պահվում են ինչպես Բանկի սերվերների և համակարգիչների մեջ, այնպես և արտաքին կրիչների վրա: Մարդկային գործոններով պայմանավորված ռիսկերը նվազեցնելու նպատակով Բանկում ներդրված է ներքին

հսկողության համակարգ, ինչի տար են հանդիսանում գործարքների կրկնակի ստուգումը և առնվազն մեկ անձի կողմից հաստատումը, ներքին/արտաքին աուդիտորների կողմից իրականացվող պարբերական ստուգումները և այլն:

Օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկ: Օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկերի առաջացման աղբյուր կարող են հադիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործունեության վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

Մրցակցային ռիսկ: Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա: Բանկն իր մրցակցային դիրքերն ամրապնդելու նպատակով, ներդնում է բանկային նորարար, առաջատար տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող ծառայությունների որակն ու մատչելիությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ծառայությունների թվայնացմանը և շարունակաբար նոր թվային պրոդուկտների ներդրմանը:

Վերը նշված ռիսկերից բացի Թողարկողը կարող է բախվել նաև այլ ռիսկերի, որոնք Բանկը սույն փաստաթղթում նշելու համար էական չի համարել:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը և մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխություններն ու դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Բանկը պատրաստ է իրականացնելու այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել իր գործունեության վրա դրանց բացասական ազդեցությունն ու ապահովել հիմնական նպատակային ցուցանիշների կատարումը:

4.3 Տեղեկատվություն Բանկի մասին

4.3.1 Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ **«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ,**

անգլերեն՝ **“EVOCABANK” CLOSED JOINT STOCK COMPANY,**

ռուսերեն՝ **ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «ЭВОКАБАНК»**

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ **«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ,**

անգլերեն՝ **“EVOCABANK” CJSC,**

ռուսերեն՝ **ЗАО «ЭВОКАБАНК»**

2016թ. Բանկը փոխել է իր կազմակերպաիրավական ձևը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից վերակազմավորվելով փակ բաժնետիրական ընկերության:

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն հանդիսանում է «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ իրավահաջորդը: «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ մասնակիցների 29.09.2017թ. կայացած արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ որոշվել է «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ-ն վերանվանել «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի:

Բանկի ապրանքային նշանն է՝

4.3.2 Բանկի պետական գրանցման վայրը՝ **ՀՀ, 0010, ք.Երևան, Հանրապետության 44/2**

Բանկի պետական գրանցման համարը՝ **27**:

4.3.3 Բանկը հիմնադրվել է 1990թ. հունիսի 1-ին որպես «Պրոմեթևս» Առևտրային Բանկ, այնուհետև գործունեություն է ծավալել որպես «Պրոմեթեյ բանկ» Փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում: 2017թ. հոկտեմբերին Բանկը վերանվանվել է «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի՝ փոխելով իր ռազմավարությունը և բիզնես մոդելը՝ անցնելով mobile-first ֆորմատի: Բանկի Պետական գրանցման վկայականի համարն է՝ թիվ **0187**: 1991թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 27 լիցենզիան:

Բանկը հանդիսանում է SWIFT միջազգային վճարային համակարգի, մի շարք միջազգային դրամական փոխանցումների համակարգերի, Visa միջազգային վճարային համակարգի անդամ, ArCa վճարային համակարգի լիիրավ անդամ և բաժնետեր, MasterCard միջազգային վճարային համակարգի աֆիլացված անդամ, Հայաստանի Ֆոնդային Բորսայի և Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի, Հայաստանի Բանկերի Միության անդամ:
2021թ., հայաստանյան ֆինանսական շուկայում թվային և նորարարական լուծումների ներդրման և շուկայի զարգամանը խթանելու նպատակով, Բանկը սկսել է անդամակցել «ՖԻՆԱՐՄ» Ֆինանսական Շուկայի Մասնակիցների Ասոցիացիային: Գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսական միջոցների հասանելիությունը ընդլայնելու նպատակով սկսել է համագործակցել Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի՝ IFC-ի հետ, իսկ, Բանկի հաճախորդներին մասնագիտացված լիզինգային ֆինանսավորման համար, համագործակցության պայմանագիր կնքել «Արմենիան Լիզինգ Քամփնի»-ի հետ:
Բանկը համագործակցում է նաև Եվրոպական Ներդրումային Բանկի, Գերմանահայկական Հիմնադրամի, Symbiotics S.A. շվեյցարական ներդրումային ընկերության հետ:

Բանկի գործունեությունը կարգավորվում և վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից:

4.3.4. Բանկի գտնվելու վայրը՝ ՀՀ, 0010, ք,Երևան, Հանրապետության 44/2

Կապի միջոցները՝
Հեռախոս՝ +374 10 605555
Ինտերնետային կայք www.evoca.am
Էլեկտրոնային փոստ՝ hello@evoca.am
Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Բանկի գլխամասային գրասենյակը և թվով 13 մասնաճյուղերից 10-ը գտնվում են Երևան քաղաքում, 3-ը՝ ՀՀ մարզերում: Բանկի մասնաճյուղերի ցանկն ու հասցեները ներկայացված են ստորև բերված աղուսյակում.

Անվանում	Հասցե
Գլխամասային գրասենյակ	ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 44/2
Պարոնյան	ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 15/3
Կասյան	ՀՀ, ք. Երևան, Կասյան 5
Թումանյան	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 15
Ազատություն	ՀՀ, ք. Երևան, Ազատության 12
Գարեգին Նժդեհ	ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհ 9
Էրեբունի	ՀՀ, ք. Երևան, Գաջեգործների 76
Դավթաշեն	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Պետրոսյան 32/8
Կիևյան	ՀՀ, ք. Երևան, Կիևյան 2
Մալաթիա	ՀՀ, ք. Երևան, Անդրանիկի 134/8
Նոր-Նորք	ՀՀ, ք. Երևան, Գայի պողոտա 14/9
Գյումրի	ՀՀ, ք. Գյումրի, Ռուսթավելի 63/1
Կոտայք	ՀՀ, ք. Աբովյան, Օգոստոսի 23 1/2
Վանաձոր	ՀՀ, ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչի 34

4.3.5 Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: 2022թ. վերջին Բանկի ընդհանուր իրացվելիության նորմատիվը կազմել է 42.4%, ինչը գերազանցում է ԿԲ պահանջվող սահմանաչափը 27.4 տոկոսային կետով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում է Բանկային գործունեության վերահսկման նպատակով ՀՀ ԿԲ կողմից սահմանված տնտեսական նորմատիվների, մասնավորապես, պոտենցիալ ներդրողների կողմից Բանկի իրացվելիության մասին գնահատական տալու համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ-ի սահմանած թույլատրելի մեծությունը	Փաստացի մեծություն 2022	Փաստացի մեծություն 2021	Փաստացի մեծություն 2020	Փաստացի մեծություն 2019
$Ն_2^{1*}$	15%	42.40%	31.29%	26.00%	21.85%
$Ն_2^{2**}$	60%	143.94%	161.04%	152.21%	142.64%
$Ն_2^{3***}$	100%	445.60%	199.20%		
$Ն_2^{4****}$	100%	173.00%	141.00%		

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն:

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն:

*** Բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցություն:

**** Հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցություն:

4.4 Բիզնեսի նկարագիրը

4.4.1. Բանկի հիմնական գործունեությունը

Հանդիսանալով ունիվերսալ առևտրային բանկ, ինչպես նաև առաջին թվային բանկը Հայաստանում՝ Բանկի հիմնական առաքելությունն է նորագույն տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ մատուցել ֆինանսական ծառայությունները պարզ, արագ և հարմարավետ եղանակով՝ գործելով mobile-first ձևաչափով: Բանկը մշտապես կատարելագործում է իր կողմից մատուցվող ծառայությունները՝ փորձելով մարդկանց կյանքն ավելի հարմարավետ դարձնել: Բանկի տեսլականն է լինել ամենանորարար և առաջադեմ բանկային ծառայություններ մատուցող ֆինանսական հաստատությունը Հայաստանում, որի բոլոր ծառայություններից հնարավոր կլինի օգտվել առանց բանկ այցելելու:

Բանկը կարևորում է էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանումը՝ պարբերաբար ներկայացնելով նոր նախագծեր և իր ներդրումն ունենալով այս կարևոր գործում: Բանկի

առաջնային նպատակներից է թղթի օգտագործման նվազեցումը, ինչի նպատակով մասնաճյուղերում թղթային բուկլետների փոխարեն տեղադրվել են թվային QR բուկլետներ: Բանկը նաև վերամշակում է իր գործունեության արդյունքում առաջացած թղթե և պլաստիկ թափոնները:

Բանկն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է հետևյալ հիմնական արժեքներով և սկզբունքներով՝

Ազնվություն	Ազնիվ գործելաոճ բոլոր հարաբերություններում:
Նորարարություն	Նորարարությունների շարունակաբար ներդնումը և կիրառումը՝ առաջարկելով հաճախորդներին նորագույն տեխնոլոգիաների լավագույն լուծումները:
Հաճախորդների վստահություն	Հաճախորդները մշտապես Բանկի գործունեության կենտրոնում են. Բանկը գնահատում և ամուր է պահում հաճախորդների վստահությունը:
Հուսալիություն	Կայունություն և հուսալիություն թե՛ հաճախորդների, և թե՛ գործընկերների շրջանակում:
Հարմարավետություն	Բանկը մշտապես ձգտում է բարելավել հաճախորդների կենսակերպը՝ դարձնելով այն առավել հարմարավետ:
Գործարար հեղինակություն	Բարի համբավը Բանկիկ համար ամենաթանկ և անփոխարինելի ակտիվն է:
Թափանցիկություն	Բանկը բաց է և թափանցիկ հանրության առջև, միաժամանակ փակ՝ հաճախորդի բանկային և առևտրային գաղտնիքի պահպանման հարցում:
Թիմային ոգի	Բանկը համախմբել է լավագույն թիմը՝ իր հաճախորդներին լավագույն սպասարկում ապահովելու համար:

Բանկի բիզնես գործունեությունը նկարագրող հիմնական ծառայություններն են՝

- Բանկային հաշիվների բացում և սպասարկում,
- Դրամարկղային գործառնությունների իրականացում,
- Վճարահաշվարկային ծառայությունների մատուցում,
- Չհրկիզվող անհատական պահարանների վարձակալությամբ տրամադրում,
- Ներդրումային ծառայությունների մատուցում,
- Միջազգային առևտրի սպասարկում,
- Վճարային քարտերի տրամադրում և սպասարկում,
- Ժամկետային ավանդների ընդունում,

- Վարկերի և Բանկային երաշխիքների տրամադրում,
- Նոր և օգտագործված սարքավորումների, ժամանակակից տեխնիկայի և տրանսպորտային միջոցների լիզինգային ֆինանսավորում

Բանկը հաճախորդներին ծառայությունները մատուցում է ինչպես իր գործունեության վայրում, այնպես էլ «EvocaOnline» և «EvocaTouch» հեռակառավարման համակարգերի միջոցով:
Բանկի հիմնական ռազմավարական խնդիրն է զարգացնել հեռակառավարման համակարգերը, որի արդյունքում հնարավոր կլինի Բանկի կողմից առաջարկվող գրեթե բոլոր ծառայությունները մատուցել հեռակառավարման համակարգերի միջոցով:
Ներկայումս «EvocaTouch» հավելվածի միջոցով հնարավոր է՝

- Ներկայացնել բանկային հաշվի բացման հայտ և հաշված րոպեների ընթացքում բացել բանկային հաշիվ,
- Նոր քարտի պատվիրման հայտով պատվիրել Բանկի կողմից առաջարկվող քարտատեսակներից որևէ մեկը,
- Իրականացնել փոխանցումներ, այդ թվում միջազգային,
- Իրականացնել արտարժույթի փոխանակման գործարքներ,
- Կատարել բազմապիսի ծառայությունների դիմաց վճարումներ (բջջային կապ, կոմունալ վճարումներ, ինտերնետ, հեռուստատեսություն և այլն),
- Իրականացնել վարկերի դիմաց վճարումներ,
- Կնքել ԱՊՊԱ պայմանագիր
- Ստանալ տեղեկատվություն վարչական իրավախախտումների վերաբերյալ և կատարել վճարում
- Ներկայացնել բանկային ծառայությունների հետ կապված հայտեր (կանխիկի տրամադրման, տեղեկանքի, քաղվածքի և այլն),
- Կատարել բյուջետային փոխանցումներ և այլն:

Բանկի կողմից ռազմավարական խնդիրն իրականացնելու նպատակով ներդրվել են մի շարք նոր ծառայություններ, որոնցից հնարավոր է օգտվել «EvocaTouch» հավելվածով, մասնավորապես՝

- Հնարավորություն է ստեղծվել առցանց ռեժիմով «EvocaTouch» հավելվածի միջոցով րոպեների ընթացքում ձևակերպել վարկեր և օգտվել այնպիսի վարկային ծառայություններից, ինչպիսիք են «SingleTouch», «Evolution», «Ուսանողական վարկ»
- Առանց բանկ այցելելու ներդնել «Evoca Online» ավանդատեսակի ավանդ,
- «EvocaTouch» հավելվածի օգնությամբ իրականացնել անքարտ կանխիկացումներ Բանկի ավտոմատ գանձման սարքերից,
- «EvocaTouch» հավելվածին ինտեգրված տերմինալի միջոցով իրականացնել ավելի քան 200 տեսակի վճարում զանազան ծառայությունների դիմաց,

- Pay-X-ի մոբայլ վճարումների համակարգի միջոցով իրականացնել QR կոդով վճարումներ տարատեսակ ծառայությունների դիմաց,
- Իրականացնել կենսակերպի հետ կապված այնպիսի գործարքներ, ինչպիսիք են Booking.com կայքի միջոցով հյուրանոցային համարների պատվիրումը, ծաղիկների պատվիրումը և այլն,
- «EvocaTouch» հավելվածի օգնությամբ կատարել միջազգային դրամական փոխանցումներ՝ միայն հեռախոսահամարի միջոցով՝ ռուսական Ֆորաբանկի հետ համատեղ:
- Evoca Gift Card՝ տարբերվող բրենդինգով բանկային նվեր քարտ, որը հասանելի է թե՛ մասնաճյուղերում և թե՛ օնլայն տարբերակով՝ «EvocaTouch» հավելվածով կամ www.evoca.am կայքում:

Օրեցօր ավելանում է «EvocaTouch» հավելվածի միջոցով տարատեսակ ծառայություններից օգտվող հաճախորդների քանակը:

Քայլելով ժամանակին համընթաց՝ 2022թ. ընթացքում Բանկը ներդրել է պարզ, արագ և անհպում վճարումների իրականացման Apple Pay և Google Pay գործիքները:

4.4.2 Հիմնական շուկաները

4.4.2.1 Հիմնական շուկաները

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն ունիվերսալ առևտրային բանկ է, որը, լինելով դինամիկ և կայուն աճ արձանագրող ընկերություն, մատուցում է կորպորատիվ, ներդրումային և մանրածախ բանկային ծառայություններ՝ տրամադրելով բանկային (այդ թվում թվային) լուծումների ամբողջական փաթեթ: Բանկը որդեգրել է մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնցից են անհատական մոտեցումը յուրաքանչյուր հաճախորդին և նորարարությունը՝ համատեղած բարձր պրոֆեսիոնալիզմի և փորձի հետ՝ ստանձնելով բազմակողմանի և բարձրորակ ֆինանսական լուծումներ տրամադրող գործընկերոջ դերը իր հաճախորդների համար: Եվ այս մոտեցումը Բանկի հաջողության գրավականն է՝ թույլ տալով Բանկին դառնալ ՀՀ բանկային համակարգի առաջատարներից մեկը թվային բանկային ծառայությունների ոլորտում: Բանկը 6 տարի անընդմեջ Global Finance հեղինակավոր ամսագրի կողմից ճանաչվել է Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում, ինչպես նաև՝ Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում (2021թ.), 4 տարի անընդմեջ ըստ Global Banking & Finance Review-ի՝ Լավագույն թվային բանկը Հայաստանում: Բանկը նաև Visa International-ի կողմից ստացել է մրցանակ՝ Strong Visa Premium Issuance-ի համար:

4.4.2.2 Բանկի մրցակցային դիրքի նկարագրությունը

Հաշվի առնելով բանկային համակարգում առկա մրցակցությունը՝ Բանկը մշտապես իրականացնում է մրցակցային դիրքի վերլուծություններ, շուկայում գործող ծառայությունների պայմանների և տոկոսադրույքների ուսումնասիրություններ: Բանկի մրցակցային դիրքի վերլուծությունները իրականացվել են՝ հիմք ընդունելով մասնաճյուղերի վճարային

տերմինալների, բանկոմատների և այլ սպասարկման կետերի քանակը, առցանց սպասարկման հնարավորությունները, այդ թվում՝ հեռակառավարման համակարգերին առցանց գրանցման հնարավորությունը, ինտերֆեյսի գրավչությունը, օգտագործման պարզությունը, անվտանգությունը, գործարքների տեսակի բազմազանությունը և այլն:
Բանկն իր գործունեության ընթացքում առանձնակի ձգտում չի ցուցաբերել իր քանակական ցուցանիշներով բանկային համակարգում առաջատար դիրքեր զբաղեցնելու ուղղությամբ: Փոխարենը, Բանկը մշտապես ձգտել է առաջատար դիրքեր գրավել և պահպանել այդ դիրքերը բարձրակարգ բանկային ծառայությունների որակական հատկանիշների ապահովմամբ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ծառայությունների թվայնացմանը և շարունակաբար նոր թվային պրոդուկտների ներդրմանը:
Հաշվի առնելով վերջին տարիներին բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների թվայնացման աննախադեպ միտումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Բանկի մրցակից հանդիսացող բանկերից շատերը նույնպես որդեգրել են բանկային ծառայությունների թվայնացման ուղին, Բանկն իր մրցակցային դիրքն ամրապնդելու համար կշարունակի առանձնակի ուշադրություն դարձնել թվային և առցանց ծառայությունների ակտիվացմանն ու զարգացմանը, ինչպես նաև անձնակազմի շարունակական վերապատրաստմանը:
Բանկի մրցակցային առավելություններն են.

- Բանկի հեղինակությունը
- Սպասարկման որակը
- Մատուցվող ծառայությունների բազմազանությունը և շարունակական թվայնացումը
- Յուրաքանչյուր հաճախորդին անհատական մոտեցումը

4.5 Բանկի կառուցվածքը

Բանկը որևէ խմբի անդամ չի հանդիսանում: Բանկի ներքին վարչակազմակերպչական կառուցվածքը ներկայացված է սույն Ծրագրային ազդագրի Հավելված 3-ում:

Բանկի հասարակ բաժնետոմսերի 100%-ին տիրապետում է Մարետա Ռուդիկի Գևորկյանը:

4.6 Զարգացման վերջին միտումները

Բանկի զարգացման հաջորդ փուլը հանդիսանալու է հաճախորդների ծառայությունների մատուցման նոր ձևերի առաջարկումը, նոր տեխնոլոգիական հարթակը և Բանկի անձնակազմի հետագա զարգացումը, որը հնարավորություն կընձեռի ապահովել հարմարավետ սպասարկում:

Բանկը շարունակում է 2017թ.-ին որդեգրած ռազմավարությունը՝ շեշտը դնելով օնլայն պրոդուկտերի մշակման ու ներկայացման վրա՝ պահպանելով իր դիրքերը ՀՀ բանկային համակարգում որպես լավագույն թվային սպառողական բանկ:

Աճի տեմպերը շարունակում են մնալ երկնիշ՝ հիմնական շեշտը դնելով մանրածախ և ՓՄՁ սեգմենտների ընդլայնման վրա և հավասարակշռելով ռիսկերը:

2023թ. Բանկը շարունակելու է իրականացնել թվային տրամսֆորմացիա, որի նպատակով Բանկը Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի հետ համատեղ DigiLab ծրագրի շրջանակներում իրականացնում է Բանկի թվայնացման ռազմավարության միջոցառումների մշակում 7 դրանց հետևողական իրագործում: Արդյունքում նախատեսվում է ավելացնել օնլայն իրականացվող գործարքների կշիռը ընդհանուր գործարքների մեջ՝ վերհաստատելով առաջատար թվային Բանկի կարգավիճակը:

Բանկը նախատեսում է էականորեն ավելացնել բանկոմատների և POS տերմինալների քանակը և հասանելիությունը, ներդնել աբողջությամբ նոր՝ ավելի պարզ և հեշտ կիրառվող բջջային հավելված, մասնագիտացված/թիրախավորված բջջային հավելվածների ներդնում (մասնավորապես՝ ներդրումային գործառնություններ իրականացնելու համար), Բանկի կայքի միջոցով նոր վճարային ծառայություններ մատուցել, իրականացնել Visa և MasterCard վճարային քարտերի թոքենիզացիա:

Ակնկալվում է, որ Բանկի բոլոր հիմնական ցուցանիշների աճի տեմպերը կգերազանցեն 15 տոկոսը, մասնավորապես՝ նախատեսվում է ակտիվների գծով՝ 16%, վարկային պորտֆելի գծով՝ 25.6% և պարտավորությունների գծով՝ 17% աճ: Վարկային պորտֆելի աճի գերակշիռ մասը բաժին է ընկում ՓՄՁ, online տրվող իրավաբանական և հիփոթեքային պորտֆելի աճին, ինչը ներդաշնակ է Բանկի կողմից իրականացվող ռազմավարությանը: Նախատեսվում է գործարկել մի շարք օնլայն վարկատեսակներ, այդ թվում ՓՄՁ օնլայն վարկատեսակ:

4.7 Շահույթի կանխատեսումը և գնահատումը

4.7.1 Ստորև ներկայացված է Էվոկաբանկի կանխատեսվող զուտ շահույթը 2023-2025թթ-ի հեռանկարային զարգացման ծրագրի համաձայն.

Հազար ՀՀ դրամ

2023 թ.	2024թ.	2025 թ.
1,946,463	2,958,800	3,752,231

Զուտ շահույթը կանխատեսվել է հաշվի առնելով Բանկի զարգացման ռազմավարական ուղղությունները և դրանցից բխող վարկային, ավանդային և ներդրումային պորտֆելների աճերը, բանկային այլ գործառնություններից հնարավոր եկամուտ/ծախսերը, ինչպես նաև Բանկի գործառույթներն ապահովելու համար անհրաժեշտ վարչական ծախսերը:

4.7.2 Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

1. Բանկի ներգրավող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,
2. Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,
3. Բանկի տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական համակարգերի արդիականացմանն ուղղված ներդրումներ,
4. Բանկի անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման ծախսեր,
5. Բանկի գործունեության ապահովման ծախսեր:

Բանկի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

1. ավանդատուների վարքագիծ,
2. ֆինանսական շուկայի տոկոսադրույքների վարքագիծ,
3. փոխարժեքների վարքագիծ,
4. անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը:

4.8 Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

4.8.1 Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները

Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողով
- Բանկի խորհուրդ,
- Վարչություն
- Վարչության նախագահ

4.8.2 Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

4.8.2.1 Բաժնետերերի ընդհանուր ժողով

Բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է Բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 6 (վեց) ամսվա ընթացքում:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

- Բանկի կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների ու լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
- Բանկի վերակազմակերպումը,

- Բանկի լուծարումը,
- Ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
- Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատման, և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Բանկի խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Բանկի խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ
- Հայտարարված բաժնետոմսերի ծավալի, ինչպես նաև Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման առավելագույն չափի սահմանումը,
- Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների շահույթի և վնասի բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- Օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունք չկիրառելու մասին որոշման ընդունումը,
- Ընդհանուր ժողովի վարման կարգի մասին հաստատումը,
- Օրենքով սահմանված դեպքերում Բանկի գույքի օտարման և ձեռբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը, (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին),
- Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը:

4.8.2.2 Բանկի խորհուրդը

Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է Բանկի խորհրդի կողմից: Բանկի խորհրդի անդամներն ընտրվում են բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում վերջինիս որոշած ժամկետով, Բանկի բաժնետերերի կողմից կումուլյատիվ քվեարկության սկզբունքով: Բանկի խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև բաժնետեր չհանդիսացող անձիք:

Բանկի խորհրդի քանակական կազմը սահմանվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ոչ պակաս 5 (հինգ) և ոչ ավելի 15 (տասնհինգ) անդամներից: Սույն ազդագրի կազմման պահին Բանկի Խորհուրդը բաղկացած է 4 անդամից և գտնվում է ձևավորման փուլում: Մոտ ապագայում Խորհրդի կազմը կհամալրվի ևս մեկ անդամով:

Բանկի խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

- Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

- Բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.
- Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
- Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
- Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.
- Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
- Շահութաբաժինների վճարման վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.
- Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացումը.
- Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.
- Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.
- Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.
- Բանկի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.
- Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.
- Բանկի վերակազմակերպման, դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծման, դուստր կամ կախյալ ընկերությունների մասնակցության, առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրման, առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցության, խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանման հարցերի ներկայացումը բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը.

- Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.
- Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
- Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.
- Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.
- Լիազորում է Բանկի վարչության նախագահին՝ կնքելու աշխատանքային պայմանագրեր վարչության անդամների հետ:
- Օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Բանկի խորհրդի անդամներն են՝

Անուն Ազգանուն, պաշտոն	Տեղեկատվություն
Խոսե Մարիա Մորենո Դե Բարրեդա, Խորհրդի նախագահ	Խոսե Մարիա Մորենո դե Բարրեդան ծնվել է 1969թ. Իսպանիայում: 1987 – 1992թթ. սովորել է Իսպանիայի UNIVERSIDAD SAN PABLO CEU համալսարանում և ստացել Եվրոպական իրավունքի և բիզնես վարչարարության դիպլոմ: 1987-1993թթ. սովորել է UNIVERSIDAD COMPLUTENSE Իսպանիայում և ստացել իրավագիտության բակալավրի աստիճան: 1995-1996թթ. սովորել է Լոնդոնի համալսարանի KING'S COLLEGE-ում և ստացել իրավագիտության մագիստրոսի աստիճան (Միջազգային բիզնեսի իրավունք): 2001թ. փետրվարից դեկտեմբեր սովորել է Իսպանիայի IE BUSINESS SCHOOL-ում և ստացել բիզնես վարչարարության մագիստրոսի աստիճան: 2016-2022թթ. սովորել է Իսպանիայի UNIVERSIDAD DE SALAMANCA-ում, ուսումնասիրության թեման՝ Թվային տեխնոլոգիաների միջոցով ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում: Ստացել է դոկտորի աստիճան: 2014 հունվարից մինչև հոկտեմբեր անցել է Իսպանիայի UNIVERSIDAD POLITECNICA DE VALENCIA-ի Եվրոպական ֆինանսական խորհրդատվության դասընթացը: 2016թ. հունվարից մինչև հունիս Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում անցել է դասընթաց՝ «Գլոբալ աղքատության մարտահրավերները» թեմայով: 2018թ. նա Տնօրենների ինստիտուտի կողմից ստացել է առանց գործադիր լիազորությունների ընկերության Խորհրդի անդամի հավաստագիր Միացյալ Թագավորությունում:

	1992թ. հունիսից մինչև 1993թ. փետրվար աշխատել է Citibank-ում Իսպանիայում, որպես իրավաբանական հարցերով կրտսեր խորհրդատու: 1993թ. փետրվարից մինչև նոյեմբեր աշխատել է ROYAL ARTILLERY CORPS որպես աշխատակազմի ղեկավարի օգնական: 1997թ. հունվարից մինչև 2000թ.ապրիլ աշխատել է PRICEWATERHOUSECOOPERS-ում (Իսպանիա, Միացյալ Թագավորություն, Նիդերլանդներ) որպես ավագ խորհրդատու: 2000թ. մայիսից մինչև 2001թ. դեկտեմբեր ամիսը աշխատել է ACCENTURE-ում Իսպանիայում, որպես ավագ խորհրդատու: 2002թ. հունվարից մինչև 2004թ. մայիս աշխատել է NEORIS-ում (Իսպանիա, Մեքսիկա) ռազմավարական հարցերով խորհրդատվության ոլորտում որպես մենեջեր: 2006թ. հունվարից մինչև 2012թ. հունվար աշխատել է EY ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (նախկինում՝ Greenwich Consulting) EMEA/LAC/ASIAPAC որպես Հիմնադիր ավագ գործընկեր և գործադիր տնօրեն: 2012թ. հունվարից մինչև 2015թ. դեկտեմբեր աշխատել է CREATIA CONSULTING (EMEA/LAC/ASIA) որպես ավագ գործընկեր և գործադիր տնօրեն: 2013թ. սեպտեմբերից մինչև 2014թ. սեպտեմբեր աշխատել է MFO & Partners-ում Իսպանիայում՝ Միաձուլումներ և ձեռքբերումներ և մասնավոր սեփական կապիտալ ոլորտներում որպես ավագ խորհրդատու: 2014թ. մինչ օրս աշխատում է ՄՖԿ-ում (Համաշխարհային բանկի խումբ)՝ Թվային ֆինանսական ծառայությունների ոլորտում որպես Գլոբալ թվային ֆինանսների մասնագետ: 2022թ. դեկտեմբերից «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի Խորհրդի նախագահն է: Ամուսնացած է, ունի 3 երեխա:
Գեղամ Գևորգյան, Խորհրդի անդամ	Գեղամ Գևորգյանը ծնվել է 1958թ. Երևանում: 1975-1980թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1982թ. ՀԽՍՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) մաթեմատիկայի ինստիտուտում ստացել է ֆիզմաթ. գիտությունների թեկնածուի աստիճան, 1992թ.՝ Մոսկվայի Ստեկլովի անվան Մաթեմատիկայի ինստիտուտում ֆիզմաթ. գիտությունների դոկտորի աստիճան: 2000թ. ընտրվել է Հայաստանի ԳԱԱ թղթակից անդամ, 2010թ.՝ ԳԱԱ ակադեմիկոս: 1994թ. ստացել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի մրցանակ, 2009թ.՝ պարգևատրվել «Անանիա Շիրակացի» մեդալով, իսկ 2018 թ. ստացել է ՀՀ նախագահի մրցանակ: 1980-1984թթ. աշխատել է որպես ԵՊՀ ուսումնական լաբորատորիայի վարիչ, 1984-1992թթ.՝ ԵՊՀ դոցենտ, 1992-1997թթ.՝ ԵՊՀ պրոֆեսոր,

	1997-2004թթ.՝ ԵՊՀ Մաթեմատիկական անալիզի ամբիոնի վարիչ, 2004-2008թթ.՝ ԵՊՀ Մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան: 2008- 2019թթ.՝ ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր: 2019թ. մայիսի 30-ից ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար: 2006թ. հունիսից մինչ 2017թ. հոկտեմբեր եղել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ: 2017թ. հոկտեմբերից մինչ 2019թ. սեպտեմբեր եղել է «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ: 2019թ. սեպտեմբերից մինչ օրս «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի Խորհրդի նախագահի տեղակալն է: Ամուսնացած է, ունի չորս երեխա և չորս թոռ:
Վարուժան Ավետիքյան Խորհրդի անդամ	Վարուժան Ավետիքյանը ծնվել է 1974թ. Երևանում: 1998թ. ավարտել է Նիկոսիայի համալսարանը Կիպրոսում՝ ստանալով բիզնես կառավարման բակալավրի աստիճան: 2004թ. ավարտել է Leicester համալսարանը Միացյալ Թագավորությունում, ստացել Եվրոմիության առևտրային իրավունքի մագիստրոսի աստիճան: 2005թ. Բոստոնի Համալսարանի Իրավագիտության ֆակուլտետում ստացել է ֆինանսական և բանկային իրավունքի մագիստրոսի աստիճան (LL.M.): 2009թ. ավարտելով Հարվարդի համալսարանը (Harvard Kennedy School)՝ ստացել է պետական կառավարման մագիստրոսի աստիճան: 2008-2009թ. աշխատել է Հարվարդի համալսարանի Քեննեդու անվան դպրոցում՝ որպես դասախոսի օգնական: 2015-2018թ. աշխատել է Christ's College-ում (Քեմբրիջ, ՄԹ) որպես հրավիրված դասախոս Ֆինանսական կարգավորման և կենտրոնական բանկերի Բանկային Հրապարակումների գծով: 2000թ. մինչ օրս աշխատում է Հայաստանում Ֆրանսիական համալսարանում՝ որպես ֆինանսական իրավունքի և բիզնես իրավունքի հրավիրված պրոֆեսոր: 2019թ. մինչ օրս աշխատում է Հայաստանում Ամերիկյան Համալսարանում՝ որպես Պայմանագրային իրավունքի և ֆինանսական կարգավորման (LL.M.) և ադապտիվ առաջնորդության (MBA) հրավիրված պրոֆեսոր: 2018-2020թթ. աշխատել է Տնօրենների Հայկական Ինստիտուտում՝ որպես գործադիր տնօրեն, ղեկավարել է Հայաստանում կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման թիմը: 2020թ. մինչ օրս հանդիսանում է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի հիմնադրամի հոգաբարձու: 2017-2021թթ. հանդիսացել է Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի տնօրենը:

	2020, 2021 և 2022 թթ. International Financial Law Review ամսագրի կողմից ճանաչվել է միջազգային ֆինանսական իրավունքի պատվավոր իրավաբան: 2006-2018թթ. աշխատել է ՀՀ Կենտրոնական բանկում որպես գլխավոր իրավաբան, Իրավաբանական վարչության պետ: 2018թ. մինչ օրս աշխատում է Արժույթի Միջազգային Հիմնադրամի Իրավաբանական վարչությունում, Վաշինգտոն, ԱՄՆ, որպես կարճաժամկետ փորձագետ: 2018թ. մինչ օրս հանդիսանում է TK&Partners (Իրավաբանական խորհրդատվություն) ընկերության տնօրեն: 2022թ. դեկտեմբերից մինչ օրս «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ է: Ամուսնացած է, ունի 3 երեխա:
Մարինա Փսոմաս Խորհրդի անդամ	Մարինա Փսոմասը ծնվել է 1971թ. Երևանում: 1995թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը՝ ստանալով տնտեսագետ-մաթեմատիկոսի մասնագիտությունը: 2013թ. ACI The Financial Markets Association-ի կողմից ստացել է ACI Dealing որակավորում: 2014թ. MTD Training-ի կողմից ստացել է Կառավարման հմտությունների միջազգային որակավորում Միացյալ Թագավորությունում: 1994-1997թթ. աշխատել է Հայխնայբանկում, որպես Արժեթղթերով գործառնությունների մասնագետ: 1997- 1999թթ. աշխատել է Հայխնայբանկում, որպես Ակտիվների և Պասիվների կառավարման վարչության ղեկավար: 1999-2005թթ. աշխատել է Միջազգային առևտրային Սևծովյան բանկում, որպես Դիլեր, գանձապետ-մասնագետ: 2005 - 2010 թթ. աշխատել է Կասկադ Բանկում, որպես Դիլեր: 2010թ. աշխատել է Ամերիաբանկում, որպես Դիլեր: 2011- 2013թթ. աշխատել է Պրոմեթեյ Բանկում, որպես Արժեթղթերով գործառնությունների բաժնի պետ: 2013թ.-ից մինչ այժմ աշխատում է Ալֆասեքյուրիթիզ ներդրումային ընկերությունում, որպես Ֆինանսական վերլուծաբան-խորհրդատու: 2018թ.-ից մինչ այժմ հանդիսանում է Ֆինրայզ ներդրումային ֆոնդի տնօրենը: 2021թ. հուլիսից մինչ այժմ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի Խորհրդի անկախ անդամ է: Ամուսնացած է, ունի 5 երեխա:

4.8.2.3 Բանկի վարչությունը

Բանկի Վարչությունը Բանկի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը, մասնավորապես՝

- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, մասնաճյուղերի կանոնադրությունները,
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը,
- ապահովում է բաժնետերերի ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի որոշումների կատարումը,
- գումարում է իր նիստերը ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը 1 (մեկ) անգամ,
- վերահսկում է օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահպանումը Բանկում,
- իր իրավասության շրջանակներում սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, միջնորդավճարների չափը,
- իր իրավասության շրջանակներում սահմանում է ակտիվային ու պասիվային գործառնությունների գծով տոկոսադրույքների քաղաքականությունը,
- քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը,
- հաստատում է Բանկի աշխատողների և մյուս ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների իրավունքների ու պարտականությունների մասին հրահանգները,
- քննարկում է վարչության նախագահի, վարչության անդամների և Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից վարչության քննարկմանը ներկայացված հարցեր,
- կազմակերպում է Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի մշակումը և քննարկումը, քննարկում է Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները, աշխատանքային գործունեության պլանները, դրանց կատարողականները:

Բանկի Վարչության անդամներն են՝

Անուն Ազգանուն, պաշտոն	**Տեղեկատվություն**
Կարեն Եղիազարյան, Վարչության նախագահ	Կարեն Եղիազարյանը ծնվել է 1979թ. Երևանում: 2000թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, 2012թ.՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը՝ ստանալով Master of Business Administration (MBA) որակավորում: 2009թ. վերապատրաստվել է Լոնդոնում՝ մասնակցելով City of London International Banking School-ի «Ակտիվների և պարտավորությունների կառավարում» դասընթացին: 2010թ. Ֆրանկֆուրտում ավարտել է Commerzbank AG-ի ուսումնական կենտրոնում կազմակերպված հատուկ դասընթացը, 2013թ. Նյու Յորքում՝ Deutsche Bank New York-ում կազմակերպված Global Transaction Banking դասընթացը:

	2000-ից մինչև 2002թ. աշխատել է «Հայագրոբանկ» ԲԲԸ-ում՝ որպես մասնագետ, առաջատար մասնագետ, գլխավոր մասնագետ, այնուհետ՝ Թղթակցային հարաբերությունների և հաճախորդների սպասարկման վարչության պետի տեղակալ - Հաճախորդների սպասարկման բաժնի պետ: 2002-ից մինչև 2003թ. աշխատել է «Անելիք Բանկ» ՍՊԸ-ում՝ պայմանագրային հիմունքներով, 2003թ.՝ «Շարմ» ՓԲԸ-ում՝ որպես ֆինանսական բաժնի պետ: 2003թ.-ից աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում. 2003-ից մինչև 2006թ.՝ Միջազգային հարաբերությունների, ֆինանսական շուկաներում գործառնությունների և պլաստիկ քարտերի բաժնի պետ, 2005-ից մինչև 2007թ.՝ «Տիգրան Մեծ», «Կասյան» և «Երվանդ Քոչար» մասնաճյուղերի կառավարիչ՝ համատեղության կարգով, 2006-ից մինչև 2008թ.՝ Միջազգային հարաբերությունների, ֆինանսական շուկաներում գործառնությունների և պլաստիկ քարտերի վարչության պետ, 2008-ից մինչև 2017թ. հունվար՝ Վարչության նախագահի տեղակալ, Վարչության անդամ, Միջազգային հարաբերությունների, ֆինանսական շուկաներում գործառնությունների և վճարային քարտերի վարչության պետ: 2017թ. հունվարից մինչև 2017թ. հոկտեմբեր՝ «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ Վարչության նախագահի տեղակալ, Վարչության անդամ: 2017թ. հոկտեմբերից մինչև 2019թ. մայիս՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ Վարչության նախագահի տեղակալ, Վարչության անդամ: 2019թ. մայիսի 24-ից «Էվոկաբանկ» ՓԲԸ Վարչության նախագահն է: 2019թ. օգոստոսի 7-ից «ԱՔՌԱ Քրեդիտ Ռիփորթինգ» ՓԲԸ Խորհրդի անդամ է: 2009-ից մինչև 2013թ. դասավանդել է «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամում, 2013-ից մինչև 2017թ.՝ «Ֆինանսաբանկային կենտրոն» հիմնադրամում: Ամուսնացած է, ունի երկու երեխա:
Արմեն Հակոբյան, Վարչության նախագահի առաջին տեղակալ	Արմեն Հակոբյանը ծնվել է 1971թ. Երևանում: 1993թ. ավարտել է Երևանի անասնաբուծա-անասնաբուժական ինստիտուտը, ստացել ինժեներ-տեխնոլոգի որակավորում: 1996թ. վերապատրաստվել է Ժնևում՝ մասնակցելով Trusban Finance and Management s.a.-ի Basic Banking I ֆինանսական դասընթացին: 2009թ. Լոնդոնի City of London International Banking School-ում անցել է «Ակտիվների և պարտավորությունների կառավարում» թեմայով դասընթացը: 1998թ. ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի մասնագիտական խորհրդի որոշմամբ ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան (Ph.D).

	1992-1993 թթ. աշխատել է Երևանի հրուշակեղենի կոմբինատում: 1993-ից աշխատում է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում. 1993-1996 թթ.՝ որպես Վարկա-պլանային վարչության 1-ին կարգի մասնագետ, 1996-2005 թթ.՝ Վարկա-պլանային վարչության պետ, 2005-2006 թթ.՝ Վարչության նախագահի տեղակալ, Ակտիվների և պարտավորությունների վարչության պետ: 2006-10.2017թթ. «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ Վարչության նախագահի առաջին տեղակալ, 10.2017թ.-ից մինչև օրս «Էվոկաբանկ» ՓԲԸ Վարչության նախագահի առաջին տեղակալն է, Վարչության անդամ: Ամուսնացած է, ունի երկու երեխա:
Տաթևիկ Խաչատրյան Վարչության նախագահի տեղակալ	Տաթևիկ Խաչատրյանը ծնվել է 1988թ. Երևանում: 2009թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, 2011թ.՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը՝ ստանալով Master of Business Administration (MBA) որակավորում: 2017թ. վերապատրաստվել է Դուբայում՝ մասնակցելով Digital Marketing Track դասընթացին: Մասնակցել է մի շարք մասնագիտական դասընթացների, ունի պաշտոնական Google AdWords Certification և Google Analytics Certification: 2020թ. ստացել է Project Management Professional-ի PMP^® միջազգային որակավորում Project Management Institute-ի կողմից: 2017թ. դասավանդել է "Global Bridge" դպրոցում: 2011-ից աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես մարքեթինգի մասնագետ, այնուհետև՝ Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ: 2017թ. հոկտեմբերից մինչև 2018թ. օգոստոս՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ: 2018թ. օգոստոսից մինչև 2019թ. հունիս՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, Վարչության անդամ: 2019թ. հունիսի 1-ից մինչև օրս «Էվոկաբանկ» ՓԲԸ Վարչության նախագահի տեղակալ է, Վարչության անդամ: Ամուսնացած չէ
Հայկ Պետրոսյան, Վարչության նախագահի տեղակալ	Հայկ Պետրոսյանը ծնվել է 1970թ. Երևանում: 1991թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ ստանալով տնտեսագետի որակավորում: 1997թ. ավարտել է Արտաքին տնտեսական կապերի և կառավարման ինստիտուտը՝ ստանալով իրավագետ-միջազգայնագետի որակավորում: 1991-ից մինչև 2003թ. աշխատել է «Հայագրոբանկ» ԲԲԸ-ում. 1991-ից մինչև 2001թ.՝ որպես մասնագետ, առաջատար մասնագետ, գլխավոր մասնագետ, այնուհետ՝ Ներքին աուդիտի վարչության պետ, 2001-ից

	մինչև 2002թ.՝ որպես Ֆինանսական շուկաներում գործառնությունների վարչության պետ, 2002-ից մինչև 2003թ.՝ Բանկային գործառնությունների և դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի պետի տեղակալ – Թղթակցային հարաբերությունների և հաճախորդների սպասարկման վարչության պետ: 2003-ից մինչև 2007թ. եղել է «Վ.Ի.Պ.Ս.Կ» ՍՊԸ-ի ֆինանսական գծով փոխտնօրենը: 2007-ից աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում. 2007-ից մինչև 2008թ.՝ որպես Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար, 2008-ից մինչև 2017թ. հոկտեմբեր՝ Վարչության նախագահի տեղակալ, Վարչության անդամ: 2017թ. հոկտեմբերից մինչև օրս «Էվոկաբանկ» ՓԲԸ Վարչության նախագահի տեղակալ է: Ամուսնացած է, ունի երկու երեխա:
Լիլիթ Գաբոյան, վարչության նախագահի տեղակալ ֆինանսական գծով	Լիլիթ Գաբոյանը ծնվել է 1987թ.-ին Երևանում: 2010թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանը՝ ստանալով մագիստրոսի որակավորման աստիճան, 2012թ.-ին՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը՝ ստանալով գործարար կառավարման մագիստրոսի որակավորում (MBA): 2008թ.-ից մինչև 2010թ աշխատել է ԿՈԿԱ-ԿՈԼԱ Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա ՓԲԸ-ում՝ որպես կառավարման համակարգերի մասնագետ: 2010թ.-ից մինչև 2012թ աշխատել է ՊրոԿրեդիտ Բանկ ՓԲԸ-ում՝ որպես վարկային մասնագետ, այնուհետև՝ Պլանավորման և վերահսկողության բաժնի վերլուծաբան: 2012թ.-ից մինչև 2019թ աշխատել է Ամերիաբանկ ՓԲԸ-ում՝ որպես Կառավարչական հաշվետվությունների եւ ֆինանսական պլանավորման բաժնի ավագ վերլուծաբան, այնուհետև՝ բաժնի պետ: 2019թ.-ից աշխատում է Էվոկաբանկ ՓԲԸ-ում՝ որպես Վարչության նախագահի տեղակալ ֆինանսական գծով: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:
Էմմա Ջանինյան Գլխավոր հաշվապահ	Էմմա Ջանինյանը ծնվել է 1988թ. Լոռու մարզի Օձուն գյուղում: 2009թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, 2011թ.՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը ՝ ստանալով Master of Business Administration (MBA) որակավորում: 2014թ. ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի տնտեսագիտության մասնագիտական խորհրդի որոշմամբ ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան (Ph.D). 2017թ. նոյեմբերից հանդիսանում է Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի (ACCA) լիիրավ անդամ: 2011թ. հոկտեմբերից մինչև 2019թ. ապրիլ աշխատել է «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՍՊԸ-ում՝ որպես Աուդիտոր, այնուհետև՝ Ավագ աուդիտոր:

	2019թ. ապրիլից աշխատում է որպես «Էվոկաբանկ» ՓԲԸ Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ: Ամուսնացած է, ունի երեք երեխա:
Սմբատ Մարտիրոսյան Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	Սմբատ Մարտիրոսյանը ծնվել է 1987թ. Երևանում: 2008թ. ավարտել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանը՝ ստանալով բակալավրի որակավորում, 2010թ. Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանը՝ ստանալով մագիստրոսի որակավորում: 2010-ից մինչև 2016թ. աշխատել է «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ում՝ որպես առաջատար իրավախորհրդատու, իրավաբանական վարչության պայմանագրաիրավական բաժնի պետ, իրավաբանական վարչության պետի տեղակալ, այնուհետև՝ իրավաբանական վարչության պետ: 2013-ից մինչև 2015թ. դասավանդել է «Ֆինանսաբանկային կենտրոն» հիմնադրամում: 2016թ. մինչև 2019թ. աշխատել է ՀՀ Պետական եկամուտների կոմիտեում, որպես՝ քարտուղարության վարչության պետ: 2019թ. փետրվար ամսից մինչև նույն թվականի հունիս ամիսը աշխատել է՝ «Արմենիան տոբակո Քոմփանի» ՍՊԸ, որպես գլխավոր իրավաբան: 2019թ. հունիս ամսից մինչև 2021թ. դեկտեմբեր՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ, որպես Իրավաբանական բաժնի պետ: 2022թ. հունվարից՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ Իրավաբանական վարչության պետ, Վարչության անդամի ժամանակավոր պաշտոնակատար: Ամուսնացած է, ունի երեք երեխա:
Միեր Սահակյան Ծրագրավորման և գործառնական համակարգերի վարչության պետ	Միեր Սահակյանը ծնվել է 1981թ. Նոր Հաճնում: 2004թ. ավարտել է Երևանի Պետական Համալսարանը՝ ստանալով Մեխանիկայի մագիստրոսի աստիճան: 2003-ից մինչև 2016թ. աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես վարկային մասնագետ Նոր Հաճն մասնաճյուղում, առաջատար մասնագետ, գլխավոր մասնագետ SS բաժնի ադմինիստրատորների խմբում, այնուհետ՝ Ծրագրավորման բաժնի պետ: 2016թ.-ից աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Ծրագրավորման բաժնի պետ: 2017թ. հոկտեմբերից մինչև 2018թ. մարտ՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի Ծրագրավորման բաժնի պետ: 2018թ. մարտից մինչև օրս «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի Ծրագրավորման բաժնի պետ, Վարչության անդամ: Ամուսնացած է, ունի երեք երեխա:
Տաթևիկ Ջանոյան ՄՌԿ բաժնի պետ	Տաթևիկ Ջանոյանը ծնվել է 1982թ. Երևանում: 2003թ. ավարտել է Երևանի Պետական Համալսարանը, 2009թ.՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը՝ ստանալով Master of Business Administration (MBA) որակավորում:

	2012թ. նույն բուհում անցել մասնագիտական վերապատրաստում Strategic Human Resourses Management թեմայով: 2007-2011թ. աշխատել է՝ որպես վերլուծաբան, մարքեթինգային հետազոտող և մի շարք մարքեթինգային, սոցիոլոգիական և բիզնես խորհրդատվական ընկերություններում կազմակերպել և իրականացրել հետազոտություններ: 2011թ. աշխատել է Պրոմեթեյ Բանկում՝ որպես Մարքեթինգի Բաժնի պետ, 2012թ.-ից՝ որպես Մարդկային ռեսուրսների կառավարման մենեջեր: 2017թ. հոկտեմբերից մինչ օրս ղեկավարում է «Էվոկաբանկ» ՓԲԸ Մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը: 2019թ.ապրիլ ամսից՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար, Վարչության անդամ: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

4.8.2.4 Բանկի վարչության նախագահը

Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ վարչության նախագահը: Վարչության նախագահը նշանակվում է խորհրդի կողմից: Բանկի վարչության նախագահի հետ աշխատանքային պայմանագիր կնքում է Բանկի խորհրդի նախագահը:

Բանկի վարչության նախագահը կարող է ունենալ տեղակալներ, որոնք նշանակվում են Բանկի խորհրդի կողմից՝ վարչության նախագահի ներկայացմամբ:

Այն հարցերը, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ չեն սահմանվել որպես բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Վարչության նախագահի իրավասությանը:

4.8.3 Սույն Ծրագրային ազդագրի կազմման պահին Բանկի ոչ մի մասնաճյուղ չէր կենտրոնացրել Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը:

4.8.4 Բանկի և Բանկի կառավարմանը մասնակցող անձանց միջև սույն Ծրագրային ազդագիրը գրանցման ներկայացնելու պահի դրությամբ շահերի բախումը բացակայում է:

4.9 Հսկող անձինք

	Անուն ազգանուն	Հսկողության տեսակ	Մեկնաբանություն	Նույնականացման տվյալներ
1.	Մարետա Գևորկյան	Ուղղակի	Տիրապետում է Բանկի հասարակ անվանական բաժնետոմսերի 100 %-ին	Բնակության վայրը՝ Շվեյցարիա, Պյուի 1009, Ջեներալ պողոտա, Գուիսան 45Ա Անձնագիր՝ FA0777676, տրված 05.12.2022թ.

4.10 Տեղեկատվություն Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ

4.10.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2020 և 2021 թվականների աուդիտորական եզրակացությամբ հաստատված հաշվետվությունները ներկայացված են սույն Ծրագրային ազդագրի Հավելված 7-ում: Ցանկացողները տվյալ հաշվետվությունները կարող են բեռնել նաև Բանկի ինտերնետային կայքից հետևյալ հասցեով՝ https://www.evoca.am/hy/auditors-opinion/

4.10.2 Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2022 թվականի երրորդ և չորորդ եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներակայացված են Ազդագրի Հավելված 6-ում: Ցանկացողները տվյալ հաշվետվությունները կարող են բեռնել նաև Բանկի ինտերնետային կայքից հետևյալ հասցեով՝ https://www.evoca.am/hy/financial-statements/

4.10.3 Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Սույն Ծրագրային ազդագրում ներառված վերջին (ամենաթարմ) ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

4.10.4 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Սույն փաստաթղթի պատրաստմանը նախորդող 12 ամսիների ընթացքում Բանկը ներգրաված չի եղել դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էական ազդել Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

4.11 Էական պայմանագրեր

Բանկում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

4.12 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

1. Սույն Ծրագրային ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

2. Թողարկողը չունի երրորդ անձ փորձագետ կամ խորհրդատու, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է սույն ազդագրում:
3. Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Ազդագրի Հավելված 7-ում:

4.13 Այլ տեղեկատվություն

Բանկի Կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի ինտերնետային կայքում՝ www.evoca.am:
Սույն Ծրագրային ազդագրի էլեկտրոնային տարբերակը կիրառության ողջ ժամկետի ընթացքում տեղադրված է լինելու բանկի ինտերնետային կայքում՝ www.evoca.am:
Ներդրողը անվճար կարող է ձեռք բերել սույն Ծրագրային ազդագիրը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով՝ Բանկի Գլխամասային գրասենյակում՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության 44/2 հասցեում:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ

(իրավաբանական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը _____
(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետռեգիստրի գրանցման տվյալները _____
(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման վայրի հասցեն, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը _____

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում ենք «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____
գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույն Հայտով, հավաստում ենք, որ Հայտը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ծրագրային ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել Բանկի թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա մեր և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից	
Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ	
Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ	**քանակը թվերով**
Ստորագրություն	
Անուն Ազգանուն	(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները _____ հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են փվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արտարժութային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ

(իրավաբանական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը _____
(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետռեգիստրի գրանցման տվյալները _____
(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման վայրի հասցեն, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը _____

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում ենք «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____
գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ԱՄՆ դոլարով/Եվրոյով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

_____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույն Հայտով, հավաստում ենք, որ Հայտը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ծրագրային ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել Բանկի թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա մեր և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ _____

քանակը թվերով

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները _____ հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հավելված 2 «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ
(ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ

(ֆիզիկական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Հայտ ներկայացնողի անվանումը _____
(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի համարը _____
(փաստաթղթի համար)

Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Գրանցման վայրի հասցեն, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում եմ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____
գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Հավաստում եմ, որ Հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաստատում եմ, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա իմ և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ իմ կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ _____

քանակը թվերով

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(ստորագրող անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները _____ հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

<u>Հավելված 2</u> «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ (ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)

ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արտարժութային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ

(ֆիզիկական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Հայտ ներկայացնողի անվանումը _____
(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի համարը _____
(փաստաթղթի համար)

Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Գրանցման վայրի հասցեն, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում եմ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____
գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ԱՄՆ դոլարով/Եվրոյով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Հավաստում եմ, որ Հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաստատում եմ, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա իմ և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ իմ կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ _____

քանակը թվերով


Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(ստորագրող անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները _____ հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են փվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

<u>Հավելված 3</u> Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը



ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

____ _____ 20__թ.

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ

Անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել Ծրագրային ազդագիրը (գրանցված է ---------- 20 թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2 հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր:
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը, օրինակ, 2016 թ-ի 1-ին թողարկման համար՝ 2016-1)	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Մանրամասն ներկայացված է Ծրագրային ազդագրի 3.3.6 կետում՝ «Տեղեկատվութուն պարտատոմսերի դասակարգման վերաբերյալ»
6.	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո
7.	Առաջարկի գինը	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

8.	Անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ/100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար/100 (մեկ հարյուր) Եվրո
9.	Քանակը	Համապատասխան Թողարկման ծավալի և անվանական արժեքի, այսինքն՝ Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ 07.02.2023թ. Խորհրդի նիստի թիվ 02 որոշում
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Արժեկտրոնի տոկոսադրույքը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ, իսկ վճարումները իրականացվելու են եռամսյակային պարբերականությամբ
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի/Փաստացի (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
20.	Ճրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	Պարտատոմսերը մարվում են անվանական արժեքով՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ/100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար/100 (մեկ հարյուր) Եվրո
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	
	Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	Չի նախատեսվում
	Այլ տեղեկություններ	

25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	
	Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲ ընկերությունը: Առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել:
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանիշ չունեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Թողարկողը (երաշխավորողը) պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը (երաշխավորողը) հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Կարեն Եղիազարյան	**Վարչության նախագահ**		
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Արմեն Հակոբյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ**		
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Տաթևիկ Խաչատրյան	**Վարչության նախագահի տեղակալ**		
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Հայկ Պետրոսյան	**Վարչության նախագահի տեղակալ**		
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Լիլիթ Գաբոյան	**Վարչության նախագահի տեղակալ Ֆինանսական գծով**		
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Էմմա Ջանինյան	**Գլխավոր հաշվապահ**		
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Սմբատ Մարտիրոսյան	**Իրավաբանական վարչության պետ**		
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**

Միեր Սահակյան	Ծրագրավորման և գործառնական համակարգերի վարչության պետ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տաթևիկ Ջանոյան	ՄՌԿ բաժնի պետ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Կարեն Եղիազարյան	Վարչության նախագահ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն)x100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընհանուր ակտիվների միջին մեծություն)x100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ / Ընհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) = Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) – (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

30/09/2022

Բովանդակություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն	3
Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն	9
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն (եռամսյակային)	11
Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	14

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	15,038,266	11,539,628	5,435,352	3,979,548
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(8,481,908)	(6,773,777)	(2,802,698)	(2,468,197)
Զուտ տոկոսային եկամուտներ		**6,556,358**	**4,765,851**	**2,632,654**	**1,511,351**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	4,977,335	1,340,599	2,305,809	546,881
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(2,774,122)	(814,601)	(1,023,838)	(342,306)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		**2,203,213**	**525,998**	**1,281,971**	**204,575**
Զուտ առևտրային եկամուտ	8	21,088,860	1,307,630	5,711,262	512,091
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման գծով զուտ օգուտ		(4,730)	-	-	-
Այլ գործառնական եկամուտներ	9	1,873,773	231,253	680,031	75,665
Այլ գործառնական ծախսեր	10	(914,063)	(811,029)	(203,391)	(307,821)
Գործառնական եկամուտ		**30,803,411**	**6,019,703**	**10,102,527**	**1,995,861**
Արժեզրկման ծախս	11	(2,124,814)	(2,250,807)	33,467	(427,422)
Անձնակազմի գծով ծախսեր	12	(2,024,822)	(1,482,018)	(835,346)	(491,356)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	20	(598,605)	(566,493)	(208,939)	(193,710)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	13	(1,269,540)	(1,089,367)	(468,080)	(357,586)
Շահույթ մինչև հարկումը		**24,785,630**	**631,018**	**8,623,629**	**525,787**
Շահութահարկի գծով ծախս	14	(4,211,612)	(145,074)	(1,471,005)	(119,208)
Շահույթ ժամանակաշրջանի համար		**20,574,018**	**485,944**	**7,152,624**	**406,579**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում					
Իրական արժեքի զուտ փոփոխություն ժամանակաշրջանի ընթացքում		831,967	(712,033)	30,050	(575,115)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ		1,956	-	-	-
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		(49,068)	6,184	(16,888)	5,847
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(150,106)	128,166	(5,409)	103,521
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով օգուտ/(վնաս)		**634,749**	**(577,683)**	**7,753**	**(465,747)**
Այլ համապարփակ ֆինանսական օգուտ/(վնաս) ժամանակաշրջանի համար հարկումից հետո		**634,749**	**(577,683)**	**7,753**	**(465,747)**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք ժամանակաշրջանի համար		**21,208,767**	**(91,739)**	**7,160,377**	**(59,168)**

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հոկտեմբերի 15-ին

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ՝ Էմմա Ջանինյան

ՀՀ, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ARMENIA "EVOCABANK" CJSC
АРМЕНИЯ, «ЭВОКАБАНК» ЗАО
evocaBANK
00001182

Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	30 սեպտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	78,228,360	43,389,076
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	16	22,889,676	20,348,011
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	17	2,046,175	2,294,215
Ներդրումային արժեթղթեր	18	48,344,067	27,072,990
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	19	151,456,601	139,957,954
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	9,585,192	9,269,430
Բռնագանձված ակտիվներ	21	1,485,623	1,994,038
Այլ ակտիվներ	22	5,197,327	1,389,278
Ընդամենը՝ ակտիվներ		**319,233,021**	**245,714,992**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Բանկերի նկատմամբ պարտավորություններ	23	615,131	1,410,385
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	24	-	16,010,497
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	25	203,934,124	153,009,627
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	11,135,810	5,822,097
Այլ փոխառություններ	27	32,519,065	27,607,361
Ստորադաս փոխառություններ	28	4,116,283	4,872,881
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		3,831,008	12,910
Հետաձգված հարկային պարտավորություն	14	1,273,142	759,792
Այլ պարտավորություններ	29	3,824,061	2,433,812
Ընդամենը՝ պարտավորություններ		**261,248,624**	**211,939,362**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	30	23,000,000	20,000,000
Գլխավոր պահուստ		3,500,000	2,000,000
Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ		3,405,689	3,486,976
Իրական արժեքի պահուստ		(60,734)	(695,483)
Չբաշխված շահույթ		28,139,442	8,984,137
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**57,984,397**	**33,775,630**
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**319,233,021**	**245,714,992**

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հոկտեմբերի 15-ին

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ՝ Էմմա Ջանինյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	20,000,000	2,000,000	(695,483)	3,486,976	8,984,137	33,775,630
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-	20,574,018	20,574,018
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	(81,287)	81,287	-
Իրական արժեքի զուտ փոփոխություն ժամանակաշրջանի ընթացքում	-	-	831,967	-	-	831,967
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	-	-	1,956	-	-	1,956
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	-	-	(49,068)	-	-	(49,068)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(150,106)	-	-	(150,106)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք ժամանակաշրջանի համար	**-**	**-**	**634,749**	**(81,287)**	**20,655,305**	**21,208,767**
Բաժնետիրական կապիտալի ավելացում	3,000,000	-	-	-	-	3,000,000
Հատկացում պահուստին	-	1,500,000	-	-	(1,500,000)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	**3,000,000**	**1,500,000**	**-**	**-**	**(1,500,000)**	**3,000,000**
Հաշվեկշիռը 2022թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ	**23,000,000**	**3,500,000**	**(60,734)**	**3,405,689**	**28,139,442**	**57,984,397**

Հազար ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	20,000,000	1,000,000	(65,685)	3,594,693	9,319,394	33,848,402
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-	485,944	485,944
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	(80,940)	80,940	-
Իրական արժեքի զուտ փոփոխություն ժամանակաշրջանի ընթացքում	-	-	(712,033)	-	-	(712,033)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	-	-	6,184	-	-	6,184
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	128,166	-	-	128,166
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք ժամանակաշրջանի համար	**-**	**-**	**(577,683)**	**(80,940)**	**566,884**	**(91,739)**
Հատկացում պահուստին	-	1,000,000	-	-	(1,000,000)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	**-**	**1,000,000**	**-**	**-**	**(1,000,000)**	**-**
Հաշվեկշիռը 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ	**20,000,000**	**2,000,000**	**(643,368)**	**3,513,753**	**8,886,278**	**33,756,663**

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հոկտեմբերի 15-ին

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ՝ Էմմա Ջանինյան

ՀՀ, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ARMENIA, "EVOCABANK" CJSC
evocaBANK
00001182

Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	24,785,630	631,018
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	598,605	566,493
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	1,193	5,097
Այլ ակտիվների օտարումից զուտ օգուտ	(78,665)	(4,097)
Արժեզրկման ծախս	2,124,814	2,250,807
Տոկոսային ծախս վարձակալության գծով	63,122	61,466
Ածանցյալ ֆինանսական գործիքների վերագնահատումից զուտ վնաս/(օգուտ)	-	(67,344)
Զուտ (օգուտ)/վնաս ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(1,531,465)	339,607
Ստացվելիք տոկոսներ	(968,884)	(196,587)
Վճարվելիք տոկոսներ	900,529	448,704
***Դրամական միջոցների* հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները**	**25,894,879**	**4,035,164**
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(2,663,444)	(3,845,989)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	(1,877,734)	(3,764,526)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(29,942,890)	(19,927,677)
Բռնագանձված ակտիվներ	607,157	77,098
Այլ ակտիվներ	(3,906,437)	(288,233)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Բանկերի նկատմամբ պարտավորություններ	221,598	(1,307,358)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(15,947,495)	(3,537,841)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	66,698,380	21,925,282
Այլ պարտավորություններ	2,185,815	(65,847)
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը	**41,269,829**	**(6,699,927)**
Վճարված շահութահարկ	(30,270)	312,465
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**41,239,559**	**(6,387,462)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք	(19,741,776)	(3,260,375)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(458,553)	(459,545)
Հիմնական միջոցների վաճառք	9,114	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(20,191,215)**	**(3,719,920)**

Հազար ՀՀ դրամ

	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	3,000,000	-
Վճարված շահաբաժիններ	(571,000)	(481,842)
Թողարկված պարտքային արժեթղթեր	6,802,140	6,276,715
Այլ փոխառություններ	7,200,219	7,896,742
Վարձակալության գծով պարտավորություններ	(145,955)	(124,971)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**16,285,404**	**13,566,644**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**37,333,748**	**3,459,262**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ (ծանոթ 15)	43,389,076	37,471,183
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,483,190)	(2,219,269)
Պարտքային վնասի գծով պահուստի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(11,274)	(671)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ 15)	**78,228,360**	**38,710,505**
Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	14,069,382	11,343,041
Վճարված տոկոսներ	(7,518,257)	(6,263,607)

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հոկտեմբերի 15-ին

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ՝ Էմմա Ջանինյան



Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն (եռամսյակային)

01/07/2022-30/09/2022

Հազար ՀՀ դրամ

Նորմատիվներ

	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
Կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	23,000,000	50,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	58,188,606	30,000,000	Խախտում առկա չէ
Ն11 Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	21.22%	9.00%	Խախտում առկա չէ
Ն12 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	24.71%	12.00%	Խախտում առկա չէ
Ն21 Բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	43.80%	15.00%	Խախտում առկա չէ
Ն211 Առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	33.89%	4.00%	Խախտում առկա չէ
Ն212 ԱՄՆ դոլարով, եվրոյով և երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և ԱՄՆ դոլարով, եվրոյով, տվյալ երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	x	4.00%	Խախտում առկա չէ
Ն22 Բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	155.03%	60.00%	Խախտում առկա չէ
Ն221 Առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	107.33%	10.00%	Խախտում առկա չէ
Ն222 ԱՄՆ դոլարով, եվրոյով և երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և ԱՄՆ դոլարով, եվրոյով, տվյալ երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավո-րությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	x	10.00%	Խախտում առկա չէ
Ն23 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	362.80%	100.00%	Խախտում առկա չէ
Ն231 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն	347.47%	100.00%	Խախտում առկա չէ

	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)			
Ն232 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով)	x	100.00%	Խախտում առկա չէ
Ն24 Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	181.07%	100.00%	Խախտում առկա չէ
Ն241 Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)	184.96%	100.00%	Խախտում առկա չէ
Ն242 Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով)	x	100.00%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	7.34%	20.00%	Խախտում առկա չէ
Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	24.90%	500.00%	Խախտում առկա չէ
Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	0.34%	5.00%	Խախտում առկա չէ
Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	2.78%	20.00%	Խախտում առկա չէ
Ն51 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	3.41%	10.00%	Խախտում առկա չէ
Ն52 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	4.60%	5.00%	Խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը			
ՀՀ դրամով	x	4.00%	Խախտում առկա չէ
ԱՄՆ դոլարով	x	6% դրամով	Խախտում առկա չէ
		12% ԱՄՆ դոլարով	Խախտում առկա չէ
Եվրոյով	x	6% դրամով	Խախտում առկա չէ
		12% Եվրոյով	Խախտում առկա չէ
Այլ արժույթով	x	6% դրամով	Խախտում առկա չէ
		12% ԱՄՆ դոլարով	Խախտում առկա չէ
Արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	1.58%	10.00%	Խախտում առկա չէ
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև			

	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
առավելագույն հարաբերակցությունը՝			
ԱՄՆ դոլարով	1.51%	7.00%	Խախտում առկա չէ
Եվրոյով	0.04%	7.00%	Խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով	0.02%	7.00%	Խախտում առկա չէ
Այլ արժույթով	x	7.00%	Խախտում առկա չէ

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հոկտեմբերի 15-ին

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ՝ Էմմա Ջանինյան

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ)՝ անվանափոխված «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ն է, որը հիմնադրվել է 01.06.1990թ. և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 02.10.1991թ. ՀՀ կենտրոնական բանկ (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N27 արտոնագրային համարով:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 13 մասնաճյուղերից ինը գտնվում են Երևանում, մեկ մասնաճյուղ՝ Գյումրիում, մեկ մասնաճյուղ՝ Աբովյան քաղաքում, մեկ մասնաճյուղ՝ Վանաձոր քաղաքում:

Բանկի աշխատակիցների թիվը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կազմում է 429:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հանրապետության 44/2 փող., Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն:

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում ևՀայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

2020թ. անկումից հետո Հայաստանի տնտեսությունը թևակոխել է կայուն վերականգնման փուլ: Ակնկալվում է, որ COVID-19-ի համավարակային իրավիճակի աստիճանական բարելավումը, Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ հրադադարի մասին համաձայնագիրը, ինչպես նաև պետական և մասնավոր ներդրումների ընդլայնումը կխթանեն 2022 թվականի աճը: Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված Կառավարության ջանքերը, ՓՄՁ-ների համար ֆինանսական հասանելիության ընդլայնումը, առաջնահերթ սոցիալական ծախսերի համար հնարավորությունների ստեղծումը, ինչպես նաև կապիտալի շուկայի զարգացման ընդլայնված գործողությունների ծրագիրը նույնպես կարող են Հայաստանի տնտեսության կայունության և զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծել:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Այնուամենայնիվ, ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները

հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՄ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով բացառությամբ հողի, շինությունների որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով:
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տես 4.4.6 ծանոթագրությունում:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթ կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող) իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	30 սեպտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	405.65	480.14
ՀՀ դրամ/1 Եվրո	396.08	542.61

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Բանկն սկզբնապես ճանաչում է վարկերը և փոխատվությունները, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Բանկի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են դրանց ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման դեպքում ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակ.ները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Բանկի ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Բանկը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» կազմված է փողի ժամանակային արժեքի և պարտքային ռիսկի փոխհատուցումից, այլ ռիսկերի և ֆինանսական ակտիվի պահպանման հետ կապված ծախսերի փոխհատուցումից (օրինակ՝ իրացվելիության ռիսկ և վարչական ծախսեր), ինչպես նաև շահույթի մարժայից: Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Բանկը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք

ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Բանկը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման առանձնահատկությունները,
- վաղաժամկետ մարման և երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Բանկի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի պահանջի իրավունքի ակտիվների պայմանավորվածություններ) և
- առանձնահատկությունները, որոնք փոխում են դրամի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Բանկը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա տարածվող հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված փոխհատուցման գումարի տարբերությունը (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային բաժնային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակային օգուտ/վնաս չի ճանաչվում շահույթում կամ վնասում այդ արժեթղթերի ապաճանաչման դեպքում: Մասնակցությունն ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում, որն առաջանում է կամ պահպանվում է Բանկի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Բանկը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները:

Գործարքներում, որոնցում Բանկը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Բանկը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան սպասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են առոչինչ: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տես 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տես 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմաններով հիմնավորված նոր ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Բանկի առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

Բանկը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ
- ֆինանսական երաշխիքի պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Բանկը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք պայմանավորված են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում տեղի ունեցող դեֆոլտ առաջացնող իրադարձություններով:

Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում դեֆոլտի բոլոր հնարավոր դեպքերի հետևանքով:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Բանկը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 37.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Բանկը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Բանկը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Բանկը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Բանկը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները դեֆոլտի հավանականության, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի, դեֆոլտի ժամանակ վնասի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Դեֆոլտի հավանականություն (PD): Այն տվյալ ժամանակահատվածում դեֆոլտի հավանականության գնահատումն է: Դեֆոլտ կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակաշրջանի միայն որոշակի ժամանակահատվածում, եթե պարտականությունը նախկինում չի ապաճանաչվել և շարունակում է մնալ պորտֆելում:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD): Այն ներկայացնում է դեֆոլտի ապագա ամսաթվի դրությամբ ռիսկի ենթարկված գումարի չափի գնահատումը՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ռիսկի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսագումարների մարումը՝ անկախ նրանից պայմանագրով նախատեսված է, թե ոչ, պարտավորության սպասվող օգտագործումը և չկատարված վճարումների հաշվեգրված տոկոսները:

Վնասը դեֆոլտի ժամանակ (LGD): Այն արտահայտում է վնասի չափը, որը առաջանում է տվյալ ժամանակահատվածում վարկի դիֆոլտային կարգավիճակում: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն հույս ունի ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը: Որպես կանոն, այն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի (EAD) նկատմամբ տոկոսով:

Դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը և դեֆոլտի ժամանակ վնասը ավելի մանրամասն բացահայտվում են 37.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տես՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանասական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- էմիտենտի կամ փոխառուի էական ֆինանսական դժվարություններ,
- պայմանագրային պայմանների խախտում, օրինակ՝ դեֆոլտ կամ վճարման ուշացում,
- վարկերի կամ փոխատվությունների պայմանների այնպիսի վերանայում, որը Բանկն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորման հավանականություն,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Փոխառուի ֆինանսական դժվարությունների հետևանքով վերանայված վարկը սովորաբար դիտարկվում է որպես արժեզրկված, միայն եթե առկա չէ վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր չստանալու ռիսկը էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- երկրի կարողությունը մուտք գործել կապիտալ շուկաներ նոր պարտքի թողարկման համար:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների (FVOCI) արժեզրկումից կորուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը հավասար է իրենց իրական արժեքին: Այնուամենայնիվ, արժեզրկումից կորուստները բացահայտվում և ճանաչվում են իրական արժեքի ճշգրտման պահուստում,
- վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Վարկային պարտավորվածության չօգտագործված մասի գծով գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Բանկը գնահատում է վարկային պարտավորվածությունների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - եթե ֆինանսական գործիքը ունի ինչպես օգտագործված, այնպես էլ չօգտագործված բաղադրիչ և Բանկը հնարավորություն չունի վարկերի տրամադրման պարտավորվածության ակնկալվող պարտքային կորուստները առանձնացնել օգտագործված բաղադրիչի ակնկալվող պարտքային կորուստներից, ապա Բանկը ներկայացնում է ակնկալվող պարտքային կորուստների համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի համախառն գումարի նկատմամբ արժեզրկումից կորուստների ցանկացած գերազանցում ներկայացվում է պահուստի տեսքով:
  - Յուրաքանչյուր երաշխիքի վերաբերյալ Բանկի պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխիքի պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստների շրջանակում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Բանկը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Բանկի պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, ինչպես նաև մինչև 90 օր ժամկետով ավանդներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5 Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Բանկերի նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Վարկերը և փոխատվությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- պարտքային և բաժնային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորոշվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և վերադարձ
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական

արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

4.8 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է հետգնման պայմանագերերի գծով վճարվելիք գումարներ հոդվածում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես հակադարձ հետգնման պայմանագերերի գծով ստացվելիք գումարներ հոդվածում: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերը ճանաչվում են «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» հոդվածում, իսկ համապատասխան պարտավորությունն արտացոլվում է «Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ» հոդվածում:

4.9 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.10 Վարձակալություն

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բանկը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բանկին,
- Բանկն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Բանկն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բանկն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բանկը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

4.11 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքերը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	40	2.5
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-8	100-12.5
Փոխա-դրա-միջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	5-8	20-12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կիոսեն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Հողի և շինությունների վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից:

Հիմնական միջոցների օգտագործմանը զուգահեռ, տվյալ ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.12 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացում, և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.13 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.14 Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

4.15 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կենտրոնական բանկի, ֆինանսական կազմակերպությունների, հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Երբ Բանկը գնում է իրեն պատկանող արժեթղթերը, դրանք դուրս են գրվում հաշվեկշռից, և հաշվեկշռային արժեքի ու վճարված գումարի տարբերությունն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.16 Ֆինանսական երաշխիքներ և վարկային պարտավորություններ

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիք տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Վարկային պարտավորվածությունները նախապես որոշված պայմաններով և ժամկետներով վարկեր տրամադրելու պարտավորվածություններն են:

Ֆինանսական երաշխիքները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՄ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՄ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխիքների և վարկային պարտավորվածությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.17 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխիքների և վարկային պարտավորվածությունների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.17 ծանոթագրությունում:

4.18 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.4.2 ծանոթագրությունը):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում կանխատեսվող տեղեկատվության

ներառումը (տես 37.1.2 ծանոթագրություն), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես 4.4.6 ծանոթագրությունը):

6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Հաճախորդներին տրված վարկեր	10,961,541	9,110,293	3,760,330	3,050,507
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	840,025	1,282,707	166,841	475,633
Հակադարձ ռեպո գործառնություններ	1,538,628	1,070,957	579,713	430,034
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	68,896	74,386	35,790	22,670
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,627,302	-	891,856	-
Այլ	1,874	1,285	822	704
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**15,038,266**	**11,539,628**	**5,435,352**	**3,979,548**
Հաճախորդների հաշիվներ	5,670,250	4,608,133	1,895,011	1,603,622
Ռեպո գործառնություններ	604,032	780,491	79,992	328,434
Ստորադաս փոխառություն	301,944	344,292	92,732	111,254
Այլ փոխառություններ	1,333,557	691,305	518,102	282,233
Թողարկված պարատոմսեր	473,544	210,267	188,835	93,191
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	35,385	77,548	6,257	29,410
Տոկոսային ծախս վարձակալության գծով	63,122	61,466	23,389	20,030
Այլ	74	275	(1,620)	23
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	**8,481,908**	**6,773,777**	**2,802,698**	**2,468,197**

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	832,636	433,200	372,081	181,210
Վճարային քարտերով գործառնություններ	1,493,311	709,036	632,745	299,806
Դրամարկղային գործառնություններ	593,594	103,833	343,058	39,906

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	45,958	73,035	17,303	20,414
Կանխիկ անկանխիկ արտարժույթի փոխարկումներ	2,009,420	7,083	941,466	2,352
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	2,416	14,412	(844)	3,193
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	**4,977,335**	**1,340,599**	**2,305,809**	**546,881**
Կանխիկ անկանխիկ արտարժույթի փոխարկումներ	1,165,798	88,503	327,028	38,805
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	411,528	95,781	150,099	36,187
Վճարային քարտերով գործառնություններ	1,065,856	610,522	427,975	261,194
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	1,203	15,856	106	4,879
Այլ ծախսեր	129,737	3,939	118,630	1,241
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	**2,774,122**	**814,601**	**1,023,838**	**342,306**

8 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտ	21,083,415	1,236,806	5,707,905	511,591
Զուտ եկամուտ ածանցյալ գործիքների վերագնահատումից	-	67,344	-	-
Շահույթ կամ վնասի միջոցով իրական արժեքոցվ չափվող արժեթղթերի առք ու վաճառքից զուտ եկամուտ	6,014	3,480	3,357	500
Զուտ վնաս ածանցյալ գործիքների իրացումից	(569)	-	-	-
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**21,088,860**	**1,307,630**	**5,711,262**	**512,091**

9 Այլ գործառնական եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Ստացված տույժեր և տուգանքներ	139,208	182,592	47,285	54,618
Եկամուտներ ակտիվներին վերաբերող շնորհներից	1,556	1,557	519	520
Շահաբաժիններից եկամուտ	3,047	-	3,047	-
Այլ ակտիվների վաճառքից զուտ եկամուտ	78,665	4,097	21,729	3,507
Զուտ օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	1,531,465	-	528,440	-
Այլ	119,832	43,007	79,011	17,020
Ընդամենը այլ գործառնական եկամուտներ	**1,873,773**	**231,253**	**680,031**	**75,665**

10 Այլ գործառնական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով ծախսեր	353,243	262,009	111,087	101,766
Զուտ վնաս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	-	339,607	-	133,764
Սպառողական վարկերի վաղաժամկետ մարումից վերադարձման ծախսեր	314,993	-	2,368	-
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս	-	-	-	-
Ինկասացիոն ծախսեր	27,046	21,313	12,257	7,241
Ֆինանսական հաշտարարի գծով ծախսեր	18,505	16,299	6,168	5,433
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից զուտ վնաս	1,193	5,097	1,193	-
Վարկային ռեգիստրի և այլ գործառնական համակարգերի օգտագործման ծախսեր	67,631	69,582	22,464	22,079
Քարտերի անվանագրման և առաքման ծախսեր	30,956	17,293	15,479	3,758
Վարկերի զիջման ծախսեր	233	8,190	(13)	441
Այլ	100,263	71,639	32,388	33,339
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	**914,063**	**811,029**	**203,391**	**307,821**

11 Արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,274	671	3,572	619
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,508	3,173	1,310	1,279
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	8,538	1,089	11,104	(9,601)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(49,068)	6,184	(16,888)	5,847
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	70,022	-	18,711	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	1,984,722	2,220,853	(93,810)	439,444
Այլ ակտիվներ	27,325	2,866	16,484	447
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	70,493	15,971	26,050	(10,613)
Ընդամենը արժեզրման ծախս	**2,124,814**	**2,250,807**	**(33,467)**	**427,422**

12 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	1,930,286	1,414,851	794,041	451,824
Անձնակազմի ուսուցման ծախսեր	25,308	16,313	6,447	7,644
Անձնակազմի գծով այլ ծախսեր	69,228	50,854	34,858	31,888
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**2,024,822**	**1,482,018**	**835,346**	**491,356**

13 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Գովազդի ծախսեր	234,351	246,578	85,988	82,763
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	159,675	121,235	59,654	39,629
Ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	229,851	169,665	85,667	59,669
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	43,373	41,148	15,784	14,122
Ներկայացուցչական և կազմակերպչական ծախսեր	66,261	56,027	31,125	17,389
Անվտանգության գծով ծախսեր	79,060	75,016	27,426	25,602
Գրասենյակային ծախսեր	61,620	50,384	26,504	16,433
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	75,424	62,039	23,957	17,276
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	70,060	51,328	26,642	14,901
Ակտիվների կարճաժամկետ վարձակալության ծախսեր	53,409	33,818	19,677	13,535
Ապահովագրության գծով ծախսեր	48,433	46,837	16,519	15,653
Վարկերի վերադարձման գծով ծախսեր	120,351	120,056	40,806	45,158
Այլ	27,672	15,236	8,331	(4,544)
Ընդամենը այլ ընդհանուր վարչական ծախսեր	**1,269,540**	**1,089,367**	**468,080**	**357,586**

14 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Ընթացիկ հարկի գծով ծախս	3,848,368	-	1,443,611	-
Հետաձգված հարկ	363,244	145,074	27,394	119,208
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**4,211,612**	**145,074**	**1,471,005**	**119,208**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2021թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև:

Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% (2021թ.՝ 18%) հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ

	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինանամսյա ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինանամսյա ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	**24,785,630**		**631,018**	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով	4,461,413	18.0	113,583	18.0
(Չհարկվող եկամուտներ)/Չնվազեցվող ծախսեր	31,958	0.1	8,310	1.3
Արտարժույթի (դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	(281,759)	(1.1)	35,303	5.6
Զուտ (օգուտ)/վնաս ածանցյալ գործիքների վերագնահատումից	-	-	(12,122)	(1.9)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**4,211,612**	**17.0**	**145,074**	**23.0**

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ

				30 սեպտեմբերի 2022		
	1 հունվարի 2022	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(4,951)	3,503	-	(1,448)	-	(1,448)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(299)	1,236	-	937	937	-
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	(653)	2,879	-	2,226	2,226	-
Ներդրումային արժեթղթեր	169,819	8,912	(150,106)	28,625	28,625	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(177,216)	(411,280)	-	(588,496)	-	(588,496)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(736,357)	24,726	-	(711,631)	-	(711,631)
Այլ ակտիվներ	(1,194)	(5,748)	-	(6,942)	-	(6,942)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(8,139)	(395)	-	(8,534)	-	(8,534)
Այլ փոխառություններ	(18,805)	712	-	(18,093)	-	(18,093)
Ստորադաս փոխառություններ	-	(42)	-	(42)	-	(42)
Այլ պարտավորություններ	18,003	12,253	-	30,256	30,256	-
Հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	**(759,792)**	**(363,244)**	**(150,106)**	**(1,273,142)**	**62,044**	**(1,335,186)**

Հազար ՀՀ դրամ

	1 հունվարի 2021	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած) Զուտ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(8,685)	3,734	-	(4,951)	-	(4,951)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(30,950)	30,651	-	(299)	-	(299)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	950	(1,603)	-	(653)	-	(653)
Ներդրումային արժեթղթեր	31,864	1,364	136,591	169,819	169,819	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	127,103	(304,319)	-	(177,216)	-	(177,216)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(772,237)	35,880	-	(736,357)	-	(736,357)
Այլ ակտիվներ	(1,336)	142	-	(1,194)	-	(1,194)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(5,338)	(2,801)	-	(8,139)	-	(8,139)
Այլ փոխառություններ	174	(18,979)	-	(18,805)	-	(18,805)
Ստորադաս փոխառություններ	(52)	52	-	-	-	-
Այլ պարտավորություններ	21,162	(3,159)	-	18,003	18,003	-
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	16,390	(16,390)	-	-	-	-
Հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	**(620,955)**	**(275,428)**	**136,591**	**(759,792)**	**187,822**	**(947,614)**

Հետաձգված հարկի կիրառելի դրույքը կազմում է 18 % (2021: 18%).

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ

	30 սեպտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	56,748,023	31,280,861
Կանխիկ դրամական միջոցներ	17,953,419	11,023,309
Թղթակցային հաշիվներ բանկերում	3,542,503	1,089,217
	78,243,945	**43,393,387**
Արժեզրկումից պահուստներ դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով	(15,585)	(4,311)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**78,228,360**	**43,389,076**

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք 2022թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 4%-ի (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4%) և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18%) չափով: Ընդ որում՝ 2019թ. հունիսից բանկերը արտարժույթով ներգրաված միջոցների 10%-ը պահուստավորում են ՀՀ դրամով և 8%-ը՝ արտարժույթով: Այդ միջոցները 2022թ.

սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմում են 28,064,774 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 21,141,006 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2022թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	4,311	3,998
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(4,311)	(3,998)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	15,585	4,669
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ սեպտեմբերի 30-ի դրությամբ	**15,585**	**4,669**

16 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

Հազար ՀՀ դրամ	30 սեպտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Հակադարձ հետգնման պայմանագրեր բանկերի հետ	1,626,857	-
Հակադարձ հետգնման պայմանագրեր այլ ֆինանսական կազմակերպությունների հետ	21,276,510	20,360,194
	22,903,367	**20,360,194**
Արժեզրկումից պահուստներ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների գծով	(13,691)	(12,183)
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**22,889,676**	**20,348,011**

2022թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային կողմ (2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի մեկ պայմանագրային կողմ), որի մնացորդը գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդպիսի պայմանագրերի զուտ գումարը կազմում էր 4,174,783:

Հակադարձ ռեպո համաձայնագրերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող	12,183	9,967

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան
	Փուլ 1	Փուլ 1
պարտքային կորուստների պահուստ		
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(12,183)	(9,967)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	13,691	13,140
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ սեպտեմբերի 30-ի դրությամբ	**13,691**	**13,140**

Հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի համախառն արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	30 սեպտեմբերի 2022		31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսեր	24,054,138	22,903,367	21,926,478	20,360,194
Ընդամենը գրավադրված ակտիվներ և հակադարձ ռեպո պայմանագրերով տրամադրված վարկեր	**24,054,138**	**22,903,367**	**21,926,478**	**20,360,194**

2022թ. սեպտեմբերի 30-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հակադարձ ռեպո պայմանագրերով որպես գրավ ստացած և ռեպո պայմանագրերի ներքո վերագրավադրված արժեթղթեր:

17 Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	30 սեպտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Բանկերին տրամադրված վարկեր	125,800	870,896
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ	-	558,770
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	632,000	624,500
Դեպոնացված միջոցներ այլ բանկերում	122,733	245,133
Կանոնավոր գնման պայմանագրեր – սփոթ գործարքներ արտարժույթով	1,179,264	-
	2,059,797	**2,299,299**
Արժեզրկումից պահուստներ բանկերին տրված վարկեր և փոխատվությունների գծով	(13,622)	(5,084)
Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	**2,046,175**	**2,294,215**

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2022թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ դեպոնացված գումարը բանկերում իրենից ներկայացնում է Master Card վճարային համակարգում անդամակցության դիմաց սառեցված ավանդ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

2022թ. սեպտեմբերի 30-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի ոչ մի բանկի տրված միջոցներ, որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Բանկերի տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան-ջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան-ջան
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	5,084	10,892
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	8,538	(5,779)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	-	6,868
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ սեպտեմբերի 30-ի դրությամբ	**13,622**	**11,981**

18 Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	30 սեպտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր		
ՀՀ Պետական պարտատոմսեր	39,768,982	3,638,825
Ոչ պետական պարտատոմսեր	971,351	-
Արժեզրկումից պահուստ	(77,602)	(7,580)
Ընդամենը ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	**40,662,731**	**3,631,245**

Ամորտիզացված արժեքով հաշվառվող չափվող ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան-ջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան-ջան
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	7,580	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(412)	-
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	70,434	-
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ սեպտեմբերի 30-ի դրությամբ	**77,602**	**-**

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

Հազար ՀՀ դրամ	30 սեպտեմբերի 2022		31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
Պետական պարտատոմսեր	6.8-11.2	2024-2037	9.5-10.5	2024-2031
Ոչ պետական պարտատոմսեր	9.0-9.5	2025	-	-

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	30 սեպտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ Պետական պարտատոմսեր	7,166,468	5,385,976
Ոչ պետական պարտատոմսեր	472,043	1,240,328
Բաժնային գործիքներ	42,825	42,825
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	**7,681,336**	**6,669,129**
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ Պետական պարտատոմսեր	-	16,772,616
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	**-**	**16,772,616**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	71,920	79,469
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(55,824)	(7,223)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	6,756	13,407

Հազար ՀՀ դրամ	2022թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան-ջան	2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված իննամսյա ժամանակաշրջան-ջան
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ սեպտեմբերի 30-ի դրությամբ	**22,852**	**85,653**

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Բանկը ժամանակաշրջանի ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	30 սեպտեմբերի 2022		31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
Պետական պարտատոմսեր	6.4-10.8	2022-2023	6.4-10.0	2022-2037
Ոչ պետական պարտատոմսեր	9.0-12.0	2022-2025	7.5-11.0	2022-2049

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերում ներառված բաժնային չգնանշվող արժեթղթերը ներկայացվում են ստորև.

Անվանումը	Գրանցման երկիրը	Վերահսկվող %		Հազար ՀՀ դրամ	
		30 սեպտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)	30 սեպտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	1.25	1.25	10,717	10,717
ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ	Հայաստանի Հանրապետություն	5.90	5.90	32,108	32,108
				42,825	**42,825**

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ այս գործիքների գնահատված իրական արժեքը մոտարկում է դրանց սկզբնական արժեքին 2022թ. սեպտեմբերի 30-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

19 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	30 սեպտեմբերի 2022			31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշիռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշիռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	54,015,888	(154,253)	53,861,635	40,868,629	(119,218)	40,749,411
Սպառողական վարկեր	18,888,961	(864,604)	18,024,357	23,903,937	(1,352,611)	22,551,326
Օվերդրաֆտ	1,584,223	(69,197)	1,515,026	1,678,117	(94,140)	1,583,977
Առևտրային վարկեր						
Շինարարություն	16,465,442	(148,526)	16,316,916	12,278,117	(165,819)	12,112,298
Արդյունաբերություն	13,576,636	(609,582)	12,967,054	15,450,816	(84,132)	15,366,684
Առևտուր	19,822,084	(912,039)	18,910,045	22,564,464	(168,402)	22,396,062
Ֆինանսական ծառայություններ	8,570,090	(95,548)	8,474,542	4,215,242	(63,426)	4,151,816
Այլ	21,449,405	(62,379)	21,387,026	21,111,164	(64,784)	21,046,380
Ընդամենը	**154,372,729**	**(2,916,128)**	**151,456,601**	**142,070,486**	**(2,112,532)**	**139,957,954**

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել վարկային պարտավորվածության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2022թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկը չունի վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց խումբ, որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը(2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 17,518,662 հազար դրամ ՝ տրամադրված թվով չորս վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	30 սեպտեմբերի 2022			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	64,056,358	1,240,312	1,154,013	66,450,683
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	36,601,458	-		36,601,458
Մարված ակտիվներ	(10,478,406)	(141,575)	(114,662)	(10,734,643)
- Փոխանցում Փուլ 1	132,531	(132,531)	-	-

Հազար ՀՀ դրամ

	30 սեպտեմբերի 2022			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
- Փոխանցում Փուլ 2	(363,187)	428,138	(64,951)	-
- Փոխանցում Փուլ 3	(765,862)	(695,440)	1,461,302	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(16,272,561)	(93,408)	(489,379)	(16,855,348)
Վերականգնում	-	-	699,551	699,551
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,672,629)	(1,672,629)
Մնացորդը սեպտեմբերի 30-ի դրությամբ	**72,910,331**	**605,496**	**973,245**	**74,489,072**

Հազար ՀՀ դրամ

	30 սեպտեմբերի 2022			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	74,971,418	217,983	430,402	75,619,803
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	55,981,711	-	-	55,981,711
Մարված ակտիվներ	(14,141,115)	(2,566)	(59,846)	(14,203,527)
- Փոխանցում Փուլ 1	-	-	-	-
- Փոխանցում Փուլ 2	(3,602,222)	3,602,222	-	-
- Փոխանցում Փուլ 3	(4,579,716)	(214,002)	4,793,718	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(35,482,319)	(616,446)	(1,207,517)	(37,306,282)
Վերականգնում	-	-	113,256	113,256
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(321,304)	(321,304)
Մնացորդը սեպտեմբերի 30-ի դրությամբ	**73,147,757**	**2,987,191**	**3,748,709**	**79,883,657**

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	52,174,460	1,509,383	3,266,392	56,950,235
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	45,683,651	96,297	57,382	45,837,330
Մարված ակտիվներ	(29,370,194)	(380,308)	(710,028)	(30,460,530)
- Փոխանցում Փուլ 1	2,869,226	(1,257,948)	(1,611,278)	-
- Փոխանցում Փուլ 2	(150,620)	1,152,909	(1,002,289)	-
- Փոխանցում Փուլ 3	-	(141,862)	141,862	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(7,150,165)	261,841	5,084,351	(1,803,973)
Վերականգնում	-	-	1,409,422	1,409,422
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(5,481,801)	(5,481,801)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**64,056,358**	**1,240,312**	**1,154,013**	**66,450,683**

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	56,863,278	1,407,049	586,170	58,856,497
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	65,284,002	19,039	8,324	65,311,365
Մարված ակտիվներ	(41,944,144)	(1,240,075)	(123,323)	(43,307,542)
- Փոխանցում Փուլ 2	(3,605,784)	3,605,784	-	-
- Փոխանցում Փուլ 3	(4,657,522)	(214,002)	4,871,524	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(52,472,593)	(734,734)	(1,044,134)	(54,251,461)
Վերականգնում	-	-	3,129	3,129
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(341,305)	(341,305)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**80,549,668**	**2,871,050**	**3,816,454**	**87,237,172**

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	52,174,460	1,509,383	3,266,392	56,950,235
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	45,683,651	96,297	57,382	45,837,330
Մարված ակտիվներ	(29,370,194)	(380,308)	(710,028)	(30,460,530)
- Փոխանցում Փուլ 1	2,869,226	(1,257,948)	(1,611,278)	-
- Փոխանցում Փուլ 2	(150,620)	1,152,909	(1,002,289)	-
- Փոխանցում Փուլ 3	-	(141,862)	141,862	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(7,150,165)	261,841	5,084,351	(1,803,973)
Վերականգնում	-	-	1,409,422	1,409,422
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(5,481,801)	(5,481,801)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**64,056,358**	**1,240,312**	**1,154,013**	**66,450,683**

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	56,863,278	1,407,049	586,170	58,856,497
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	65,284,002	19,039	8,324	65,311,365
Մարված ակտիվներ	(41,944,144)	(1,240,075)	(123,323)	(43,307,542)
- Փոխանցում Փուլ 1	167,132	(60,125)	(107,007)	-
- Փոխանցում Փուլ 2	(125,073)	143,065	(17,992)	-
- Փոխանցում Փուլ 3	-	(125,354)	125,354	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(5,273,777)	74,384	(48,729)	(5,248,122)
Վերականգնում	-	-	110,787	110,787

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դուրսգրում տարվա ընթացքում		-	(103,182)	(103,182)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**74,971,418**	**217,983**	**430,402**	**75,619,803**

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	534,814	430,426	600,729	1,565,969
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- Փոխանցում Փուլ 1	115,420	(83,852)	(31,568)	-
- Փոխանցում Փուլ 2	(7,601)	25,305	(17,704)	-
- Փոխանցում Փուլ 3	(23,030)	(210,756)	233,786	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(346,658)	(27,351)	530,728	156,719
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	158,593	5,886	53,707	218,186
Վերականգնում	-	-	1,066,823	1,066,823
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(2,102,026)	(2,102,026)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**431,538**	**139,658**	**334,475**	**905,671**

Հազար ՀՀ դրամ	2022թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	388,223	60,766	97,574	546,563
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- Փոխանցում Փուլ 1	9	-	(9)	-
- Փոխանցում Փուլ 2	(33,110)	33,110	-	-
- Փոխանցում Փուլ 3	(34,744)	(60,471)	95,215	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(169,759)	208,984	1,427,477	1,466,702
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	162,246	298	2,410	164,954
Վերականգնում	-	-	3,129	3,129
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(341,305)	(341,305)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**312,865**	**242,687**	**1,284,491**	**1,840,043**

Հազար ՀՀ դրամ

	2021թ. (աուդիտ անցած)			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	716,271	770,661	2,044,324	3,531,256
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- Փոխանցում Փուլ 1	74,502	(29,115)	(45,387)	-
- Փոխանցում Փուլ 2	(70,529)	600,661	(530,132)	-
- Փոխանցում Փուլ 3	-	(76,748)	76,748	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(362,273)	(842,940)	3,114,454	1,909,241
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	176,843	7,907	13,101	197,851
Վերականգնում	-	-	1,409,422	1,409,422
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(5,481,801)	(5,481,801)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**534,814**	**430,426**	**600,729**	**1,565,969**

Հազար ՀՀ դրամ

	2021թ. (աուդիտ անցած)			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	276,832	62,187	220,109	559,128
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				-
- Փոխանցում Փուլ 1	511	(142)	(369)	-
- Փոխանցում Փուլ 2	(1,373)	2,442	(1,069)	-
- Փոխանցում Փուլ 3	-	(112,315)	112,315	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(84,780)	108,594	(242,743)	(218,929)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	197,033	-	1,726	198,759
Վերականգնում	-	-	110,787	110,787
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(103,182)	(103,182)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**388,223**	**60,766**	**97,574**	**546,563**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 20,542,703 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14,902,415 հազար դրամ) ծառայում են որպես գրավ այլ փոխառությունների դիմաց:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 36 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 37 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 33 ծանոթագրությունում:

20 Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	Հող և շենքեր	Վարձակալ. հիմն. միջ. գծով կապ. ներդր.	Համա-կարգ-չային տեխնիկա և կապի սարքա-վորումներ	Փոխա-դրա-միջոցներ	Գրասեն-յակային և այլ հիմնական միջոցներ	Հիմն. միջ. գծով կապ. Ներ-դրում-ներ	Ոչ նյութա-կան ակտիվ-ներ	Օգտա-գործման իրավունք հանդի-սացող ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք									
2021թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտ անցած)	6,748,877	199,043	843,906	159,610	1,966,242	36,094	627,375	1,026,593	11,607,740
Ավելացում	9,099	12,133	77,019	6,457	290,274	9,252	112,291	-	516,525
Վերադասակարգումներ	45,346	1,850	709	-	(2,559)	(45,346)	-	-	-
Օտարում	-	-	(6,382)	-	(220,523)	-	(61,809)	-	(288,714)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,803,322**	**213,026**	**915,252**	**166,067**	**2,033,434**	**-**	**677,857**	**1,026,593**	**11,835,551**
2022թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտ անցած)	6,803,322	213,026	915,252	166,067	2,033,434	-	677,857	1,026,593	11,835,551
Ավելացում	-	35,005	236,071	30,654	291,377	-	226,250	466,121	1,285,478
Վերադասակարգումներ	(2,342)	-	-	-	2,342	-	-	-	-
Օտարում	(170,500)	-	(342)	(9,428)	(10,829)	-	(17,685)	-	(208,784)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,630,480**	**248,031**	**1,150,981**	**187,293**	**2,316,324**	**-**	**886,422**	**1,492,714**	**12,912,245**
Կուտակված մաշվածություն									
2021թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտ անցած)	123,228	49,762	347,210	68,854	1,147,828	-	208,648	144,406	2,089,936
Տարվա ծախս	216,614	13,456	128,428	17,506	204,033	-	63,179	116,583	759,799
Վերադասակարգումներ	-	-	(334)	-	334	-	-	-	-
Օտարում	-	-	(6,381)	-	(215,492)	-	(61,741)	-	(283,614)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**339,842**	**63,218**	**468,923**	**86,360**	**1,136,703**	**-**	**210,086**	**260,989**	**2,566,121**
2022թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտ անցած)	339,842	63,218	468,923	86,360	1,136,703	-	210,086	260,989	2,566,121
Տարվա ծախս	213,925	14,154	126,479	19,187	203,916	-	91,734	154,280	823,675
Վերադասակարգումներ	(1,057)	-	-	-	1,057	-	-	-	-
Օտարում	(8,525)	-	(342)	(9,426)	(1,533)	-	(17,685)	-	(37,511)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**544,185**	**77,372**	**595,060**	**96,121**	**1,340,143**	**-**	**284,135**	**415,269**	**3,352,285**
Հաշվեկշռային արժեք									
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,463,480**	**149,808**	**446,329**	**79,707**	**896,731**	**-**	**467,771**	**765,604**	**9,269,430**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,086,295**	**170,659**	**555,921**	**91,172**	**976,181**	**-**	**602,287**	**1,077,445**	**9,559,960**

2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվներում ներառված են թվային համակարգերի վրա կատարված ներդրումները 192,313 հազար դրամ հաշվեկշռային արժեքով, 2022-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ այդպիսիք չկան

Օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվներ

Օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվները իրենցից ներկայացնում են գրասենյակային տարածքներ, որոնք վարձակալվել են Բանկի կողմից մասնաճյուղերում գործունեություն իրականացնելու համար:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սահմանափակումներ

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Պայմանագրային պարտավորություններ

2022թ. դեկտեմբերի 31-ի Բանկն չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում ներդրումներ կատարելու նպատակով (2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ չունի պայմանագրային պարտավորություններ):

Ակտիվների վերագնահատում

Բանկի սեփականությունը հանդիսացող հողատարածքների և շենքերի վերագնահատումը կատարվել է 2020թ-ի հունիսի 1-ի դրությամբ անկախ գնահատող կազմակերպության կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից աճ 2,661,164 հազար դրամ գումարով և վնաս 5,687 հազար դրամով: Ղեկավարությունը հիմք է ընդունել անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Բանկի ղեկավարության գնահատմամբ 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց իրական արժեքից:

Եթե վերագնահատված շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի մոդելի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքները կունենան հետևյալ տեսքը՝

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Սկզբնական արժեք	3,093,660	3,266,502
Կուտակված մաշվածություն	(1,128,843)	(1,055,431)
Հաշվեկշիռային արժեք	**1,964,817**	**2,211,071**

21 Բռնագանձված ակտիվներ

Տարվա ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Անշարժ գույք	1,477,944	1,994,038
Այլ ակտիվներ	8,216	-
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	**1,486,160**	**1,994,038**

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում ընթացքում Բանկի կողմից բռնագանձվել է 51,649 հազար ՀՀ դրամի գույք հաճախորդներին տրված վարկերի գրավների մասով, 2021թ. դեկտեմբերի 31-ին՝ 79,263 հազար ՀՀ դրամ:

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի հանած վաճառքի ծախսումներից նվազագույնով:

22 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	1,518,273	1,061,047
Կարճաժամկետ պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,042,090	35,709
Դրամական փոխանցումների համակարգերի գծով ստացվելիք գումարներ	493,553	132,306
Այլ ֆինանսական ակտիվներ	**4,053,916**	**1,229,062**
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(13,790)	(6,135)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**4,040,126**	**1,222,927**
Կանխավճարներ	438,893	78,273
Պահեստ	93,315	31,552
Կանխավճարներ հարկերի գծով	1,861	55
Այլ	169,551	56,471
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**703,620**	**166,351**
Ընդամենը այլ ակտիվներ	**4,743,746**	**1,389,278**

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ

	2022թ.	2021թ. (աուդիտ անցած)
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	6,135	1,370
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(6,135)	(1,370)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	16,989	7,499
Զուտ դուրսգրում	(3,199)	(1,364)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**13,790**	**6,135**

23 Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Վարկեր բանկերից	-	1,400,626
Այլ վճարվելիք գումարներ բանկերին	274,694	13
Կանոնավոր գնման պայմանագրեր – սփոթ գործարքներ արտարժույթով	-	9,746
Ընդամենը բանկերի նկատմամբ պարտավորություններ	**274,694**	**1,410,385**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նման բանկ չկար), որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

24 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Ռեպո համաձայնագրեր ԿԲ-ի հետ	-	16,010,497
Ընդամենը հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**-**	**16,010,497**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

25 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	59,516,233	28,936,398
Ժամկետային ավանդներ	22,163,351	21,245,596
	81,679,584	**50,181,994**
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	44,214,161	16,287,758
Ժամկետային ավանդներ	103,369,235	86,539,875
	147,583,396	**102,827,633**
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**229,262,980**	**153,009,627**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական/ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են 3,778,314 հազար դրամ գումարով (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,469,367 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի կապակցված հաճախորդների խումբ, որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ չորս): 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդները կազմում են 21,419,441 հազար դրամ:

26 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Թողարկված պարտքային արժեթղթեր	10,895,281	5,822,097
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	**10,895,281**	**5,822,097**

2022թ.-ի մարտի 28-ին Բանկը բաց տեղաբաշխմամբ թողարկել է պարտատոմսեր 2 մլրդ. ՀՀ դրամ և 10 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով: Պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են:

Պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը՝ 11% և 5% է, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ եռամսյակային, շրջանառության ժամկետը՝ 30 ամիս:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային կողմ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նման բանկ չկար), որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

27 Այլ փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Փոխառություններ վարկային կազմակերպություններից	16,165,885	12,125,174
Ֆիզիկական անձանց կողմից ստացված փոխառություններ	3,515,893	5,448,416
Փոխառություններ ՀՀ ԿԲ-ից	4,376,818	2,777,241
Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	9,037,740	7,256,530
Ընդամենը այլ փոխառություններ	**33,096,336**	**27,607,361**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երեք կազմակերպությունների խումբ, որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ չորս խումբ): 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդները կազմում են 22,291,52 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 24,912,541 հազար դրամ):

Ֆիզիկական անձանց կողմից ստացված փոխառությունները՝ Բանկի կապված մեկ անձից ստացված գումարներն են (ծանոթագրություն 33):

28 Ստորադաս փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Ֆիզիկական անձանց կողմից ստացված ստորադաս փոխառություն	3,993,514	4,872,881
Ընդամենը ստորադաս փոխառություն	**3,993,514**	**4,872,881**

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառության համաձայնագիր, որը Բանկի անվճարունակության դեպքում դասվում է երկրորդական Բանկի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

2016թ. ընթացքում Բանկը կապակցված անձից ստացել է 10,000 հազար ԱՄՆ դոլարի չափով ստորադաս փոխառություն, որի մարման ժամկետը սահմանված է 2031 թվականը: Տոկոսադրույքը կազմում է 9% (Տես ծանոթագրություն 33):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչինչ):

29 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Վարձակալության գծով պարտավորություններ	1,166,032	825,593
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	267,037	195,867
Պարտավորություններ շահաբաժինների գծով	620,110	571,000
Վճարվելիք գումարներ պետական աջակցության ծրագրերի շրջանակներում	29,483	28,480
Վճարվելիք գումարներ	870,732	569,694
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**2,953,394**	**2,190,634**
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	743,661	186,112
Ակտիվներին վերաբերող շնորհներ	39,409	41,483
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ ֆինանսական	80,560	15,583
Այլ	864	-
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	864,494	243,178
Ընդամենը այլ պարտավորություններ	**3,817,888**	**2,433,812**

Վարձակալության գծով պարտավորություններ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի տարածքների համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տես ծանոթագրություն 20):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Հունվարի 1-ի դրությամբ	825,593	911,903
Ավելացում	466,121	-
Տոկոսի կուտակում	92,279	81,019
Վճարումներ	(217,961)	(167,329)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ	**1,166,032**	**825,593**

2022թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 6.6-10.42% (2021թ.՝ 6.6-10.42%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 36-ում:

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Բանկն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով (ծանոթագրություն 13):

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	41,483	43,558
Եկամտի ճանաչում	(2,074)	(2,075)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**39,409**	**41,483**

30 Սեփական կապիտալ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 23,000,000 հազ. դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 172,500 հատ հասարակ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100,000 դրամ անվանական արժեքով և 57,500 հատ արտոնյալ անժամկետ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100,000 դրամ անվանական արժեքով:

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022		31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)	
	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Գեվորկյան Մարետա Ռուդիկի	22,980,100	99.9	19,373,600	96.9
Այլ բաժնետերեր	19,900	0.1	626,400	3.1
	23,000,000	**100**	**20,000,000**	**100**

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2022թ. Բանկը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 3,000,000 հազար դրամ գումարով՝ թողարկելով 2,250,000 հազար ՀՀ դրամի հասարակ և 750,000 հազար ՀՀ դրամի արտոնյալ բաժնետոմսեր: Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով: 2021թ. Բանկի բաժնետերերը բաժնետիրական կապիտալը չեն ավելացրել:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում կուտակված շահաբաժինների գումարը 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմել է 620,110 հազար դրամ (2021թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում 571,000 հազար դրամ):

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 5%-ի չափով:

31 Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)
Վարկային գծերի չօգտագործված մաս	14,799,173	10,412,638
Տրամադրված երաշխավորություններ	4,801,136	2,569,078
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**19,600,309**	**12,981,716**
Արժեզրկումից պահուստներ	(80,560)	(15,583)

Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պահուստներում (տես՝ ծանոթագրություն 19-ում):

Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունները ներկայացվում են այլ պարտավորություններում, որոնց գծով վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Հազար ՀՀ դրամ	2022թ. Փուլ 1	2021թ. (աուդիտ անցած) Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	15,583	17,213
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	46,579	(11,656)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	18,398	10,026
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**80,560**	**15,583**

32 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

33 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

	2022թ.		2021թ. (աուդիտ անցած)	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկերի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ, համախառն	1,303,101	466,284	4,444,362	346,730
Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, համախառն	19,408	324,702	1,303,101	466,284
Արժեզրկումից պահուստ	(1,671)	(2,952)	(506)	(3,051)
Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,737	321,750	1,302,595	463,233
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդների և ընթացիկ հաշիվների մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	4,575,344	13,629,300	6,384,974	1,513,807
Ավանդների և ընթացիկ հաշիվների մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,076,511	2,423,478	4,575,344	13,629,300
Սպորադաս փոխառություններ	3,993,514	-	4,872,881	-
Այլ փոխառություններ	3,515,893	-	5,448,416	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	294	48,961	154,169	40,367
Արժեզրկման (ծախս)/ հակադարձում	(1,165)	99	4,901	(1,701)
Տոկոսային ծախսեր ավանդների գծով	(69,526)	(58,313)	(261,336)	(70,620)
Տոկոսային ծախսեր ստորադաս փոխառությունների գծով	(392,138)	-	(453,355)	-
Տոկոսային ծախսեր այլ փոխառությունների գծով	(176,111)	-	(196,816)	-
Զուտ եկամուտ ածանցյալ գործիքների վերագնահատումից	-	-	67,344	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	-	(2,795)	-	-

Բանկի հետ կապակցված անձանց տարվա ընթացքում տրամադրված վարկերը ենթակա են վճարման 1-10 տարվա ընթացքում և դրանց արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 11-19% (2021թ.՝ 6-21%):

Բանկի հետ կապակցված անձանցից տարվա ընթացքում ներգրավված ավանդների ժամկետը 1-3 տարի է և դրանց արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 2-10% (2021թ.՝ 2-11%):

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

	2022թ.	2021թ. (աուդիտ անցած)
Աշխատավարձ և պարգևատրումներ	2,278,886	496,311
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**2,278,886**	**496,311**

34 Իրական արժեքի չափումը

Բանկի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքները, շենքերը, այնպես էլ ոչ-պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ անշարժ գույքի և բռնագանձված ակտիվների գնահատման մեջ: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի Խորհրդի կողմից:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2՝ Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

34.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքները կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են

7.7% մինչև 18% տարեկան (2021թ.՝ 5% մինչև 18% տարեկան): Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Այլ փոխառություններ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

34.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Պետական և ոչ պետական պարտատոմսեր	477,773	24,552,968	-	25,030,741
Բաժնային գործիքներ	-	-	42,825	42,825
Զուտ իրական արժեք	**477,773**	**24,552,968**	**42,825**	**25,073,566**

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Պետական և ոչ պետական պարտատոմսեր	1,240,328	5,385,976	-	6,626,304
Բաժնային գործիքներ	-	-	42,825	42,825
Հետգնման պայմանագրերով գրավադրված պետական պարտատոմսեր	-	16,772,616	-	16,772,616
Զուտ իրական արժեք	**1,240,328**	**22,158,592**	**42,825**	**23,441,745**

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 1-ին և 2-րդ մակարդակների միջև փոխանցումներ չեն կատարվել:

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Գնանշվող ներդրումներ

Բոլոր ցուցակված արժեթղթերը և պարտատոմսերը թողարկվել են Հայաստանում հրապարակայնորեն գնանշվող ընկերությունների կողմից:

Չգնանշվողպարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, արպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Ընդհանրապես, Բանկի կողմից իրականացվող ածանցյալները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային ֆորվարդային պայմանագրերից:

35 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022						
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել			
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ ռեպո համաձայնագրեր (Ծանոթ.16)	27,033,349		27,033,349	-	27,033,349	-

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ ռեպո համաձայնագրեր (Ծանոթ.16)	20,348,011		20,348,011	-	20,348,011	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ (Ծանոթ. 18,24)	16,010,497		16,010,497	16,772,616	-	(762,119)

Բանկի կողմից տրամադրված 122,555 հազ. ՀՀ դրամ վարկերը հաշվանցվել են ՀՀ կառավարության պարտավորությունների հետ, քանի որ Բանկը հանդիսանում է տվյալ վարկերի սպասարկման գործակալ և այդ վարկերը տրամադրվել են ՀՀ կառավարության կողմից կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ուղղված միջոցառումների շրջանակներում:

36 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 37.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանր ագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանր ագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	88,969,092	-	88,969,092	-	-	-	88,969,092
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	27,033,349	-	27,033,349	-	-	-	27,033,349
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	1,219,086	855,362	2,074,448	776,478	-	776,478	2,850,926
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները	3,285,028	9,804,992	13,090,020	6,237,080	5,746,466	11,983,546	25,073,566
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները	31,704	2,058,835	2,090,539	18,484,715	6,148,736	24,633,451	26,723,990
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	5,746,604	34,584,482	40,331,086	71,375,535	49,876,602	121,252,137	161,583,223
Այլ ֆինանսական ակտիվներ	4,040,126	-	4,040,126	-	-	-	4,040,126
	130,324,989	**47,303,671**	**177,628,660**	**96,873,808**	**61,771,804**	**158,645,612**	**336,274,272**
Պարտավորություններ							
Բանկերի նկատմամբ պարտավորություններ	274,694	-	274,694	-	-	-	274,694
Պարտավորություններ	112,404,494	70,329,181	182,733,675	46,513,332	15,973	46,529,305	229,262,980

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանր ագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանր ագումար	Ընդամենը
հաճախորդների նկատմամբ							
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	4,957,174	4,957,174	5,938,107	-	5,938,107	10,895,281
Այլ փոխառություններ	1,221,183	3,753,790	4,974,973	18,383,867	9,737,496	28,121,363	33,096,336
Ստորադաս փոխառություններ	17,467	40,563	58,030	-	3,935,484	3,935,484	3,993,514
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,602,071	726,954	2,329,025	405,401	218,968	624,369	2,953,394
	115,519,909	**79,807,662**	**195,327,571**	**71,240,707**	**13,907,921**	**85,148,628**	**280,476,199**
Զուտ Դիրք	**14,805,080**	**(32,503,991)**	**(17,698,911)**	**25,633,101**	**47,863,883**	**73,496,984**	**55,798,073**

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021 (աուդիտ անցած)						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանր ագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	43,389,076	-	43,389,076	-	-	-	43,389,076
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	20,348,011	-	20,348,011	-	-	-	20,348,011
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	1,763,725	434,859	2,198,584	95,631	-	95,631	2,294,215
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները	-	5,581,639	5,581,639	11,137,258	6,722,848	17,580,106	23,441,745
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները	-	273,653	273,653	2,240,565	1,117,027	3,357,592	3,631,245
Հաճախորդներին	3,876,011	26,898,562	30,774,573	69,046,321	40,137,060	109,183,381	139,957,954

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանր ագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանր ագումար	Ընդամենը
տրված վարկեր և փոխատվություններ							
Այլ ֆինանսական ակտիվներ	1,222,927	-	1,222,927			-	1,222,927
	70,599,750	**33,188,713**	**103,788,463**	**82,519,775**	**47,976,935**	**130,496,710**	**234,285,173**
Պարտավորություններ							
Բանկերի նկատմամբ պարտավորություններ	1,410,385	-	1,410,385	-	-	-	1,410,385
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,010,497	-	16,010,497	-	-	-	16,010,497
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	51,437,727	54,294,904	105,732,631	47,270,246	6,750	47,276,996	153,009,627
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	20,697	20,697	5,801,400	-	5,801,400	5,822,097
Այլ փոխառություններ	213,700	1,035,797	1,249,497	18,558,963	7,798,901	26,357,864	27,607,361
Ստորադաս փոխառություններ	21,783	49,958	71,741	4,801,140	-	4,801,140	4,872,881
Այլ ֆինանսական պարտավորություններ	793,205	668,140	1,461,345	416,660	312,629	729,289	2,190,634
	69,887,297	**56,069,496**	**125,956,793**	**76,848,409**	**8,118,280**	**84,966,689**	**210,923,482**
Զուտ Դիրք	**712,453**	**(22,880,783)**	**(22,168,330)**	**5,671,366**	**39,858,655**	**45,530,021**	**23,361,691**

37 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի,

որն, իր հերթին, բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Բանկի Խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է գործընթացների ներդրման, իրականացման և վերահսկման համար, որոնք կապված են ռիսկերի կառավարման հետ:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար: Տվյալ բաժինը նաև ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքը:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի Խորհրդին և Վարչությանը:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է "վատագույն դեպքերը", որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Բանկի Խորհրդին և Վարչությանը: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ պարտքային ռիսկի համապարփակ չափի, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, իրացվելիության ցուցանիշների և ռիսկի աստիճանի

փոփոխության վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ բնագավառների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, ըստ ժամկետայնության: Վարչությունը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Յուրաքանչյուր օր ռիսկերի ստորաբաժանման կողմից տրամադրվում է հաշվետվություն վարչության անդամներին, որը ներառում է բանկային նորմատիվները, բանկի ընթացիկ հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի օրական փոփոխությունը և արտահաշվեկշռային հոդվածների փոփոխությունը:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

37.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՄԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական

հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու ինարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով

ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:


- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունները:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն/
Առաջադրանքի պատասխանատու

12 ապրիլի 2021թ.



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2020	2019
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	7	15,052,441	11,967,016
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	7	(7,400,859)	(5,883,300)
Զուտ տոկոսային եկամուտներ		7,651,582	6,083,716
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	8	1,198,488	1,134,552
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	8	(782,157)	(912,191)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		416,331	222,361
Զուտ առևտրային եկամուտ	9	1,093,127	1,143,296
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման գծով օգուտ		-	1,242,410
Այլ գործառնական եկամուտներ	10	291,656	181,265
Այլ գործառնական ծախսեր	11	(480,886)	(465,915)
Գործառնական եկամուտ		8,971,810	8,407,133
Արժեզրկման ծախս	12	(3,515,440)	(1,998,081)
Անձնակազմի գծով ծախսեր	13	(2,369,862)	(2,424,114)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	22	(597,012)	(531,139)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	14	(1,452,617)	(1,206,721)
Շահույթ մինչև հարկումը		1,036,879	2,247,078
Շահութահարկի գծով ծախս	15	(274,925)	(508,428)
Տարվա շահույթ		761,954	1,738,650

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2020	2019
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում			
Հիմնական միջոցների վերագնահատում		2,661,164	-
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(479,010)	-
Հարկային դրույքի փոփոխության արդյունքում ճշգրտում հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստների վրա (ծանոթ. 15)		-	36,306
Զուտ օգուտ հոդվածներից, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում		2,182,154	36,306
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում		(370,279)	(813,756)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		51,577	(18,550)
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		66,650	162,751
Հարկային դրույքի փոփոխության արդյունքում ճշգրտում (ծանոթ. 15)		-	3,865
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ վնաս		(252,052)	(665,690)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		1,930,102	(629,384)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		2,692,056	1,109,266

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 14-ից մինչև 98-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	37,471,183	26,030,924
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	17	18,181,073	16,140,569
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	18	1,179,869	1,120,096
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	19	-	1,280
Ներդրումային արժեթղթեր			
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	14,488,608	1,882,145
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	20	-	489,177
- Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	5,728,670	8,840,490
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	21	111,716,348	101,556,815
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	22	9,517,804	5,967,151
Հետաձգված հարկային ակտիվ	15	-	31,283
Ընթացիկ շահութահարկի գծով ակտիվ		370,530	-
Բռնագանձված ակտիվներ	23	2,072,059	2,129,642
Այլ ակտիվներ	24	694,173	927,935
Ընդամենը՝ ակտիվներ		201,420,317	165,117,507

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	25	2,749,926	4,096,505
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	26	16,524,178	12,713,336
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	27	124,226,407	100,127,629
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	19	67,344	560
Այլ փոխառություններ	28	15,739,784	6,097,777
Ստորադաս փոխառություններ	29	5,303,185	10,261,764
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		-	310,307
Հետաձգված հարկային պարտավորություն	15	620,955	-
Այլ պարտավորություններ	30	2,340,136	1,921,441
Ընդամենը՝ պարտավորություններ		167,571,915	135,529,319
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	31	20,000,000	17,950,000
Գլխավոր պահուստ		1,000,000	262,075
Այլ պահուստներ		3,529,008	1,674,927
Չբաշխված շահույթ		9,319,394	9,701,186
Ընդամենը՝ սեփական կապիտալ		33,848,402	29,588,188
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		201,420,317	165,117,507

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2021թ. ապրիլի 12-ին:

Կարեն Եղիազարյան
Վարչության նախագահ

Էմմա Ջանինյան
Գլխավոր հաշվապահի, վարչության անդամ

ՀՀ, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ARMENIA, "EVOCABANK" CJSC
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
EVOCABANK
00001182

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 14-ից մինչև 98-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	17,950,000	262,075	186,367	1,488,560	9,701,186	29,588,188
Տարվա շահույթ	-	-	-	-	761,954	761,954
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	2,661,164		2,661,164
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	(76,021)	76,021	-
Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում	-	-	(370,279)	-	-	(370,279)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	-	-	51,577	-	-	51,577
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	66,650	(479,010)	-	(412,360)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(252,052)	2,106,133	837,975	2,692,056
Բաժնետիրական կապիտալի ավելացում	2,050,000	-	-	-	-	2,050,000
Հատկացում պահուստին	-	737,925	-	-	(737,925)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	(481,842)	(481,842)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	2,050,000	737,925	-	-	(1,219,767)	1,568,158
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,000,000	1,000,000	(65,685)	3,594,693	9,319,394	33,848,402

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	17,950,000	162,075	852,057	1,485,268	8,455,522	28,904,922
Տարվա շահույթ	-	-	-	-	1,738,650	1,738,650
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	(33,014)	33,014	-
Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում	-	-	424,894	-	-	424,894
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	-	-	(1,238,650)	-	-	(1,238,650)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	-	-	(18,550)	-	-	(18,550)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	162,751	-	-	-
Հարկային դրույքի փոփոխության արդյունքում ճշգրտում (ծանոթ. 15)	-	-	3,865	36,306	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(665,690)	3,292	1,771,664	1,109,266
Հատկացում պահուստին	-	100,000	-	-	(100,000)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	(426,000)	(426,000)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	100,000	-	-	(526,000)	(426,000)
Հաշվեկշիռը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,950,000	262,075	186,367	1,488,560	9,701,186	29,588,188

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 14-ից մինչև 98-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2020	2019
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	1,036,879	2,247,078
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	597,012	531,139
Հիմնական միջոցների օտարումից զուտ եկամուտ	(340)	(43,924)
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս	4,237	89,598
Արժեզրկման ծախս	3,515,440	1,998,081
Զուտ օգուտ առևտրային պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից	-	(114,265)
Ածանցյալ ֆինանսական գործիքների վերագնահատումից զուտ (օգուտ)/վնաս	68,064	(15,136)
Զուտ (օգուտ)/վնաս ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(84,642)	126,727
Այլ հաշվեգրումներ	-	512,362
Շենքերի վերագնահատումից վնաս	5,687	-
Ստացվելիք տոկոսներ	(1,464,315)	(217,632)
Վճարվելիք տոկոսներ	94,279	794,681
Տոկոսային ծախս վարձակալության գծով	53,312	23,575
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	3,825,613	5,932,284
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(1,884,308)	(8,976,927)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	335,870	422,471
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	14,024
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(4,968,176)	(24,521,693)
Բռնագանձված ակտիվներ	130,215	689,955
Այլ ակտիվներ	218,966	(125,330)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	(2,203,444)	1,528,114
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	3,812,311	3,432,640
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	17,004,658	25,406,057
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	(13,040)
Այլ պարտավորություններ	(61,021)	52,300
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը	16,210,684	3,840,855
Վճարված շահութահարկ	(715,884)	(451,735)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	15,494,800	3,389,120

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2020	2019
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք	(9,128,170)	(2,162,523)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(991,119)	(778,924)
Հիմնական միջոցների վաճառք	2,876	380,813
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(10,116,413)	(2,560,634)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	2,050,000	-
Վճարված շահաբաժիններ	(426,000)	(426,000)
Այլ փոխառություններ	8,606,497	2,384,802
Ստորադաս փոխառություններ	(5,716,940)	-
Վարձակալության գծով պարտավորություններ	(125,337)	(73,020)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	4,388,220	1,885,782
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	9,766,607	2,714,268
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	26,030,924	23,088,491
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	1,675,312	230,503
Արժեզրկման գծով պահուստի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,660)	(2,338)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 16)	37,471,183	26,030,924

Լրացուցիչ տեղեկատվություն՝

Ստացված տոկոսներ	13,588,126	11,749,384
Վճարված տոկոսներ	(7,253,268)	(5,065,044)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 14-ից մինչև 98-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ)՝ անվանափոխված «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ն է, որը հիմնադրվել է 01.06.1990թ. և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 02.10.1991թ. ՀՀ կենտրոնական բանկ (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N27 արտոնագրային համարով:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 13 մասնաճյուղեր գտնվում են Երևանում, մեկ մասնաճյուղ՝ Գյումրիում, մեկ մասնաճյուղ՝ Աբովյան քաղաքում, մեկ մասնաճյուղ՝ Վանաձոր քաղաքում:

Բանկի աշխատակիցների թիվը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կազմում է 354:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հանրապետության 44/2 փող., Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն:

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համաճարակ: Կորոնավիրուսն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Ընդհանուր առմամբ 2020թ. ֆինանսական շուկայում դիտվում է վարկավորման անկում, քանի որ բանկերը վերագնահատում են իրենց հաճախորդների բիզնես-մոդելները, ինչպես նաև վերջիններիս հետագա գործունեության իրականացման հնարավորությունները՝ հաշվի առնելով փոխարժեքի տատանումները և գործարար ակտիվության անկումը:

Բանկի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Բանկը օրական կտրվածքով վերահսկում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

Վերոնշյալ իրադարձությունները, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին, կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Բանկի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը բանկի գործունեության վրա:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով բացառությամբ, հողի, շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

Ներքոհիշյալ այլ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2020թ-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,
- Էականության սահմանումը (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 փոփոխություններ),
- Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ (ՖՀՄՍ 16 փոփոխություններ)

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)» (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- *«Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը»* (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)
- *«Հղումներ հայեցակարգային հիմունքներին»* (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)
- «Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր» (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)
- 2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տես 4.4.6 ծանոթագրությունում:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող) իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ

համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	522.59	479.70
ՀՀ դրամ/1 Եվրո	641.11	537.26

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Բանկն սկզբնապես ճանաչում է վարկերը և փոխատվությունները, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Բանկի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են դրանց ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման դեպքում ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Բանկի ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Բանկը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» կազմված է փողի ժամանակային արժեքի և պարտքային ռիսկի փոխհատուցումից, այլ ռիսկերի և ֆինանսական ակտիվի պահպանման հետ կապված ծախսերի փոխհատուցումից (օրինակ՝ իրացվելիության ռիսկ և վարչական ծախսեր), ինչպես նաև շահույթի մարժայից: Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Բանկը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Բանկը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման առանձնահատկությունները,
- վաղաժամկետ մարման և երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Բանկի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի պահանջի իրավունքի ակտիվների պայմանավորվածություններ) և
- առանձնահատկությունները, որոնք փոխում են դրամի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Բանկը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա տարածվող հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված փոխհատուցման գումարի տարբերությունը (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային բաժնային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակային օգուտ/վնաս չի ճանաչվում շահույթում կամ վնասում այդ արժեթղթերի ապաճանաչման դեպքում: Մասնակցությունն ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում, որն առաջանում է կամ պահպանվում է Բանկի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, կա՛մ դրանց մի մասը: Նման

դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Բանկը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները:

Գործարքներում, որոնցում Բանկը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Բանկը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան սպասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են առոչինչ: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տես 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տես 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմաններով հիմնավորված նոր ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Բանկի առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

Բանկը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Բանկը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք պայմանավորված են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում տեղի ունեցող դեֆոլտ առաջացնող իրադարձություններով:

Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում դեֆոլտի բոլոր հնարավոր դեպքերի հետևանքով:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Բանկը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 38.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Բանկը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Բանկը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Բանկը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Բանկը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները դեֆոլտի հավանականության, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի, դեֆոլտի ժամանակ վնասի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Դեֆոլտի հավանականություն (PD): Այն տվյալ ժամանակահավածում դեֆոլտի հավանականության գնահատումն է: Դեֆոլտ կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակաշրջանի միայն որոշակի ժամանակահատվածում, եթե պարտականությունը նախկինում չի ապաճանաչվել և շարունակում է մնալ պորտֆելում:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD): Այն ներկայացնում է դեֆոլտի ապագա ամսաթվի դրությամբ ռիսկի ենթարկված գումարի չափի գնահատումը՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ռիսկի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսագումարների մարումը՝ անկախ նրանից պայմանագրով նախատեսված է, թե ոչ, պարտավորության սպասվող օգտագործումը և չկատարված վճարումների հաշվեգրված տոկոսները:

Վնասը դեֆոլտի ժամանակ (LGD): Այն արտահայտում է վնասի չափը, որը առաջանում է տվյալ ժամանակահատվածում վարկի դիֆոլտային կարգավիճակում: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն հույս ունի ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը: Որպես կանոն, այն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի (EAD) նկատմամբ տոկոսով:

Դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը և դեֆոլտի ժամանակ վնասը ավելի մանրամասն բացահայտվում են 38.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տես՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- էմիտենտի կամ փոխառուի էական ֆինանսական դժվարություններ,
- պայմանագրային պայմանների խախտում, օրինակ՝ դեֆոլտ կամ վճարման ուշացում,
- վարկերի կամ փոխատվությունների պայմանների այնպիսի վերանայում, որը Բանկն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորման հավանականություն,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Փոխառուի ֆինանսական դժվարությունների հետևանքով վերանայված վարկը սովորաբար դիտարկվում է որպես արժեզրկված, միայն եթե առկա չէ վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր չստանալու ռիսկը էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- երկրի կարողությունը մուտք գործել կապիտալ շուկաներ նոր պարտքի թողարկման համար:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների (FVOCI) արժեզրկումից կորուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը հավասար է իրենց իրական արժեքին: Այնուամենայնիվ, արժեզրկումից կորուստները բացահայտվում և ճանաչվում են իրական արժեքի ճշգրտման պահուստում,
- վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Վարկային պարտավորվածության չօգտագործված մասի գծով գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Բանկը գնահատում է վարկային պարտավորվածությունների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - եթե ֆինանսական գործիքը ունի ինչպես օգտագործված, այնպես էլ չօգտագործված բաղադրիչ և Բանկը հնարավորություն չունի վարկերի տրամադրման պարտավորվածության ակնկալվող պարտքային կորուստները առանձնացնել օգտագործված բաղադրիչի ակնկալվող պարտքային կորուստներից, ապա Բանկը ներկայացնում է ակընկալվող պարտքային կորուստների համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի համախառն գումարի նկատմամբ արժեզրկումից կորուստների ցանկացած գերազանցում ներկայացվում է պահուստի տեսքով:
  - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Բանկի պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստների շրջանակում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Բանկը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող

են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Բանկի պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, ինչպես նաև մինչև 90 ժամկետով ավանդներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Բանկերի նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Վարկերը և փոխատվությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.8 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

- պարտքային և բաժնային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորոշվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և վերադարձ
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

4.9 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ հոդվածում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ հոդվածում: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերը ճանաչվում են «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» հոդվածում, իսկ համապատասխան պարտավորությունն արտացոլվում է «Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ» հոդվածում:

4.10 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության Զուտ առևտրային եկամուտ հոդվածում:

4.11 Վարձակալություն

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բանկը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բանկին,
- Բանկն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Բանկն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բանկն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բանկը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

4.12 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքերը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	40	2.5
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-8	100-12.5
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	5-8	20-12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Հողի և շինությունների վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից:

Հիմնական միջոցների օգտագործմանը զուգահեռ, տվյալ ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.13 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.14 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.15 Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

4.16 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կենտրոնական բանկի և ֆինանսական կազմակերպությունների, հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Երբ Բանկը գնում է իրեն պատկանող արժեթղթերը, դրանք դուրս են գրվում հաշվեկշռից, և հաշվեկշռային արժեքի ու վճարված գումարի տարբերությունն արտացոլվում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

4.17 Ֆինանսական երաշխիքներ և վարկային պարտավորվածություններ

Ֆինանսական երաշխիքները այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիք տրամադրողը փոխհատուցի երաշխիք ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով

վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Վարկային պարտավորվածությունները նախապես որոշված պայմաններով և ժամկետներով վարկեր տրամադրելու պարտավորվածություններն են:

Ֆինանսական երաշխիքները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՄ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՄ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխիքների և վարկային պարտավորվածությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.18 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխիքների և վարկային պարտավորվածությունների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.17 ծանոթագրությունում:

4.19 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.4.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 35):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին

համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա(տես 34 ծանոթագրությունը):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում կանխատեսվող տեղեկատվության ներառումը (տես 38.1.2 ծանոթագրություն), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ 32 ծանոթագրությունը:

6 Անցման բացահայտում

ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվի՝ այն է 2019թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գործառնական վարձակալությունների համար Բանկն ընտրել է սկզբնավորման ուղղակի ծախսումները չներառել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափման մեջ: Այդ ամսաթվին Բանկը նաև ընտրել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափել անցման օրվա դրությամբ առկա վարձակալական պարտավորությանը հավասար գումարով՝ ճշգրտված բոլոր կանխավճարների կամ հաշվեգրված վարձակալական վճարների չափով:

Ելնելով վերը նշվածից՝ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ.

- 335,124 հազար դրամի օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչվել և ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Հիմնական միջոցներ» տողում:
- 335,124 հազար դրամի լրացուցիչ վարձակալության գծով պարտավորությունները ճանաչվել և ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Այլ պարտավորություններ» տողում:
- ՖՀՄՍ 16-ի ընդունումը որևէ ազդեցություն չի ունեցել Բանկի չբաշխված շահույթի վրա:

Հետևյալ աղյուսակում արտացոլված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալության գծով պարտավորությունների համադրումը (ինչպես ներկայացված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում) 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների հետ.

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ	25,903
Վարձակալության երկարաձգման այլընտրանքի խելամիտ համոզմունք ճանաչումից ազատումներ	399,421
Ճանաչումից ազատումներ.	
• Վարձակալություն 12 ամսից կարճ ժամկետով	(5,953)
Գործառնական վարձակալության գծով պարտավորությունները մինչև զեղչումը	419,371
Զեղչումը՝ օգտագործելով լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը	(84,247)
2019թ. հունվարի 1-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ	335,124

7 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Հաճախորդներին տրված վարկեր	12,880,646	10,297,274
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,147,823	927,312
Հակադարձ ռեպո գործառնություններ	939,179	648,950
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	62,059	65,902
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	19,484	25,918
Այլ	3,250	1,660
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	15,052,441	11,967,016

Հաճախորդների հաշիվներ	5,203,247	4,004,293
Ռեպո գործառնություններ	904,762	699,440
Այլ փոխառություններ	550,764	324,204
Ստորադաս փոխառություն	441,352	432,321
Թողարկված պարտատոմսեր	178,282	295,850
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	69,140	103,617
Տոկոսային ծախս վարձակալության գծով	53,312	23,575
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	7,400,859	5,883,300

8 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	321,410	514,735
Վճարային քարտերով գործառնություններ	636,731	447,883
Դրամարկղային գործառնություններ	92,340	78,561
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	71,435	45,182
Կանխիկ անկանխիկ արտարժույթի փոխարկումներ	52,615	26,532
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	23,957	21,659
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,198,488	1,134,552
Կանխիկ անկանխիկ արտարժույթի փոխարկումներ	99,871	225,694
Վճարային քարտերով գործառնություններ	538,639	377,883
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	102,581	299,917
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	4,377	2,913
Այլ ծախսեր	36,689	5,784
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	782,157	912,191

9 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտ	1,163,044	1,009,842
Զուտ եկամուտ առևտրային պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից	-	114,265
Զուտ եկամուտ/(վնաս) ածանցյալ գործիքներից	(78,486)	15,102
Շահույթ կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթերի առք ու վաճառքից զուտ եկամուտ	8,569	4,087
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	1,093,127	1,143,296

10 Այլ գործառնական եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Ստացված տույժեր և տուգանքներ	151,403	95,373
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումներից զուտ եկամուտ	84,642	-
Եկամուտներ ակտիվներին վերաբերող շնորհներից	2,074	2,074
Շահաբաժիններից եկամուտ	2,703	1,884
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից զուտ եկամուտ	340	43,924
Այլ	50,494	38,010
Ընդամենը այլ գործառնական եկամուտներ	291,656	181,265

11 Այլ գործառնական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով ծախսեր	271,099	158,872
Գործառնական համակարգերի օգտագործման ծախսեր	58,160	-
Քարտերի թողարկման ծախսեր	35,153	17,638
Ինկասացիոն ծախսեր	25,637	27,101
Վարկերի զիջման ծախսեր	21,580	-
Ֆինանսական հաշտարարի գծով ծախսեր	17,327	13,365
Շենքերի վերագնահատումից վնաս	5,687	-
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս	4,237	89,598
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումներից զուտ վնաս	-	126,727
Այլ	42,006	32,614
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	480,886	465,915

12 Արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը 2020թ.
			2020		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	1,660	-	-	1,660
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	17	7,940	-	-	7,940
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	18	10,892	-	-	10,892
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	51,577	-	-	51,577
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	21	39,769	591,521	2,776,194	3,407,484
Այլ ակտիվներ	24	19,648	-	-	19,648
Ֆինանսական երաշխիքներ	32	16,239	-	-	16,239
Ընդամենը արժեզրկման ծախս		147,725	591,521	2,776,194	3,515,440

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը 2019թ.
			2019		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	2,338	-	-	2,338
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	17	(3,733)	-	-	(3,733)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	(18,550)	-	-	(18,550)
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	21	(92,854)	299,821	1,820,161	2,027,128
Այլ ակտիվներ	24	(10,076)	-	-	(10,076)
Ֆինանսական երաշխիքներ	32	974	-	-	974
Ընդամենը արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)		(121,901)	299,821	1,820,161	1,998,081

13 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	2,278,235	2,388,112
Անձնակազմի ուսուցման ծախսեր	16,145	7,750
Անձնակազմի գծով այլ ծախսեր	75,482	28,252
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	2,369,862	2,424,114

14 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Գովազդի ծախսեր	319,317	345,744
Ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	203,126	124,428
Ներկայացուցչական և կազմակերպչական ծախսեր	148,765	81,304
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	144,058	158,851
Վարկերի վերադարձման գծով ծախսեր	129,122	41,065
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	104,864	39,815
Անվտանգության գծով ծախսեր	87,097	76,592
Գրասենյակային ծախսեր	85,748	64,325
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	72,334	122,682
Ապահովագրության գծով ծախսեր	57,531	35,702
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	43,547	56,426
Ակտիվների կարճաժամկետ վարձակալության ծախսեր	36,126	26,845
Այլ	20,982	32,942
Ընդամենը այլ ընդհանուր վարչական ծախսեր	1,452,617	1,206,721

15 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	665,393
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	35,047	4,579
Հետաձգված հարկ	239,878	(161,544)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	274,925	508,428

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2019թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% (2019: 18%) հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2020	Արդյունավետ դրույքաչափ (%)	2019	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	1,036,879		2,247,078	
Շահութահարկ՝ 18% (2019թ.՝ 20%) դրույքաչափով	186,638	18	449,416	20
Զուտ չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտ)	68,475	6	(14,560)	(1)
Արտարժույթի (դրական)/ բացասական փոխարժեքային տարբերություն	(15,235)	(1)	25,345	1
Նախորդ տարի հարկի ճշգրտում	35,047	3	4,579	-
Հարկային տոկոսադրույքի փոփոխման ազդեցություն	-	-	43,648	2
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	274,925	26	508,428	22

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020					
	1 հունվարի 2020	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(783)	(7,902)	-	(8,685)	-	(8,685)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(29,044)	(1,906)	-	(30,950)	-	(30,950)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	(4,581)	5,531	-	950	950	-
Ներդրումային արժեթղթեր	(34,786)	-	66,650	31,864	31,864	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	321,848	(194,745)	-	127,103	127,103	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(316,178)	22,951	(479,010)	(772,237)	-	(772,237)
Այլ ակտիվներ	(2,146)	810	-	(1,336)	-	(1,336)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2,605	(7,943)	-	(5,338)	-	(5,338)
Այլ փոխառություններ	-	174	-	174	174	-
Ստորադաս փոխառություններ	-	(52)	-	(52)		(52)
Այլ պարտավորություններ	94,348	(73,186)	-	21,162	21,162	-
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	-	16,390	-	16,390	16,390	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	31,283	(239,878)	(412,360)	(620,955)	197,643	(818,598)

Հազար ՀՀ դրամ	1 հունվարի 2019	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2019 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	(783)	-	(783)	-	(783)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	(29,044)	-	(29,044)	-	(29,044)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	1,728	(6,309)	-	(4,581)	-	(4,581)
Ներդրումային արժեթղթեր	(201,402)	-	166,616	(34,786)	-	(34,786)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	233,837	88,011	-	321,848	321,848	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(362,447)	9,963	36,306	(316,178)	-	(316,178)
Այլ ակտիվներ	(13,543)	11,397	-	(2,146)	-	(2,146)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	2,605	-	2,605	2,605	-
Այլ պարտավորություններ	8,644	85,704	-	94,348	94,348	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(333,183)	161,544	202,922	31,283	418,801	(387,518)

16 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	24,196,064	16,746,836
Կանխիկ դրամական միջոցներ	9,024,169	8,584,553
Թղթակցային հաշիվներ բանկերում	2,254,538	701,873
Մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	2,000,410	-
	37,475,181	26,033,262
Արժեզրկումից պահուստներ	(3,998)	(2,338)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	37,471,183	26,030,924

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2%) և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18%) չափով: 2019թ. հունիսից բանկերը արտարժույթով

ներգրաված միջոցների 10%-ը պահուստավորում են ՀՀ դրամով և 8%-ը՝ արտարժույթով: Այդ միջոցները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 15,729,522 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12,341,352 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	2,338	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(2,338)	-
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	3,998	2,338
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,998	2,338

17 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Հակադարձ հետգնման պայմանագրեր բանկերի հետ	-	959,859
Հակադարձ հետգնման պայմանագրեր այլ ֆինասական կազմակերպությունների հետ	18,191,040	13,024,251
Հակադարձ հետգնման պայմանագրեր ֆիզիկական անձանց հետ	-	2,158,486
	18,191,040	16,142,596
Արժեզրկումից պահուստներ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների գծով	(9,967)	(2,027)
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	18,181,073	16,140,569

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների հետ ՀՀ դրամով հակադարձ ռեպո համաձայնագրերի կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 6.2% (2019թ. դեկտեմբերի 31-իդրությամբ՝ 6.2%), ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով համաձայնագրերի գծով 2.8% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2.8%):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիզիկական անձանց հետ ՀՀ դրամով հակադարձ ռեպո համաձայնագրեր առկա չեն (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7.4%):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ պայմանագրային կողմ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ պայմանագրային կողմ), որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պայմանագրերի զուտ գումարը կազմում է 3,607,163 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,115,367 հազար դրամ):

Հակադարձ ռեպո համաձայնագրերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	2,027	5,760
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	7,940	(3,733)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,967	2,027

Հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2020		2019	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսեր	18,949,307	18,191,040	17,435,753	16,142,596
Ընդամենը գրավադրված ակտիվներ և հակադարձ ռեպո պայմանագրերով տրամադրված վարկեր	18,949,307	18,191,040	17,435,753	16,142,596

2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հակադարձ ռեպո պայմանագրերով որպես գրավ ստացած և ռեպո պայմանագրերի ներքո վերագրավադրված արժեթղթերի իրական արժեքը կազմում է 11,639,188 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,639,548 հազար դրամ):

18 Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Բանկերին տրամադրված վարկեր	561,477	482,001
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	353,000	253,000
Դեպոնացված միջոցներ այլ բանկերում	275,805	384,772
Կանոնավոր գնման պայմանագրեր – սփոթ գործարքներ արտարժույթով	479	323
	1,190,761	1,120,096
Արժեզրկումից պահուստներ բանկերին տրված վարկեր և փոխատվությունների գծով	(10,892)	-
Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	1,179,869	1,120,096

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեպոնացված գումարը բանկերում իրենից ներկայացնում է Master Card վճարային համակարգում անդամակցության դիմաց սառեցված ավանդ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին տրված ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով վարկերի գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 6.8% (2019թ. դեկտեմբերի 31-իդրությամբ՝ 6.7%): 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չկան ՀՀ դրամով վարկեր (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նման պայմանագրեր առկա չեն):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի ոչ մի բանկի տրված միջոցներ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Բանկերին տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

				31 դեկտեմբերի 2020թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված համախառն գումարներ	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված/ տրամադրված ոչ դրամական ապահովում	Զուտ գումար
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ ռեպո համաձայնագրեր (Ծանոթ.17)	18,181,073	-	18,181,073	-	(18,181,073)	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ (Ծանոթ. 17,20,26)	16,524,178	–	16,524,178	(17,367,858)	-	(843,680)

Հազար ՀՀ դրամ

				31 դեկտեմբերի 2019թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված համախառն գումարներ	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված ոչ դրամական ապահովում	Զուտ գումար
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ ռեպո համաձայնագրեր (Ծանոթ.17)	16,142,596	-	16,142,596	-	(16,142,596)	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ (Ծանոթ. 17,20,26)	12,713,336	-	12,713,336	(13,480,038)	-	(766,702)

37 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 38.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահաշվարկում	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահաշվարկում	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	37,471,183	-	37,471,183	-	-	-	37,471,183
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	18,181,073	-	18,181,073	-	-	-	18,181,073
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	655,369	317,990	973,359	206,510	-	206,510	1,179,869
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	2,623,741	2,623,741	8,676,761	3,188,106	11,864,867	14,488,608
- Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	402,452	402,452	3,652,216	1,674,002	5,326,218	5,728,670
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	5,777,514	25,304,731	31,082,245	55,597,660	25,036,443	80,634,103	111,716,348
Այլ ֆինանսական ակտիվներ	523,615	-	523,615	-	-	-	523,615
	62,608,754	28,648,914	91,257,668	68,133,147	29,898,551	98,031,698	189,289,366
Պարտավորություններ							
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,749,926	-	2,749,926	-	-	-	2,749,926
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,524,178	-	16,524,178	-	-	-	16,524,178
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	38,642,883	48,220,991	86,863,874	37,359,175	3,358	37,362,533	124,226,407
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	34,072	34,072	33,272	-	33,272	67,344
Այլ փոխառություններ	62,758	814,282	877,040	9,736,880	5,125,864	14,862,744	15,739,784
Ստորադաս փոխառություններ	23,422	53,863	77,285	-	5,225,900	5,225,900	5,303,185
Այլ ֆինանսական պարտավորություններ	695,472	579,084	1,274,556	414,626	408,846	823,472	2,098,028
	58,698,639	49,702,292	108,400,931	47,543,953	10,763,968	58,307,921	166,708,852
Զուտ Դիրք	3,910,115	(21,053,378)	(17,143,263)	20,589,194	19,134,583	39,723,777	22,580,514
Կուտակված ճեղքվածք	3,910,115	(17,143,263)		3,445,931	22,580,514		

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2019թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահաշվարկում	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահաշվարկում	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26,030,924	-	26,030,924	-	-	-	26,030,924
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	16,140,569	-	16,140,569	-	-	-	16,140,569
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	640,400	159,899	800,299	319,797	-	319,797	1,120,096
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	-	-	1,280	-	1,280	1,280
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	163,887	163,887	1,718,258	-	1,718,258	1,882,145
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	489,177	489,177	-	-	-	489,177
- Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	701,732	701,732	4,903,299	3,235,459	8,138,758	8,840,490
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	3,253,900	27,517,748	30,771,648	49,038,211	21,746,956	70,785,167	101,556,815
Այլ ֆինանսական ակտիվներ	723,494	-	723,494	-	-	-	723,494
	46,789,287	29,032,443	75,821,730	55,980,845	24,982,415	80,963,260	156,784,990
Պարտավորություններ							
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,750,595	1,345,910	4,096,505	-	-	-	4,096,505
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	12,713,336	-	12,713,336	-	-	-	12,713,336
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26,276,927	42,070,782	68,347,709	31,777,491	2,429	31,779,920	100,127,629
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	560	560	-	-	-	560
Այլ փոխառություններ	30,916	249,202	280,118	2,076,109	3,741,550	5,817,659	6,097,777
Ստորադաս փոխառություններ	21,437	5,443,327	5,464,764	-	4,797,000	4,797,000	10,261,764
Այլ ֆինանսական պարտավորություններ	822,236	492,389	1,314,625	243,830	175,284	419,114	1,733,739
	42,615,447	49,602,170	92,217,617	34,097,430	8,716,263	42,813,693	135,031,310
Զուտ Դիրք	4,173,840	(20,569,727)	(16,395,887)	21,883,415	16,266,152	38,149,567	21,753,680
Կուտակված ճեղքվածք	4,173,840	(16,395,887)		5,487,528	21,753,680		

38 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն, իր հերթին, բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Բանկի Խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է գործընթացների ներդրման, իրականացման և վերահսկման համար, որոնք կապված են ռիսկերի կառավարման հետ:

Ռիսկերի կառավարման սփորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար: Տվյալ բաժինը նաև ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքը:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի Խորհրդին և Վարչությանը:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի

կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է "վատագույն դեպքերը", որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Բանկի Խորհրդին և Վարչությանը: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ պարտքային ռիսկի համապարփակ չափի, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, իրացվելիության ցուցանիշների և ռիսկի աստիճանի փոփոխության վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ բնագավառների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, ըստ ժամկետայնության: Վարչությունը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Յուրաքանչյուր օր ռիսկերի ստորաբաժանման կողմից տրամադրվում է հաշվետվություն վարչության անդամներին, որը ներառում է բանկային նորմատիվները, բանկի ընթացիկ հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի օրական փոփոխությունը և արտահաշվեկշռային հոդվածների փոփոխությունը:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

38.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի

մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

38.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2020
Վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	9,024,169	-	-	9,024,169
Ստանդարտ	28,451,012	-	-	28,451,012
Համախառն հաշվեկշռային արժեք	37,475,181	-	-	37,475,181
Արժեզրկումից պահուստ	(3,998)	-	-	(3,998)
Զուտ հաշվեկշռային արժեք	37,471,183	-	-	37,471,183
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով սպասվելիք գումարներ				
Ստանդարտ	18,191,040	-	-	18,191,040
Համախառն հաշվեկշռային արժեք	18,191,040	-	-	18,191,040
Արժեզրկումից պահուստ	(9,967)	-	-	(9,967)
Զուտ հաշվեկշռային արժեք	18,181,073	-	-	18,181,073
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ				
Ստանդարտ	1,190,761	-	-	1,190,761
Համախառն հաշվեկշռային արժեք	1,190,761	-	-	1,190,761
Արժեզրկումից պահուստ	(10,892)	-	-	(10,892)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,179,869	-	-	1,179,869

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020			
Վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	51,457,933	-	-	51,457,933
Ստանդարտ	716,527	333,979	-	1,050,506
Ոչ ստանդարտ	-	1,175,404	-	1,175,404
Չաշխատող	-	-	3,266,392	3,266,392
Համախառն հաշվեկշռային արժեք	52,174,460	1,509,383	3,266,392	56,950,235
Արժեզրկումից պահուստ	(716,271)	(770,661)	(2,044,324)	(3,531,256)
Զուտ հաշվեկշռային արժեք	51,458,189	738,722	1,222,068	53,418,979
Առևտրային վարկեր				
Բարձր	56,852,087	-	-	56,852,087
Ստանդարտ	11,191	1,375,049	-	1,386,240
Ոչ ստանդարտ	-	32,000	-	32,000
Չաշխատող	-	-	586,170	586,170
Համախառն հաշվեկշռային արժեք	56,863,278	1,407,049	586,170	58,856,497
Արժեզրկումից պահուստ	(276,832)	(62,187)	(220,109)	(559,128)
Զուտ հաշվեկշռային արժեք	56,586,446	1,344,862	366,061	58,297,369
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	20,174,453	-	-	20,174,453
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	20,174,453	-	-	20,174,453
Արժեզրկումից պահուստ	(79,469)	-	-	(79,469)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	524,985	-	-	524,985
Համախառն հաշվեկշռային արժեք	524,985	-	-	524,985
Արժեզրկումից պահուստ	(1,370)	-	-	(1,370)
Զուտ հաշվեկշռային արժեք	523,615	-	-	523,615
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ				
Բարձր	9,207,362	-	-	9,207,362
Համախառն հաշվեկշռային արժեք	9,207,362			9,207,362
Արժեզրկումից պահուստ*	(17,213)	-	-	(17,213)
Զուտ	9,190,149			9,190,149

Հազար ՀՀ դրամ

Վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
31 դեկտեմբերի 2019				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	8,584,553	-	-	8,584,553
Ստանդարտ	17,448,709	-	-	17,448,709
Համախառն հաշվեկշռային արժեք	26,033,262	-	-	26,033,262
Արժեզրկումից պահուստ	(2,338)	-	-	(2,338)
Զուտ հաշվեկշռային արժեք	26,030,924	-	-	26,030,924
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով սպացվելիք գումարներ				
Ստանդարտ	16,142,596	-	-	16,142,596
Համախառն հաշվեկշռային արժեք	16,142,596	-	-	16,142,596
Արժեզրկումից պահուստ	(2,027)	-	-	(2,027)
Զուտ հաշվեկշռային արժեք	16,140,569	-	-	16,140,569
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ				
Ստանդարտ	1,120,096	-	-	1,120,096
Համախառն հաշվեկշռային արժեք	1,120,096	-	-	1,120,096
Արժեզրկումից պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	1,120,096	-	-	1,120,096
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	45,659,672	-	-	45,659,672
Ստանդարտ	536,983	88,717	-	625,700
Ոչ ստանդարտ	-	520,254	-	520,254
Չաշխատող	-	-	1,561,591	1,561,591
Համախառն հաշվեկշռային արժեք	46,196,655	608,971	1,561,591	48,367,217
Արժեզրկումից պահուստ	(917,571)	(337,443)	(1,185,775)	(2,440,789)
Զուտ հաշվեկշռային արժեք	45,279,084	271,528	375,816	45,926,428
Առևտրային վարկեր				
Բարձր	52,129,962	-	-	52,129,962
Ստանդարտ	12,325	2,320,048	-	2,332,373
Ոչ ստանդարտ	-	54,346	-	54,346
Չաշխատող	-	-	1,630,089	1,630,089
Համախառն հաշվեկշռային արժեք	52,142,287	2,374,394	1,630,089	56,146,770
Արժեզրկումից պահուստ	(160,952)	-	(355,431)	(516,383)
Զուտ հաշվեկշռային արժեք	51,981,335	2,374,394	1,274,658	55,630,387

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019			
Վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ	489,177	-	-	489,177
Համախառն հաշվեկշռային արժեք	489,177	-	-	489,177
Արժեզրկումից պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	489,177	-	-	489,177
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	10,679,810	-	-	10,679,810
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	10,679,810	-	-	10,679,810
Արժեզրկումից պահուստ	(27,892)	-	-	(27,892)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	724,304	-	-	724,304
Համախառն հաշվեկշռային արժեք	724,304	-	-	724,304
Արժեզրկումից պահուստ	(810)	-	-	(810)
Զուտ հաշվեկշռային արժեք	723,494	-	-	723,494
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ				
Բարձր	8,513,915	-	-	8,513,915
Ստանդարտ	2,367	30,926	-	33,293
Ոչ ստանդարտ	-	580	-	580
Չաշխատող	-	-	2,562	2,562
Համախառն հաշվեկշռային արժեք	8,516,282	31,506	2,562	8,550,350
Արժեզրկումից պահուստ*	(974)	-	-	(974)
Զուտ	8,515,308	31,506	2,562	8,549,376

*Արժեզրկումից պահուստը ներկայացնում է Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստները: Վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պահուստներում:

38.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Բանկը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Բանկը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականությա նհամեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար – դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում – գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար – Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն – այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's և Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար – դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում – գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն – 12-ամսյա դեֆոլտի հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար – դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն – այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական

փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Բանկի կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Բանկը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են դեֆոլտի ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված) գործոններով, որոնք մատնանշում են դեֆոլտի ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հաճախորդներին տրված վարկերի, վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքների համար միջին 12-ամսյա PD-ները ըստ

Հազար ՀՀ դրամ	Վարկանիշ	2020 12-ամսյա PD –ի միջակայք	2019 12-ամսյա PD –ի միջակայք
Հիփոթեքային և սպառողական վարկեր	Բարձր, Ստանդարտ	1.47-62.03%	0.67-6.42%
	Ոչ ստանդարտ	26.70-62.03%	14.74-68.21%
	Չաշխատող	94.98-100%	94.12-100%
Վարկեր կոմերցիոն հաճախորդներին	Բարձր, Ստանդարտ	0.43-4.59%	0.47-4.59%
	Ոչ ստանդարտ	7.23-78.41%	22.51-61.22%
	Չաշխատող	76.82-100%	96.03-100%

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի գնահատման համակարգի քարտեզագրումը և *գործընկերների արտաքին վարկանիշները*.

Միջազգային արտաքին վարկանիշային գործակալության (S&P) վարկանիշ	Վարկանիշ	2020 12-ամսյա PD	2019 12-ամսյա PD
AAA -ից A-	Բարձր	0.001-0.040%	0.001-0.040%
BBB+ -ից B-	Ստանդարտ	0.059-7.207%	0.052-7.480%
CCC+ to CC	Ոչ ստանդարտ	12.834-23.604%	13.385-29.130%
D	Չաշխատող	100%	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Բանկը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապատասխան ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Բանկը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Դեֆոլտի սահմանում և «առողջացում»

Բանկը համարում է ֆինանսական գործիքը դեֆոլտի ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Բանկը միջբանկային հաշիվները համարում է դեֆոլտի ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ դեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն դեֆոլտում է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,

- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. Հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Բանկը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Բանկը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ կանխատեսվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Բանկի՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Բանկը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացմանե ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Բանկը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝

որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:
- Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.4 ծանոթագրությունում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Փուլ 2-ում և Փուլ 3-ում ներառված ակտիվները, որոնք փոփոխվել են, և, հետևաբար, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համարվում են վերանայված՝ Բանկի կողմից փոփոխությունների գծով կրած կորուստների հետ միասին:

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեք	54,300	60,031
Փոփոխությունից զուտ վնաս	(12,690)	(44,908)

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտ հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:

Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար դեֆոլտի ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը, ինչը հաշվի է առնում դեֆոլտի պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի դեֆոլտների վերջին տվյալների վերլուծության վրա:

Կանխատեսվող տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Բանկը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը ակնկալվող պարտքային կորուստների վրա հաշվարկելու համար Բանկն օգտագործում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակ որպես ելակետային տվյալներ իր մոդելների համար, այդ թվում՝

- ՀՆԱ-ի աճ,
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանֆերտներ (արտահայտված ԱՄՆ դոլլարով)
- Գործազրկության մակարդակ, ընդամենը (ընդհանուր աշխատուժի տոկոս)
- Բանկի չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում (%)
- Առևտուր (աճի տեմպ %)
- Արդյունաբերություն (աճի տեմպ %)
- Արտարժույթի փոխարժեք
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

38.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն հիմնականում տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

Արդյունաբերության ճյուղեր

Վարկային ներդրումների վերլուծությունը ըստ ճյուղերի ներկայացված է 21 ծանոթագրությունում:

38.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը նաև երաշխիքներ է ստանում մայր ընկերություններից իրենց դուստր ընկերությունների վարկերի համար: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Անշարժ գույք	67,045,128	55,472,352
Շարժական գույք և այլ հիմնական միջոցներ	1,212,684	3,227,779
Ընթացիկ հաշիվներ և ժամկետային ավանդներ	5,884,680	6,220,079
Պաշարներ	3,140,741	3,323,674
Երաշխավորություններ	6,899,219	4,655,659
Ոսկյա զարդեր և ոսկյա այլ իրեր	1,515,356	1,095,790
Այլ	235,661	-
Ապահովվածություն չունեցող	29,873,263	30,518,654
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	115,806,732	104,513,987

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված

վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

38.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

38.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով:

Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով եկամտաբերության կորի ենթադրվող փոփոխությունները:

Հազար ՀՀ դրամ

		2020		
				Կապիտալի զգայունություն
Արտարժույթ	**Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում**	**Զուտ տոկոսային եկամտի զգայունություն**	**Կապիտալի զգայունություն**	**Ընդամենը**
ՀՀ դրամ	+1	34,750	(579,074)	(544,324)
ՀՀ դրամ	(1)	(34,750)	579,074	544,324

Հազար ՀՀ դրամ	2019			
				Կապիտալի զգայունություն
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն	Ընդամենը
ՀՀ դրամ	+1	6,715	(363,432)	(356,717)
ՀՀ դրամ	(1)	(6,715)	363,432	356,717

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.		31 դեկտեմբերի 2019թ.	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
Ազատ փոխարկելի	+5	48,530	+5	75,063
Ոչ ազատ փոխարկելի	+5	187	+5	(2,147)

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ				2020
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,440,326	21,473,543	1,557,314	37,471,183
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	16,832,902	1,348,171	-	18,181,073
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	348,877	830,992	-	1,179,869
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	13,289,320	1,199,288	-	14,488,608
- Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,728,670	-	-	5,728,670
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	43,659,966	68,056,382	-	111,716,348
Այլ ֆինանսական ակտիվներ	104,031	284,806	134,778	523,615
	94,404,092	93,193,182	1,692,092	189,289,366
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,100,631	649,295	-	2,749,926
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,524,178	-	-	16,524,178
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	43,578,367	77,762,293	2,885,747	124,226,407
Այլ փոխառություններ	9,302,316	6,437,468	-	15,739,784
Ստորադաս փոխառություններ	-	5,303,185	-	5,303,185
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,061,228	36,328	472	2,098,028
	73,566,720	90,188,569	2,886,219	166,641,508
Կանոնավոր գնման պայմանագրեր-սփոթ գործարքների ազդեցությունը	-	(1,197,872)	1,197,872	-
Ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	768,800	(836,144)	-	(67,344)
Զուտ դիրք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,606,172	970,597	3,745	22,580,514
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին	6,395,379	2,794,770	-	9,190,149

Հազար ՀՀ դրամ	2019			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	77,672,593	76,183,479	2,927,638	156,783,710
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	58,464,717	75,413,762	1,152,271	135,030,750
Կանոնավոր գնման պայմանագրեր-սփոթ գործարքների ազդեցությունը	(64,514)	1,882,822	(1,818,308)	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	1,152,000	(1,151,280)	-	720
Զուտ դիրք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,295,362	1,501,259	(42,941)	21,753,680
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2019թ. դեկտեմբերի 31-ին	4,865,293	3,684,083	-	8,549,376

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

38.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 16-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2020, %	2019, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	26.00	21.85
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	152.21	142.64

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 37-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,753,134	-	-	-	2,753,134	2,749,926
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,544,173	-	-	-	16,544,173	16,524,178
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	38,747,693	51,201,986	40,359,518	6,421	130,315,618	124,226,407
Այլ փոխառություններ	77,593	1,455,242	12,094,374	5,842,381	19,469,590	15,739,784
Ստորադաս փոխառություններ	25,226	444,302	1,883,643	5,648,554	8,001,725	5,303,185
Այլ ֆինանսական պարտավորություններ	702,640	652,913	653,412	501,926	2,510,891	2,098,028
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	58,850,459	53,754,443	54,990,947	11,999,282	179,595,131	166,641,508

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն	Հաշվեկշռային արժեք
Ածանցյալ ֆինանսական գործիքներ						
Արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրեր						
Ներհոսք	-	384,000	384,800		768,800	768,800
Արտահոսք	-	(418,072)	(418,072)		(836,144)	(836,144)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	313,820	4,179,474	4,370,072	326,783	9,190,149	9,190,149

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,750,595	1,345,910	-	-	4,096,505	4,096,505
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	12,728,924	-	-	-	12,728,924	12,713,336
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26,391,515	44,456,097	34,398,502	5,111	105,251,225	100,127,629
Այլ փոխառություններ	40,801	591,146	3,301,015	4,266,372	8,199,334	6,097,777
Ստորադաս փոխառություններ	23,093	6,191,806	1,727,866	5,617,405	13,560,170	10,261,764
Այլ ֆինանսական պարտավորություններ	828,736	522,362	344,280	209,195	1,904,573	1,733,739
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	42,763,664	53,107,321	39,771,663	10,098,083	145,740,731	135,030,750
Ածանցյալ ֆինանսական գործիքներ						
Արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրեր						
Ներհոսք	-	383,200	768,800	-	1,152,000	1,152,000
Արտահոսք	-	(383,760)	(767,520)	-	(1,151,280)	(1,151,280)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	103,065	3,188,147	3,675,405	1,582,759	8,549,376	8,549,376

38.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Խորհուրդը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

39 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ					2020
	Ստորադաս փոխառություններ	Այլ երկարաժամկետ փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Պարտավորություններ շահաբաժինների գծով	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	10,261,764	6,097,777	480,323	426,000	17,265,864
Դրամային հոսքերից	(5,716,940)	8,606,497	(125,337)	(426,000)	2,338,220
Վճարումներ	(5,716,940)	(872,023)	(125,337)	(426,000)	(7,140,300)
Ստացված գումար	-	9,478,520	-		9,478,520
Ոչ դրամային հոսքերից	758,361	1,035,510	556,917	481,842	2,832,630
Վարձակալության գծով պարտավորության ճշգրտում	-	-	100,331	-	100,331
Վարձակալության գծով պարտավորության ավելացում	-	-	475,169	-	475,169
Վարձակալության գծով պարտավորության դուրսգրում	-	-	(71,895)	-	(71,895)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	758,361	1,000,840	-	-	1,759,201
Հաշվեգրված և չվճարված տոկոսներ	-	34,670	53,312	-	87,982
Շահաբաժնի հաշվեգրում	-	-	-	481,842	481,842
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,303,185	15,739,784	911,903	481,842	22,436,714

Հազար ՀՀ դրամ

	Ստորադաս փոխառություններ	Այլ երկարաժամկետ փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Պարտավորություններ շահաբաժինների գծով	Ընդամենը
2019					
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	10,466,922	3,707,012	-	426,000	14,599,934
Դրամային հոսքերից	-	2,384,802	(73,020)	(426,000)	1,885,782
Վճարումներ	-	(602,710)	(73,020)	(426,000)	(1,101,730)
Ստացված գումար	-	2,987,512	-	-	2,987,512
Ոչ դրամային հոսքերից	(205,158)	5,963	553,343	426,000	780,148
Անցում ՖՀՄՍ 16-ին	-	-	335,124	-	335,124
Վարձակալության գծով պարտավորության ճշգրտում	-	-	22,787	-	22,787
Վարձակալության գծով պարտավորության ավելացում			171,857	-	171,857
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(205,393)	-	-	-	(205,393)
Հաշվեգրված և չվճարված տոկոսներ	235	5,963	23,575	-	29,773
Շահաբաժնի հաշվեգրում	-	-	-	426,000	426,000
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,261,764	6,097,777	480,323	426,000	17,265,864

40 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Բանկերի համար ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանվում է 30.000.000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Հիմնական կապիտալ	29,266,068	26,865,186
Լրացուցիչ կապիտալ	8,779,820	6,807,376
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	38,045,888	33,672,562
Ռիսկով կշռված ակտիվներ	192,308,841	160,474,732
Կապիտալի համարժեքության նորմատիվ	19,78%	20.98%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

41 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

2021թ.-ի մարտի 2-ին Բանկը բաց տեղաբաշխմամբ թողարկել է պարտատոմսեր 500 մլն. ՀՀ դրամ և 5 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով:

2021թ.-ի մարտի 23-ին Բանկը բաց տեղաբաշխմամբ թողարկել է պարտատոմսերի երկրորդ տրանշը 500 մլն ՀՀ դրամ և 5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով: Պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են:

Պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը՝ 10% և 5.5% է, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ եռամսյակային, շրջանառության ժամկետը՝ 30 ամիս:

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	10
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	12
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	14
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	16

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9
Հ. + 374 10 500 964

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia
T + 374 10 500 964

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և

ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

- *Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4.4-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 38.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային

ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:

- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության

վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը՝ Լիլիթ Արաբաջյանն է:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Լիլիթ Արաբաջյան
Առաջադրանքի պատասխանատու

15 ապրիլի 2022թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2021	2020
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	6	15,796,564	15,052,441
Տոկոսային ծախսեր	6	(9,329,629)	(7,400,859)
Զուտ տոկոսային եկամուտներ		6,466,935	7,651,582
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	1,991,958	1,198,488
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(1,264,103)	(782,157)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ		727,855	416,331
Զուտ առևտրային եկամուտ	8	1,897,430	1,093,127
Այլ գործառնական եկամուտներ	9	289,946	291,656
Այլ գործառնական ծախսեր	10	(1,126,937)	(480,886)
Գործառնական եկամուտ		8,255,229	8,971,810
Արժեզրկման ծախս	11	(2,088,173)	(3,515,440)
Անձնակազմի գծով ծախսեր	12	(2,427,603)	(2,369,862)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	21	(759,799)	(597,012)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	13	(1,503,136)	(1,452,617)
Շահույթ մինչև հարկումը		1,476,518	1,036,879
Շահութահարկի գծով ծախս	14	(348,492)	(274,925)
Տարվա շահույթ		1,128,026	761,954

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2021	2020
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում			
Հիմնական միջոցների վերագնահատում		-	2,661,164
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		-	(479,010)
Զուտ օգուտ հոդվածներից, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում		-	2,182,154
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)			
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ վնաս		(758,840)	(370,279)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		(7,549)	51,577
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		136,591	66,650
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով զուտ վնաս		(629,798)	(252,052)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի		(629,798)	1,930,102
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		498,228	2,692,056

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 102-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	43,389,076	37,471,183
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	16	20,348,011	18,181,073
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	17	2,294,215	1,179,869
Ներդրումային արժեթղթեր	19	27,072,990	20,217,278
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	20	139,957,954	111,716,348
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	21	9,269,430	9,517,804
Ընթացիկ շահութահարկի գծով ակտիվ		-	370,530
Բռնագանձված ակտիվներ	22	1,994,038	2,072,059
Այլ ակտիվներ	23	1,389,278	694,173
Ընդամենը՝ ակտիվներ		245,714,992	201,420,317
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	24	1,410,385	2,749,926
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	25	16,010,497	16,524,178
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26	153,009,627	124,226,407
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	18	-	67,344
Թողարկված պարտքային արժեթղթեր	27	5,822,097	-
Այլ փոխառություններ	28	27,607,361	15,739,784
Ստորադաս փոխառություններ	29	4,872,881	5,303,185
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		12,910	-
Հետաձգված հարկային պարտավորություն	14	759,792	620,955
Այլ պարտավորություններ	30	2,433,812	2,340,136
Ընդամենը՝ պարտավորություններ		211,939,362	167,571,915

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	31	20,000,000	20,000,000
Գլխավոր պահուստ		2,000,000	1,000,000
Այլ պահուստներ		2,791,493	3,529,008
Չբաշխված շահույթ		8,984,137	9,319,394
Ընդամենը՝ սեփական կապիտալ		33,775,630	33,848,402
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		245,714,992	201,420,317

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. ապրիլի 15-ին

ՀՀ, «ԷՎՈՔԱԲԱՆԿ» ՓԲԸ
«ЭВОКАБАНК» ЗАО
ARMENIA "EVOCABANK" CJSC
evocaBANK
00001182

Կարեն Եղիազարյան
Վարչության նախագահ

Էմմա Ջանինյան
Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների ուղեկցող մաս կազմող 16-ից մինչև 102-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթեր իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	20,000,000	1,000,000	(65,685)	3,594,693	9,319,394	33,848,402
Տարվա շահույթ	-	-	-	-	1,128,026	1,128,026
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հիմնական միջոցների մաշվածությունից կամ իրացումից պահուստի ճշգրտում	-	-	-	(107,717)	107,717	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	(758,840)	-	-	(758,840)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	(7,549)	-	-	(7,549)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	136,591	-	-	136,591
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(629,798)	(107,717)	1,235,743	498,228
Հատկացում պահուստին	-	1,000,000	-	-	(1,000,000)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	(571,000)	(571,000)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	1,000,000	-	-	(1,571,000)	(571,000)
Հաշվեկշիռը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,000,000	2,000,000	(695,483)	3,486,976	8,984,137	33,775,630

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթեր իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	17,950,000	262,075	186,367	1,488,560	9,701,186	29,588,188
Տարվա շահույթ	-	-	-	-	761,954	761,954
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	2,661,164		2,661,164
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	(76,021)	76,021	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	(370,279)	-	-	(370,279)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	51,577	-	-	51,577
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	66,650	(479,010)	-	(412,360)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(252,052)	2,106,133	837,975	2,692,056
Բաժնետիրական կապիտալի ավելացում	2,050,000	-	-	-	-	2,050,000
Հատկացում պահուստին	-	737,925	-	-	(737,925)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	(481,842)	(481,842)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	2,050,000	737,925	-	-	(1,219,767)	1,568,158
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,000,000	1,000,000	(65,685)	3,594,693	9,319,394	33,848,402

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 102-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2021	2020
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	1,476,518	1,036,879
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	759,799	597,012
Հիմնական միջոցների օտարումից զուտ (օգուտ)/վնաս	5,100	(340)
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս/(օգուտ)	(2,176)	4,237
Արժեզրկման ծախս	2,088,173	3,515,440
Ածանցյալ ֆինանսական գործիքների վերագնահատումից զուտ (օգուտ)/վնաս	(67,344)	68,064
Զուտ (օգուտ)/վնաս ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	508,868	(84,642)
Շենքերի վերագնահատումից վնաս	-	5,687
Ստացվելիք տոկոսներ	(220,997)	(1,464,315)
Վճարվելիք տոկոսներ	716,754	94,279
Տոկոսային ծախս վարձակալության գծով	81,019	53,312
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	5,345,714	3,825,613
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(2,246,795)	(1,884,308)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	(1,560,272)	335,870
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(37,791,440)	(4,968,176)
Բռնագանձված ակտիվներ	159,460	130,215
Այլ ակտիվներ	(448,852)	218,966
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	(1,334,126)	(2,203,444)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(519,199)	3,812,311
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	36,209,088	17,004,658
Այլ պարտավորություններ	225,954	(61,021)
Գործառնական (գործունեության համար օգտագործված)/գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը	(1,960,468)	16,210,684
Վճարված շահութահարկ	-	(715,884)
Գործառնական (գործունեության համար օգտագործված)/գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(1,960,468)	15,494,800

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2021	2020
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք	(7,598,109)	(9,128,170)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(516,525)	(991,119)
Հիմնական միջոցների վաճառք	-	2,876
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(8,114,634)	(10,116,413)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	2,050,000
Վճարված շահաբաժիններ	(481,842)	(426,000)
Թողարկված պարտքային արժեթղթեր	6,276,715	-
Այլ փոխառություններ	13,058,243	8,606,497
Ստորադաս փոխառություններ	-	(5,716,940)
Վարձակալության գծով պարտավորություններ	(167,329)	(125,337)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	18,685,787	4,388,220
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	8,610,685	9,766,607
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	37,471,183	26,030,924
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,692,479)	1,675,312
Արժեզրկման գծով պահուստի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(313)	(1,660)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 15)	43,389,076	37,471,183

Լրացուցիչ տեղեկատվություն՝

Ստացված տոկոսներ	15,575,567	13,588,126
Վճարված տոկոսներ	(8,531,856)	(7,253,268)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 102-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ)՝ անվանափոխված «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ն է, որը հիմնադրվել է 01.06.1990թ. և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 02.10.1991թ. ՀՀ կենտրոնական բանկ (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N27 արտոնագրային համարով:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 13 մասնաճյուղեր գտնվում են Երևանում, մեկ մասնաճյուղ՝ Գյումրիում, մեկ մասնաճյուղ՝ Աբովյան քաղաքում, մեկ մասնաճյուղ՝ Վանաձոր քաղաքում:

Բանկի աշխատակիցների թիվը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կազմում է 369:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հանրապետության 44/2 փող., Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն:

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

2020թ. անկումից հետո Հայաստանի տնտեսությունը թևակոխել է կայուն վերականգնման փուլ: Ակնկալվում է, որ COVID-19-ի համավարակային իրավիճակի աստիճանական բարելավումը, Արցախի Հանրապետության վիճելի տարածքների շուրջ հրադադարի մասին համաձայնագիրը, ինչպես նաև պետական և մասնավոր ներդրումների ընդլայնումը կխթանեն 2022թ. աճը: Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված Կառավարության ջանքերը, ՓՄՁ-ների համար ֆինանսական հասանելիության ընդլայնումը, առաջնահերթ սոցիալական ծախսերի համար հնարավորությունների ստեղծումը, ինչպես նաև կապիտալի շուկայի զարգացման ընդլայնված գործողությունների ծրագիրը նույնպես կարող են Հայաստանի տնտեսության կայունության և զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծել:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Այնուամենայնիվ, ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով բացառությամբ, հողի, շինությունների և այլնի, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ 2021թ հունիսի 30-ից հետո (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),*
- *«Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)» (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- *ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»*
- *Փոփոխություններ ՖՀՄՍ 17 Ապահովագրական պայմանագրերում (Փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում և ՖՀՄՍ 4-ում),*
- *«Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
- *«Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)*
- *Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*
- *2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):*
- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),*
- *Մեկ գործարքի հետ կապված ակտիվների և պարտավորությունների հետաձգված հարկ:*

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր

պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի մաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռսբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս 4.4.6 ծանոթագրությունում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները

ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	480.14	522.59
ՀՀ դրամ/1 Եվրո	542.61	641.11
ՀՀ դրամ/1 ՌՈՒԲ	6.42	7.02

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ

կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Բանկն սկզբնապես ճանաչում է վարկերը և փոխատվությունները, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Բանկի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Բանկի ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Բանկը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Բանկը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է

փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Բանկը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Բանկի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Բանկը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակայինօգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված

ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու հատույցները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Բանկը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները:

Գործարքներում, որոնցում Բանկը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Բանկը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տե՛ս 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական

պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Բանկի առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

Բանկը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- փոխատվության հանձնառություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Բանկը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Բանկը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 38.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Բանկը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Բանկը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Բանկը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Բանկը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը պարտազանցման պահին պարտքի գումարը, պարտազանցման դեպքում կորստի գումարը մանրամասն բացահայտվում են 38.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տե՛ս՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանասկան ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,

- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,
- փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Փոխատվության հանձնառությունների չօգտագործված մասի գծով ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Բանկը գնահատում է փոխատվության հանձնառությանամբողջ ժամկետի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակտնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորստներից առանձին՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և:
  - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Բանկի պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստներում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Բանկը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական

ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Բանկի պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, ինչպես նաև մինչև 90 ժամկետով ավանդներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Բանկերի նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Վարկերը և փոխատվությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.8 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- պարտքային և բաժնային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորոշվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,

- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և հակադարձում
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

4.9 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է հետգնման պայմանագերերի գծով վճարվելիք գումարներ հոդվածում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես հակադարձ հետգնման պայմանագերերի գծով ստացվելիք գումարներ հոդվածում: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերը ճանաչվում են «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» հոդվածում, իսկ համապատասխան պարտավորությունն արտացոլվում է «Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ» հոդվածում:

4.10 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության Զուտ առևտրային եկամուտ հոդվածում:

4.11 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բանկը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բանկին,
- Բանկն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Բանկն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բանկն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բանկը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով

վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

4.12 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքերը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	40	2.5
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-8	100-12.5
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	5-8	20-12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կիոսեն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Հողի և շինությունների վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից:

Հիմնական միջոցների օգտագործմանը զուգահեռ, տվյալ ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.13 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 1-10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.14 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.15 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

4.16 Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին

հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

4.17 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կենտրոնական բանկի և ֆինանսական կազմակերպությունների, հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Երբ Բանկը գնում է իրեն պատկանող արժեթղթերը, դրանք դուրս են գրվում հաշվեկշռից, և հաշվեկշռային արժեքի ու վճարված գումարի տարբերությունն արտացոլվում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

4.18 Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.19 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.18 ծանոթագրությունում:

4.20 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են

կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.21 Սեգմենտների ներկայացում

Գործառնական սեգմենտը հանդիսանում է Բանկի բիզնես գործառնությունների բաղկացուցիչ մասը, որոնցից այն կարող է վաստակել եկամուտ և կատարել ծախսեր, ներառյալ Բանկի այլ որևէ բաղկացուցիչ մասի հետ կապված գործառնություններից եկամուտներն ու ծախսերը: Գործառնական սեգմենտները որոշելիս Բանկի ղեկավարությունը տարանջատում է Բանկի այն կոմպոնենտները, որոնք ներառված են ծառայությունների մատուցման մեջ (բիզնես սեգմենտ) և որի համար առկա է ֆինանսական տեղեկատվություն: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Բանկի գործադիր տնօրենի կողմից՝ սեգմենտին միջոցներ հատկացնելու որոշում կայացնելու համար և գնահատելու դրա կատարումը: Այս ֆինանսական հաշվետվությունների շրջանակներում Բանկի աշխարհագրական սեգմենտները ներկայացված են հիմնվելով գործընկերների գտնվելու վայրի վրա՝ հիմնվելով ավելի շուտ տնտեսական ռիսկի, քան իրավաբանական ռիսկի վրա:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների

հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

5.1 Դատողություններ

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տե՛ս 4.4.2 ծանոթագրությունը):

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբորող չափանիշների սահմանում

Բանկը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

5.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 35):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից

կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տե՛ս ծանոթագրություն 38.1.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս ծանոթագրություն 4.4.6):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս ծանոթագրություն 33:

6 Զուտ տոկոսային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Արդյունավետ տոկոադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	12,349,342	12,880,646
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,782,037	1,147,823
Հակադարձ ռեպո գործառնություններ	1,515,266	939,179
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	97,964	62,059
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	50,060	19,484
Այլ	1,895	3,250
Ընդամենը տոկոսային եկամուտ	15,796,564	15,052,441
Հաճախորդների հաշիվներ	6,295,942	5,203,247
Ռեպո գործառնություններ	1,094,971	904,762
Այլ փոխառություններ	990,583	550,764
Ստորադաս փոխառություն	453,355	441,352
Թողարկված պարտատոմսեր	302,121	178,282
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	111,059	69,140
Տոկոսային ծախս վարձակալության գծով	81,019	53,312
Այլ	579	-
Ընդամենը տոկոսային ծախս	9,329,629	7,400,859
Ընդամենը զուտ տոկոսային եկամուտ	6,466,935	7,651,582

7 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	644,552	321,410
Վճարային քարտերով գործառնություններ	1,072,269	636,731
Դրամարկղային գործառնություններ	148,718	92,340
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	93,833	71,435
Կանխիկ անկանխիկ արտարժույթի փոխարկումներ	14,553	52,615
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	18,033	23,957
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,991,958	1,198,488

Կանխիկ/անկանխիկ արտարժույթի փոխարկումներ	144,529	99,871
Վճարային քարտերով գործառնություններ	904,717	538,639
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	188,747	102,581
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	20,627	4,377
Այլ ծախսեր	5,483	36,689
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	1,264,103	782,157

8 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտ	1,825,960	1,163,044
Զուտ եկամուտ/(վնաս) ածանցյալ գործիքներից	67,344	(78,486)
Շահույթ կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթերի առք ու վաճառքից զուտ եկամուտ	4,126	8,569
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	1,897,430	1,093,127

9 Այլ գործառնական եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ստացված տույժեր և տուգանքներ	231,633	151,403
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումներից զուտ եկամուտ	-	84,642
Եկամուտներ ակտիվներին վերաբերող շնորհներից	2,075	2,074
Շահաբաժիններից եկամուտ	-	2,703
Այլ ակտիվների վաճառքից զուտ եկամուտ	2,176	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից զուտ եկամուտ	-	340
Այլ	54,062	50,494
Ընդամենը այլ գործառնական եկամուտներ	289,946	291,656

10 Այլ գործառնական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով ծախսեր	374,361	271,099
Գործառնական համակարգերի օգտագործման ծախսեր	91,586	58,160
Քարտերի թողարկման ծախսեր	26,573	35,153
Ինկասացիոն ծախսեր	28,644	25,637
Վարկերի զիջման ծախսեր	10,259	21,580
Ֆինանսական հաշտարարի գծով ծախսեր	21,732	17,327
Շենքերի վերագնահատումից վնաս	-	5,687
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից զուտ վնաս	5,097	-
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս	-	4,237
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումներից զուտ վնաս	508,868	-
Այլ	59,817	42,006
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	1,126,937	480,886

11 Արժեզրկման ծախս/(հակադարձում)

Հազար ՀՀ դրամ					2021
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	313	-	-	313
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	16	2,216	-	-	2,216
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	17	(5,808)	-	-	(5,808)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	19	(7,549)	-	-	(7,549)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	19	7,580	-	-	7,580
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	20	(73,177)	(726,439)	2,886,538	2,086,922
Այլ ակտիվներ	23	6,129	-	-	6,129
Ֆինանսական երաշխիքներ	32	(1,630)	-	-	(1,630)
Ընդամենը արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)		(71,926)	(726,439)	2,886,538	2,088,173

Հազար ՀՀ դրամ					2020
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը 2020թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	1,660	-	-	1,660
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	16	7,940	-	-	7,940
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	17	10,892	-	-	10,892
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	19	51,577	-	-	51,577
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	20	39,769	591,521	2,776,194	3,407,484
Այլ ակտիվներ	23	19,648	-	-	19,648
Ֆինանսական երաշխիքներ	32	16,239	-	-	16,239
Ընդամենը արժեզրկման ծախս		147,725	591,521	2,776,194	3,515,440

12 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	2,310,673	2,278,235
Անձնակազմի ուսուցման ծախսեր	29,703	16,145
Անձնակազմի գծով այլ ծախսեր	87,227	75,482
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	2,427,603	2,369,862

13 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Գովազդի ծախսեր	348,697	319,317
Ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	231,192	203,126
Ներկայացուցչական և կազմակերպչական ծախսեր	92,096	148,765
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	163,358	144,058
Վարկերի վերադարձման գծով ծախսեր	163,290	129,122
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	71,080	104,864
Անվտանգության գծով ծախսեր	100,833	87,097
Գրասենյակային ծախսեր	67,038	85,748
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	55,228	72,334
Ապահովագրության գծով ծախսեր	62,715	57,531
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	75,403	43,547
Ակտիվների կարճաժամկետ վարձակալության ծախսեր	49,429	36,126
Այլ	22,777	20,982
Ընդամենը այլ ընդհանուր վարչական ծախսեր	1,503,136	1,452,617

14 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ընթացիկ հարկի գծով ծախս	91,399	-
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	(18,335)	35,047
Հետաձգված հարկ	275,428	239,878
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	348,492	274,925

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2020թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթիմիջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2021	Արդյունավետ դրույքաչափ (%)	2020	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	1,476,518		1,036,879	
Շահութահարկ	265,773	18	186,638	18
Զուտ չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտ)	24,105	2	68,475	6
Արտարժույթի (դրական)/ բացասական փոխարժեքային տարբերություն	89,071	6	(15,235)	(1)
Նախորդ տարվա հարկի ճշգրտում	(18,335)	(1)	35,047	3
Զուտ (օգուտ)/վնաս ածանցյալ գործիքների վերագնահատումից	(12,122)	(1)	-	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	348,492	24	274,925	26

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	1 հունվարի 2021	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2021 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(8,685)	3,734	-	(4,951)	-	(4,951)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(30,950)	30,651	-	(299)	-	(299)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	950	(1,603)	-	(653)	-	(653)
Ներդրումային արժեթղթեր	31,864	1,364	136,591	169,819	169,819	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	127,103	(304,319)	-	(177,216)	-	(177,216)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(772,237)	35,880	-	(736,357)	-	(736,357)
Այլ ակտիվներ	(1,336)	142	-	(1,194)	-	(1,194)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(5,338)	(2,801)	-	(8,139)	-	(8,139)
Այլ փոխառություններ	174	(18,979)	-	(18,805)	-	(18,805)
Ստորադաս փոխառություններ	(52)	52	-	-	-	-
Այլ պարտավորություններ	21,162	(3,159)	-	18,003	18,003	-
Փոխանցված հարկային վնաս	16,390	(16,390)	-	-	-	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(620,955)	(275,428)	136,591	(759,792)	187,822	(947,614)

Հազար ՀՀ դրամ	1 հունվարի 2020	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2020 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(783)	(7,902)	-	(8,685)	-	(8,685)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(29,044)	(1,906)	-	(30,950)	-	(30,950)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	(4,581)	5,531	-	950	950	-
Ներդրումային արժեթղթեր	(34,786)	-	66,650	31,864	31,864	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	321,848	(194,745)	-	127,103	127,103	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(316,178)	22,951	(479,010)	(772,237)	-	(772,237)
Այլ ակտիվներ	(2,146)	810	-	(1,336)	-	(1,336)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2,605	(7,943)	-	(5,338)	-	(5,338)
Այլ փոխառություններ	-	174	-	174	174	-
Ստորադաս փոխառություններ	-	(52)	-	(52)	-	(52)
Այլ պարտավորություններ	94,348	(73,186)	-	21,162	21,162	-
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	-	16,390	-	16,390	16,390	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	31,283	(239,878)	(412,360)	(620,955)	197,643	(818,598)

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	31,280,861	24,196,064
Կանխիկ դրամական միջոցներ	11,023,309	9,024,169
Թղթակցային հաշիվներ բանկերում	1,089,217	2,254,538
Մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	2,000,410
	43,393,387	37,475,181
Արժեզրկումից պահուստներ	(4,311)	(3,998)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	43,389,076	37,471,183

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային

միջոցների 4%-ի (2020թ՝ 2%) չափով և արտարժույթով ներգրավված միջոցների 18%-ի չափով: Բանկերը արտարժույթով ներգրավված միջոցների 10%-ը պահուստավորում են ՀՀ դրամով և 8%-ը ՝ արտարժույթով: Այդ միջոցները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 21,141,006 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 15,729,522 հազար դրամ):

ՀՀ դրամով պահվող պահուստները ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	3,998	2,338
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(3,998)	(2,338)
Տրամադրված նոր ֆինանսական ակտիվներ	4,311	3,998
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,311	3,998

16 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Հակադարձ հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ	20,360,194	18,191,040
	20,360,194	18,191,040
Արժեզրկումից պահուստներ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների գծով	(12,183)	(9,967)
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	20,348,011	18,181,073

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ պայմանագրային կողմ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ պայմանագրային կողմ), որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պայմանագրերի զուտ գումարը կազմում է 4,174,783 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,607,163 հազար դրամ):

Հակադարձ ռեպո համաձայնագրերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	9,967	2,027
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(9,967)	7,940
Տրամադրված նոր ֆինանսական ակտիվներ	12,183	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,183	9,967

Հակադարձ հետգնման համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021		2020	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսեր	21,926,478	20,360,194	18,949,307	18,191,040
Ընդամենը գրավադրված ակտիվներ և հակադարձ ռեպո պայմանագրերով տրամադրված վարկեր	21,926,478	20,360,194	18,949,307	18,191,040

2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հակադարձ ռեպո պայմանագրերով որպես գրավ ստացած և ռեպո պայմանագրերի ներքո վերագրավադրված արժեթղթեր (2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերագրավադրված արժեթղթերի իրական արժեքը կազմում է 11,639,188 հազար ՀՀ դրամ):

17 Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Բանկերին տրամադրված վարկեր	870,896	561,477
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ	558,770	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	624,500	353,000
Դեպոնացված միջոցներ այլ բանկերում	245,133	275,805
Կանոնավոր գնման պայմանագրեր – սփոթ գործարքներ արտարժույթով	-	479
	2,299,299	1,190,761
Արժեզրկումից պահուստներ բանկերին տրված վարկեր և փոխատվությունների գծով	(5,084)	(10,892)
Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	2,294,215	1,179,869

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեպոնացված գումարը բանկերում իրենից ներկայացնում է Master Card վճարային համակարգում անդամակցության դիմաց սառեցված ավանդ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի ոչ մի բանկի տրված միջոցներ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Բանկերին տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	10,892	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(7,405)	8,916
Տրամադրված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	1,597	1,976
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,084	10,892

18 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի և տոկոսադրույքի սվոփերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Բանկի պարտքային ռիսկը ներկայացնում է սվոպային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային ֆորվարդ պայմանագրեր	768,800	-	67,344
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	768,800	-	67,344

19 Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	3,638,825	-
Արժեզրկման գծով պահուստ	(7,580)	-
Ընդամենը ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	3,631,245	-

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	-	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	-	-
Տրամադրված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	7,580	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,580	-

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	9.5-10.5	2024-2031	-	-

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	5,385,976	12,433,482
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	1,240,328	2,012,301
Բաժնային գործիքներ	42,825	42,825
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	6,669,129	14,488,608

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	16,772,616	5,728,670
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	16,772,616	5,728,670

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված պարքային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	79,469	27,892
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(24,457)	30,902
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	16,908	20,675
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	71,920	79,469

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Բանկը տարվա ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող (2020թ.՝ ոչինչ):

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	6.4-10.0	2022-2037	6.1-9.9	2021-2036
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	7.5-11.0	2022-2049	4.0-12.8	2021-2023

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերում ներառված բաժնային չգնանշվող արժեթղթերը ներկայացվում են ստորև.

Անվանումը	Գրանցման երկիրը	Վերահսկվող %		Հազար ՀՀ դրամ	
		2021	2020	2021	2020
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	1.25	1.25	10,717	10,717
ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ	Հայաստանի Հանրապետություն	5.9	5.9	32,108	32,108
				42,825	42,825

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ այս գործիքների գնահատված իրական արժեքը մոտարկում է դրանց սկզբնական արժեքին 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

20 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			31 դեկտեմբերի 2020թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	40,868,629	(119,218)	40,749,411	23,739,041	(62,948)	23,676,093
Սպառողական վարկեր	23,903,937	(1,352,611)	22,551,326	31,097,325	(3,286,193)	27,811,132
Օվերդրաֆտ	1,678,117	(94,140)	1,583,977	2,113,869	(182,115)	1,931,754
	66,450,683	(1,565,969)	64,884,714	56,950,235	(3,531,256)	53,418,979
Առևտրային վարկեր						
Շինարարություն	12,278,117	(165,819)	12,112,298	5,334,522	(120,412)	5,214,110
Արդյունաբերություն	15,450,816	(84,132)	15,366,684	11,810,478	(114,000)	11,696,478
Առևտուր	22,564,464	(168,402)	22,396,062	18,293,408	(234,503)	18,058,905
Ֆինանսական ծառայություններ	4,215,242	(63,426)	4,151,816	3,796,737	(12,574)	3,784,163
Այլ	21,111,164	(64,784)	21,046,380	19,621,352	(77,639)	19,543,713
	75,619,803	(546,563)	75,073,240	58,856,497	(559,128)	58,297,369
Ընդամենը	142,070,486	(2,112,532)	139,957,954	115,806,732	(4,090,384)	111,716,348

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել փոխատվության հանձնառության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների

հաշվեկշռային արժեքը կազմել է 79,263 հազար դրամ (2020թ.՝ 72,389 հազար դրամ): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի չորս վարկառու, որոնց, այդ թվում նրանց հետ կապակցված անձանց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 17,518,662 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 20,039,854 հազար դրամ ՝ տրամադրված թվով չորս վարկառուների և նրանց հետ կապակցված անձանց):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	52,174,460	1,509,383	3,266,392	56,950,235
Սկզբնավորված նոր ակտիվներ	45,683,651	96,297	57,382	45,837,330
Մարված ակտիվներ	(29,370,194)	(380,308)	(710,028)	(30,460,530)
- փոխանցում Փուլ 1	2,869,226	(1,257,948)	(1,611,278)	-
- փոխանցում Փուլ 2	(150,620)	1,152,909	(1,002,289)	-
- փոխանցում Փուլ 3	-	(141,862)	141,862	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(7,150,165)	261,841	5,084,351	(1,803,973)
Վերականգնում	-	-	1,409,422	1,409,422
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(5,481,801)	(5,481,801)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	64,056,358	1,240,312	1,154,013	66,450,683

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	56,863,278	1,407,049	586,170	58,856,497
Սկզբնավորված նոր ակտիվներ	65,284,002	19,039	8,324	65,311,365
Մարված ակտիվներ	(41,944,144)	(1,240,075)	(123,323)	(43,307,542)
- փոխանցում Փուլ 1	167,132	(60,125)	(107,007)	-
- փոխանցում Փուլ 2	(125,073)	143,065	(17,992)	-
- փոխանցում Փուլ 3	-	(125,354)	125,354	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(5,273,777)	74,384	(48,729)	(5,248,122)
Վերականգնում	-	-	110,787	110,787
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(103,182)	(103,182)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	74,971,418	217,983	430,402	75,619,803

Հազար ՀՀ դրամ				2020
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	46,196,655	608,971	1,561,591	48,367,217
Սկզբնավորված նոր ակտիվներ	35,292,260	584,808	958,191	36,835,259
Մարված ակտիվներ	(28,434,020)	(156,795)	(330,003)	(28,920,818)
- փոխանցում Փուլ 1	2,982,091	(1,074,553)	(1,907,538)	-
- փոխանցում Փուլ 2	(29,200)	72,146	(42,946)	-
- փոխանցում Փուլ 3	-	(3,663)	3,663	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(3,833,326)	1,478,469	5,331,909	2,977,052
Վերականգնում	-	-	497,109	497,109
Դուրսգրում տարվա ընթացքում			(2,805,584)	(2,805,584)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	52,174,460	1,509,383	3,266,392	56,950,235

Հազար ՀՀ դրամ				2020
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	52,142,287	2,374,394	1,630,089	56,146,770
Սկզբնավորված նոր ակտիվներ	95,483,899	240,836	159,219	95,883,954
Մարված ակտիվներ	(97,904,360)	(390,296)	(497,671)	(98,792,327)
- փոխանցում Փուլ 1	186,359	(116,290)	(70,069)	-
- փոխանցում Փուլ 2	(2,171,584)	2,252,333	(80,749)	-
- փոխանցում Փուլ 3	-	(984,811)	984,811	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	9,126,677	(1,969,117)	(1,573,663)	5,583,897
Վերականգնում	-	-	194,925	194,925
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(160,722)	(160,722)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	56,863,278	1,407,049	586,170	58,856,497

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	716,271	770,661	2,044,324	3,531,256
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում Փուլ 1	74,502	(29,115)	(45,387)	-
- փոխանցում Փուլ 2	(70,529)	600,661	(530,132)	-
- փոխանցում Փուլ 3	-	(76,748)	76,748	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(362,273)	(842,940)	3,114,454	1,909,241
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված նոր ակտիվների գծով	176,843	7,907	13,101	197,851
Վերականգնում	-	-	1,409,422	1,409,422
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(5,481,801)	(5,481,801)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	534,814	430,426	600,729	1,565,969

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	276,832	62,187	220,109	559,128
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում Փուլ 1	511	(142)	(369)	-
- փոխանցում Փուլ 2	(1,373)	2,442	(1,069)	-
- փոխանցում Փուլ 3	-	(112,315)	112,315	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(84,780)	108,594	(242,743)	(218,929)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված նոր ակտիվների գծով	197,033	-	1,726	198,759
Վերականգնում	-	-	110,787	110,787
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(103,182)	(103,182)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	388,223	60,766	97,574	546,563

Հազար ՀՀ դրամ				2020
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	917,571	337,443	1,185,775	2,440,789
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում Փուլ 1	6,470	(6,470)		-
- փոխանցում Փուլ 2	(37,923)	40,856	(2,933)	-
- փոխանցում Փուլ 3	(93,406)	(302,247)	395,653	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(478,073)	393,236	2,083,158	1,998,321
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված նոր ակտիվների գծով	401,632	307,843	691,146	1,400,621
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(2,308,475)	(2,308,475)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	716,271	770,661	2,044,324	3,531,256

Հազար ՀՀ դրամ				2020
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	160,952	-	355,431	516,383
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում Փուլ 1	-	-	-	-
- փոխանցում Փուլ 2	(126)	171,745	(171,619)	-
- փոխանցում Փուլ 3	(204)	-	204	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	81,037	(113,593)	1,890	(30,666)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված նոր ակտիվների գծով	35,173	4,035	-	39,208
Զուտ վերականգնում	-	-	34,203	34,203
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	276,832	62,187	220,109	559,128

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 14,902,415 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,302,316 հազար դրամ) ծառայում են որպես գրավ այլ փոխառությունների դիմաց:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 37 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 38 ծանոթագրությունում:

Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 34 ծանոթագրությունում:

21 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Հող և շենքեր	Վարձակալ. հիմն. միջ. գծով կապ. ներդր.	Համակարգչային տեխնիկա և կապի սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Գրասենյակային և այլ հիմնական միջոցներ	Հիմնական միջոցների գծով կապ. ներդրումներ	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ Հող և շենքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք									
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	4,633,873	93,844	1,482,817	159,435	738,629	-	443,493	529,768	8,081,859
Ավելացում	16,220	105,199	243,632	175	379,329	60,152	186,412	475,169	1,466,288
Վերադասակարգումներ	24,058	-	(860,146)	-	860,146	(24,058)	-	-	-
Օտարում	-	-	(22,397)	-	(11,862)	-	(2,530)	(78,675)	(115,464)
Վերագնահատում	2,655,477	-	-	-	-	-	-	-	2,655,477
Կուտակված մաշվածության բացառում	(580,751)	-	-	-	-	-	-	-	(580,751)
ՕԻՀ ակտիվի ճշգրտում	-	-	-	-	-		-	100,331	100,331
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,748,877	199,043	843,906	159,610	1,966,242	36,094	627,375	1,026,593	11,607,740
Ավելացում	9,099	12,133	77,019	6,457	290,274	9,252	112,291	-	516,525
Վերադասակարգումներ	45,346	1,850	709	-	(2,559)	(45,346)	-	-	-
Օտարում	-	-	(6,382)	-	(220,523)	-	(61,809)	-	(288,714)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,803,322	213,026	915,252	166,067	2,033,434	-	677,857	1,026,593	11,835,551
Կուտակված մաշվածություն									
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	529,715	39,172	873,283	51,298	398,296	-	163,759	59,185	2,114,708
Տարվա ծախս	174,264	10,590	111,840	17,556	145,872	-	44,889	92,001	597,012
Վերադասակարգումներ	-	-	(615,516)	-	615,516	-	-	-	-
Օտարում	-	-	(22,397)	-	(11,856)	-	-	(6,780)	(41,033)
Կուտակված մաշվածության բացառում	(580,751)	-	-	-	-	-	-	-	(580,751)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	123,228	49,762	347,210	68,854	1,147,828	-	208,648	144,406	2,089,936
Տարվա ծախս	216,614	13,456	128,428	17,506	204,033	-	63,179	116,583	759,799
Վերադասակարգումներ	-	-	(334)	-	334	-	-	-	-
Օտարում	-	-	(6,381)	-	(215,492)	-	(61,741)	-	(283,614)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	339,842	63,218	468,923	86,360	1,136,703	-	210,086	260,989	2,566,121
Հաշվեկշռային արժեք									
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,625,649	149,281	496,696	90,756	818,414	36,094	418,727	882,187	9,517,804
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,463,480	149,808	446,329	79,707	896,731	-	467,771	765,604	9,269,430

2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվներում ներառված են թվային համակարգերի վրա կատարված ներդրումները 192,313 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2020թ՝ 140,890 հազար դրամ):

Օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվներ

Օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվները իրենցից ներկայացնում են գրասենյակային տարածքներ, որոնք վարձակալվել են Բանկի կողմից մասնաճյուղերում գործունեություն իրականացնելու համար:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սահմանափակումներ

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Պայմանագրային պարտավորություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի Բանկն չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում ներդրումներ կատարելու նպատակով (2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 51,274 հազար դրամ):

Ակտիվների վերագնահատում

Բանկի սեփականությունը հանդիսացող հողատարածքների և շենքերի վերջին վերագնահատումը կատարվել է 2020թ-ի հունիսի 1-ի դրությամբ անկախ գնահատող կազմակերպության կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից աճ 2,661,164 հազար դրամ գումարով և վնաս 5,687 հազար դրամով: Ղեկավարությունը հիմք է ընդունել անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Բանկի ղեկավարության գնահատմամբ 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց իրական արժեքից:

Եթե վերագնահատված շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի մոդելի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքները կունենան հետևյալ տեսքը՝

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Սկզբնական արժեք	3,266,502	3,212,057
Կուտակված մաշվածություն	(1,055,431)	(970,179)
Հաշվեկշռային արժեք	2,211,071	2,241,878

22 Բռնագանձված ակտիվներ

Տարվա ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Անշարժ գույք	1,994,038	2,072,059
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	1,994,038	2,072,059

2021թ.-ի դեկտեմբերին ավարտվող տարվա ընթացքում Բանկի կողմից բռնագանձվել է 79,263 հազար ՀՀ դրամի գույք հաճախորդներին տրված վարկերի գրավների մասով (2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 72,389 հազար դրամ):

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի հանած վաճառքի ծախսումներից նվազագույնով:

23 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	1,061,047	390,361
Դրամական փոխանցումների համակարգերի գծով ստացվելիք գումարներ	168,015	134,624
Այլ ֆինանսական ակտիվներ	1,229,062	524,985
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(6,135)	(1,370)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	1,222,927	523,615
Կանխավճարներ	78,273	89,447
Պահեստ	31,552	44,032
Կանխավճարներ հարկերի գծով	55	21
Այլ	56,471	37,058
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	166,351	170,558
Ընդամենը այլ ակտիվներ	1,389,278	694,173

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,370	810
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(1,370)	(810)
Տրամադրված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	7,499	20,458
Զուտ դուրսգրում	(1,364)	(19,088)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,135	1,370

24 Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վարկեր բանկերից	1,400,626	2,743,505
Այլ վճարվելիք գումարներ բանկերին	13	-
Կանոնավոր գնման պայմանագրեր – սփոթ գործարքներ արտարժույթով	9,746	6,421
Ընդամենը բանկերի նկատմամբ պարտավորություններ	1,410,385	2,749,926

Բանկերից ստացված վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որի մնացորդները գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

25 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ռեպո համաձայնագրեր ԿԲ-ի հետ	16,010,497	14,004,213
Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ	-	2,444,342
Ռեպո համաձայնագրեր այլ ֆինանսական կազմակերպությունների հետ	-	75,623
Ընդամենը հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,010,497	16,524,178

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային կողմ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի (2020թ.՝ նույնպես), որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

26 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	28,936,398	21,897,534
Ժամկետային ավանդներ	21,245,596	16,474,112
	50,181,994	38,371,646
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	16,287,758	11,923,935
Ժամկետային ավանդներ	86,539,875	73,930,826
	102,827,633	85,854,761
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	153,009,627	124,226,407

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական/ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի և այլ պայմանական պարտավորությունների գծով համապատասխանաբար 8,469,367 հազար դրամ գումարով (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,147,416 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի չորս կապակցված հաճախորդների խումբ, որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք): 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդները կազմում են 21,419,441 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 21,036,636 հազար դրամ):

27 Թողարկված պարտքային արժեթղթեր

2021թ. ընթացքում Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Պարտատոմսի տեսակը	Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Անվանական արժեք	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
AMPROMB22ER2	02.03.2021	ՀՀ դրամ	10,000	50,000	10.0	02.09.2023	500,000,000
AMPROMB21ER2	02.03.2021	ԱՄՆ դոլար	10	50,000	5.5	02.09.2023	5,000,000
AMPROMB24ER8	23.03.2021	ՀՀ դրամ	10,000	50,000	10.0	23.09.2023	500,000,000
AMPROMB23ER0	23.03.2021	ԱՄՆ դոլար	100	50,000	5.5	23.09.2023	5,000,000

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

28 Այլ փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Փոխառություններ վարկային կազմակերպություններից	12,125,174	8,269,508
Ֆիզիկական անձանց կողմից ստացված փոխառություններ	5,448,416	6,437,468
Փոխառություններ ՀՀ ԿԲ-ից	2,777,241	1,032,808
Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	7,256,530	-
Ընդամենը այլ փոխառություններ	27,607,361	15,739,784

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի չորս ֆինանսական կազմակերպություն, որի միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ մեկ): 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդները կազմում են 24,912,541 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,264,283 հազար դրամ):

Ֆիզիկական անձանց կողմից ստացված փոխառությունները՝ Բանկի հետ կապակցված մեկ անձից ստացված գումարներն են (ծանոթագրություն 34):

29 Ստորադաս փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ֆիզիկական անձանց կողմից ստացված ստորադաս փոխառություն	4,872,881	5,303,185
Ընդամենը ստորադաս փոխառություն	4,872,881	5,303,185

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառության համաձայնագիր, որը Բանկի անվճարունակության դեպքում դասվում է երկրորդական Բանկի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

2016թ. ընթացքում Բանկը կապակցված անձից ստացել է 10,000 հազար ԱՄՆ դոլարի չափով ստորադաս փոխառություն, որի մարման ժամկետը սահմանված է 2026 թվականը:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ-ի ընթացքում՝ նույնպես):

30 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վարձակալության գծով պարտավորություններ	825,593	911,903
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	195,867	185,249
Պարտավորություններ շահաբաժինների գծով	571,000	481,842
Վճարվելիք գումարներ պետական աջակցության ծրագրերի շրջանակներում	28,480	143,963
Վճարվելիք գումարներ	569,694	375,071
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	2,190,634	2,098,028
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	186,112	181,303
Ակտիվներին վերաբերող շնորհներ	41,483	43,558
Ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստ ֆինանսական երաշխիքների գծով	15,583	17,213
Այլ	-	34
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	243,178	242,108
Ընդամենը այլ պարտավորություններ	2,433,812	2,340,136

Վարձակալության գծով պարտավորություններ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի տարածքների համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տես ծանոթագրություն 21):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Հունվարի 1-ի դրությամբ	911,903	480,323
Ավելացում	-	475,169
Դադարեցում	-	(71,895)
Տոկոսի կուտակում	81,019	53,312
ՕԻՀ ակտիվի ճշգրտում	-	100,331
Վճարումներ	(167,329)	(125,337)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	825,593	911,903

2021թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 6.6-10.42% (2020թ.՝ 6.6-10.42%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 37-ում:

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Բանկն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով (ծանոթագրություն 13):

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	43,558	45,632
Եկամտի ճանաչում	(2,075)	(2,074)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	41,483	43,558

31 Սեփական կապիտալ

2021թ. դեկտեմբերի 31-ի Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 20,000,000 հազ. դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 150,000 հատ հասարակ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100,000 դրամ անվանական արժեքով և 50,000 հատ արտոնյալ անժամկետ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100,000 դրամ անվանական արժեքով:

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Գեվորկյան Մարետա Ռուդիկի	19,373,600	96.9	19,261,600	96.3
Այլ բաժնետերեր	626,400	3.1	738,400	3.7
	20,000,000	100	20,000,000	100

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2020թ. Բանկը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 2,050,000 հազար դրամ գումարով՝ թողարկելով 600,000 հազար ՀՀ դրամի հասարակ և 1,450,000 հազար ՀՀ դրամի արտոնյալ բաժնետոմսեր: Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում կուտակված շահաբաժինների գումարը 2021թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմել է 571,000 հազար դրամ: (2020թ.-ին 481,842 հազար դրամ):

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 5%-ի չափով:

32 Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վարկերի և վարկային գծերի չօգտագործված մաս	10,412,638	5,982,769
Տրամադրված երաշխիքներ	2,569,078	3,224,593
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	12,981,716	9,207,362

Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պահուստներում (տե՛ս ծանոթագրություն 20-ում):

Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունները ներկայացվում են այլ պարտավորություններում, որոնց գծով վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Հազար ՀՀ դրամ	2021թ.	2020թ.
	Փուլ 1	Փուլ 1
Ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	17,213	974
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(11,656)	2,113
Տրամադրված նոր երաշխիքների գծով պահուստների զուտ վերաչափում	10,026	14,126
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,583	17,213

33 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի

հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

34 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի ուղղակի նշանակալից մասնակիցը հանդիսանում է Մարետա Գևորկյանը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան անուղղակի նշանակալից մասնակից և վերջնական վերահսկող է հանդիսանում Վազգեն Գևորկյանը:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2021		2020	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվություններ				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	4,444,362	346,730	5,068,871	306,582
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	-	450,820	57,439	251,902
Տարվա ընթացքում մարված վարկեր	(3,141,261)	(331,266)	(681,948)	(211,754)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	1,303,101	466,284	4,444,362	346,730
Արժեզրկումից պահուստ	(506)	(3,051)	(5,407)	(1,350)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,302,595	463,233	4,438,955	345,380
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդներ 1 հունվարի դրությամբ	6,384,974	1,513,807	7,572,412	775,913
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	2,584,086	14,763,680	27,755,568	3,803,512
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(4,393,716)	(2,648,187)	(28,943,006)	(3,065,618)
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,575,344	13,629,300	6,384,974	1,513,807
Սփորադաս փոխառություն	4,872,881	-	5,303,185	-
Այլ փոխառություններ	5,448,416	-	6,437,468	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ	154,169	40,367	292,500	32,121
Արժեզրկման (ծախս)/հակադարձում	4,901	(1,701)	(2,266)	(115)
Տոկոսային ծախսեր	(911,507)	(70,620)	(912,719)	(52,215)
Զուտ եկամուտ/(վնաս) ածանցյալ գործիքների վերագնահատումից	67,344	-	(81,376)	-
Այլ գործառնական ծախսեր	-	-	(15)	(699)

Բանկի հետ կապակցված անձանց տարվա ընթացքում տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-15 տարվա ընթացքում և դրանց արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 6-21% (2020թ.՝ 6-22%):

Ղեկավար անձնակազմի գծով կատարված հատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Աշխատավարձ և պարգևատրումներ	496,311	514,752
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	496,311	514,752

35 Իրական արժեքի չափումը

Բանկի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքները, շենքերը, այնպես էլ ոչ-պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ անշարժ գույքի և բռնագանձված ակտիվների գնահատման մեջ: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի Խորհրդի կողմից:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2՝ Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

35.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	43,389,076	-	43,389,076	43,389,076
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	20,348,011	-	20,348,011	20,348,011
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	-	2,294,215	-	2,294,215	2,294,215
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	3,676,933	-	3,676,933	3,631,245
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	139,801,076	-	139,801,076	139,957,954
Այլ ակտիվներ	-	1,222,927	-	1,222,927	1,222,927
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	1,410,385	-	1,410,385	1,410,385
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	16,010,497	-	16,010,497	16,010,497
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	152,248,525	-	152,248,525	153,009,627
Այլ փոխառություններ	-	27,607,361	-	27,607,361	27,607,361
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	6,016,754	-	6,016,754	5,822,097
Ստորադաս փոխառություն	-	4,872,881	-	4,872,881	4,872,881
Այլ պարտավորություններ	-	2,190,634	-	2,190,634	2,190,634

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	37,471,183	-	37,471,183	37,471,183
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	18,181,073	-	18,181,073	18,181,073
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	-	1,179,869		1,179,869	1,179,869
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	112,129,324	-	112,129,324	111,716,348
Այլ ակտիվներ	-	523,615	-	523,615	523,615
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	2,749,926	-	2,749,926	2,749,926
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	16,524,178	-	16,524,178	16,524,178
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	124,916,931	-	124,916,931	124,226,407
Այլ փոխառություններ	-	15,739,784	-	15,739,784	15,739,784
Ստորադաս փոխառություն	-	5,303,185	-	5,303,185	5,303,185
Այլ պարտավորություններ	-	2,098,028	-	2,098,028	2,098,028

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք զեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Այլ փոխառություններ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

35.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Պետական և ոչ պետական պարտատոմսեր	1,240,328	5,385,976	-	6,626,304
Բաժնային գործիքներ	-	-	42,825	42,825
Հետգնման պայմանագրերով գրավադրված պետական պարտատոմսեր	-	16,772,616	-	16,772,616
Ընդամենը	1,240,328	22,158,592	42,825	23,441,745

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Պետական և ոչ պետական պարտատոմսեր	2,012,301	12,433,482	-	14,445,783
Բաժնային գործիքներ	-	-	42,825	42,825
Հետգնման պայմանագրերով գրավադրված պետական պարտատոմսեր	-	5,728,670	-	5,728,670
Ընդամենը	2,012,301	18,162,152	42,825	20,217,278

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	67,344	-	67,344
Ընդամենը	-	67,344	-	67,344
Զուտ իրական արժեք	2,012,301	18,094,808	42,825	20,149,934

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 1-ին և 2-րդ մակարդակների միջև նշանակալի փոխանցումներ չեն կատարվել:

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Գնանշվող ներդրումներ

Բոլոր ցուցակված արժեթղթերը և պարտատոմսերը թողարկվել են Հայաստանում գրանցված ընկերությունների կողմից:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, արպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Ընդհանրապես, Բանկի կողմից իրականացվող ածանցյալները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային ֆորվարդային պայմանագրերից:

35.3 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Շենքեր և հողատարածք	-	-	6,803,322	6,803,322
Զուտ իրական արժեք	-	-	6,803,322	6,803,322

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Շենքեր և հողատարածք	-	-	6,748,877	6,748,877
Զուտ իրական արժեք	-	-	6,748,877	6,748,877

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են տնօրենների խորհրդի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Հողերի, շենքերի վերագնահատումը կատարվել է 2020թ. հունիսի 1-ին անկախ գնահատողների կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները:

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-րդում

3-րդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա:

Այս մակարդակում ոչ ֆինանսական ակտիվների տարեկան շարժը հետևյալն է՝

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Հունվարի 1-ի դրությամբ	6,748,877	4,633,873
Առք	9,099	16,220
Վերադասակարգումներ	45,346	24,058
Վերագնահատում	-	2,655,477
Կուտակված մաշվածության բացառում	-	(580,751)
Զուտ իրական արժեք դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,803,322	6,748,877

36 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.					
	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված համախառն գումարներ	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսական գործիքներ	Ստացված/ տրամադրված ոչ դրամական ապահովում	Զուտ գումար
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ (Ծանոթ.16)	20,348,011	-	20,348,011	-	20,348,011	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ (Ծանոթ. 19,25)	16,010,497		16,010,497	16,772,616	-	(762,119)

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված համախառն գումարներ	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսական գործիքներ	Ստացված/ տրամադրված ոչ դրամական ապահովում	Զուտ գումար
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ (Ծանոթ.16)	18,181,073	-	18,181,073	-	(18,181,073)	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ (Ծանոթ. 19,25)	16,524,178	–	16,524,178	(17,367,858)	-	(843,680)

Բանկի կողմից տրամադրված 500,546 հազ. ՀՀ դրամ վարկերը հաշվանցվել են ՀՀ կառավարության պարտավորությունների հետ, քանի որ Բանկը հանդիսանում է տվյալ վարկերի սպասարկման գործակալ և այդ վարկերը տրամադրվել են ՀՀ կառավարության կողմից կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ուղղված միջոցառումների շրջանակներում:

37 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 38.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահաշրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահաշրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	43,389,076	-	43,389,076	-	-	-	43,389,076
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	20,348,011	-	20,348,011	-	-	-	20,348,011
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	1,763,725	434,859	2,198,584	95,631	-	95,631	2,294,215
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները	-	5,581,639	5,581,639	11,137,258	6,722,848	17,860,106	23,441,745
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	273,653	273,653	2,240,565	1,117,027	3,357,592	3,631,245
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	3,876,011	26,898,562	30,774,573	69,046,321	40,137,060	109,183,381	139,957,954
Այլ ֆինանսական ակտիվներ	1,222,927	-	1,222,927	-	-	-	1,222,927
	70,599,750	33,188,713	103,788,463	82,519,775	47,976,935	130,496,710	234,285,173

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահաշվառագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահաշվառագումար	Ընդամենը
31 դեկտեմբերի 2021թ.							
Պարտավորություններ							
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	1,410,385	-	1,410,385	-	-	-	1,410,385
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,010,497	-	16,010,497	-	-	-	16,010,497
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	51,437,727	54,294,904	105,732,631	47,270,246	6,750	47,276,996	153,009,627
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	20,697	20,697	5,801,400	-	5,801,400	5,822,097
Այլ փոխառություններ	213,700	1,035,797	1,249,497	18,558,963	7,798,901	26,357,864	27,607,361
Ստորադաս փոխառություններ	21,783	49,958	71,741	4,801,140	-	4,801,140	4,872,881
Այլ ֆինանսական պարտավորություններ	793,205	668,140	1,461,345	416,660	312,629	729,289	2,190,634
	69,887,297	56,069,496	125,956,793	76,848,409	8,118,280	84,966,689	210,923,482
Զուտ Դիրք	712,453	(22,880,783)	(22,168,330)	5,671,366	39,858,655	45,530,021	23,361,691
Կուտակված ճեղքվածք	712,453	(22,168,330)		(16,496,964)	23,361,691		

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահաշվառագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահաշվառագումար	Ընդամենը
31 դեկտեմբերի 2020թ.							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	37,471,183	-	37,471,183	-	-	-	37,471,183
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	18,181,073	-	18,181,073	-	-	-	18,181,073
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	655,369	317,990	973,359	206,510	-	206,510	1,179,869
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	2,623,741	2,623,741	8,676,761	3,188,106	11,864,867	14,488,608
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	402,452	402,452	3,652,216	1,674,002	5,326,218	5,728,670
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	5,777,514	25,304,731	31,082,245	55,597,660	25,036,443	80,634,103	111,716,348
Այլ ֆինանսական ակտիվներ	523,615	-	523,615	-	-	-	523,615
	62,608,754	28,648,914	91,257,668	68,133,147	29,898,551	98,031,698	189,289,366

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահան-րագումար	Ընդամենը
			31 դեկտեմբերի 2020թ.				
Պարտավորություններ							
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,749,926	-	2,749,926	-	-	-	2,749,926
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,524,178	-	16,524,178	-	-	-	16,524,178
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	38,642,883	48,220,991	86,863,874	37,359,175	3,358	37,362,533	124,226,407
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	34,072	34,072	33,272	-	33,272	67,344
Այլ փոխառություններ	62,758	814,282	877,040	9,736,880	5,125,864	14,862,744	15,739,784
Ստորադաս փոխառություններ	23,422	53,863	77,285	-	5,225,900	5,225,900	5,303,185
Այլ ֆինանսական պարտավորություններ	695,472	579,084	1,274,556	414,626	408,846	823,472	2,098,028
	58,698,639	49,702,292	108,400,931	47,543,953	10,763,968	58,307,921	166,708,852
Զուտ Դիրք	3,910,115	(21,053,378)	(17,143,263)	20,589,194	19,134,583	39,723,777	22,580,514
Կուտակված ճեղքվածք	3,910,115	(17,143,263)		3,445,931	22,580,514		

38 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն, իր հերթին, բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Բանկի Խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է գործընթացների ներդրման, իրականացման և վերահսկման համար, որոնք կապված են ռիսկերի կառավարման հետ:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար: Տվյալ բաժինը նաև ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքը:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի Խորհրդին և Վարչությանը:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է "վատագույն դեպքերը", որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Բանկի Խորհրդին և Վարչությանը: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ պարտքային ռիսկի համապարփակ չափի, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, իրացվելիության ցուցանիշների և ռիսկի աստիճանի փոփոխության վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ բնագավառների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, ըստ ժամկետայնության: Վարչությունը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Յուրաքանչյուր օր ռիսկերի ստորաբաժանման կողմից տրամադրվում է հաշվետվություն վարչության անդամներին, որը ներառում է բանկային նորմատիվները, բանկի ընթացիկ հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի օրական փոփոխությունը և արտահաշվեկշռային հոդվածների փոփոխությունը:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

38.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

38.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված հանձնառությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 38.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	11,023,309	-	-	11,023,309
Ստանդարտ	32,370,078	-	-	32,370,078
Համախառն հաշվեկշռային արժեք	43,393,387	-	-	43,393,387
Արժեզրկումից պահուստ	(4,311)	-	-	(4,311)
Զուտ հաշվեկշռային արժեք	43,389,076	-	-	43,389,076
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով սպացվելիք գումարներ				
Ստանդարտ	20,360,194	-	-	20,360,194
Համախառն հաշվեկշռային արժեք	20,360,194	-	-	20,360,194
Արժեզրկումից պահուստ	(12,183)	-	-	(12,183)
Զուտ հաշվեկշռային արժեք	20,348,011	-	-	20,348,011
Բանկերին տրված վարկեր և փոխառվություններ				
Ստանդարտ	2,299,299	-	-	2,299,299
Համախառն հաշվեկշռային արժեք	2,299,299	-	-	2,299,299
Արժեզրկումից պահուստ	(5,084)	-	-	(5,084)
Զուտ հաշվեկշռային արժեք	2,294,215	-	-	2,294,215
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	63,783,787	-	-	63,783,787
Ստանդարտ	272,571	923,493	-	1,196,064
Ցածր	-	316,819	-	316,819
Չաշխատող	-	-	1,154,013	1,154,013
Համախառն հաշվեկշռային արժեք	64,056,358	1,240,312	1,154,013	66,450,683
Արժեզրկումից պահուստ	(534,814)	(430,426)	(600,729)	(1,565,969)
Զուտ հաշվեկշռային արժեք	63,521,544	809,886	553,284	64,884,714
Առևտրային վարկեր				
Բարձր	74,952,031	-	-	74,952,031
Ստանդարտ	19,387	209,971	-	229,358
Ցածր	-	8,012	-	8,012
Չաշխատող	-	-	430,402	430,402
Համախառն հաշվեկշռային արժեք	74,971,418	217,983	430,402	75,619,803
Արժեզրկումից պահուստ	(388,223)	(60,766)	(97,574)	(546,563)
Զուտ հաշվեկշռային արժեք	74,583,195	157,217	332,828	75,073,240

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ	3,638,825	-	-	3,638,825
Համախառն հաշվեկշռային արժեք	3,638,825	-	-	3,638,825
Արժեզրկումից պահուստ	(7,580)	-	-	(7,580)
Զուտ հաշվեկշռային արժեք	3,631,245	-	-	3,631,245
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ վարկանիշ	23,398,920	-	-	23,398,920
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	23,398,920	-	-	23,398,920
Արժեզրկումից պահուստ	(71,920)	-	-	(71,920)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	1,229,062	-	-	1,229,062
Համախառն հաշվեկշռային արժեք	1,229,062	-	-	1,229,062
Արժեզրկումից պահուստ	(6,135)	-	-	(6,135)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,222,927	-	-	1,222,927
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ				
Բարձր	12,981,716	-	-	12,981,716
Համախառն հաշվեկշռային արժեք	12,981,716	-	-	12,981,716
Արժեզրկումից պահուստ*	(15,583)	-	-	(15,583)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020			
Վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	9,024,169	-	-	9,024,169
Ստանդարտ	28,451,012	-	-	28,451,012
Համախառն հաշվեկշռային արժեք	37,475,181	-	-	37,475,181
Արժեզրկումից պահուստ	(3,998)	-	-	(3,998)
Զուտ հաշվեկշռային արժեք	37,471,183	-	-	37,471,183
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ				
Ստանդարտ	18,191,040	-	-	18,191,040
Համախառն հաշվեկշռային արժեք	18,191,040	-	-	18,191,040
Արժեզրկումից պահուստ	(9,967)	-	-	(9,967)
Զուտ հաշվեկշռային արժեք	18,181,073	-	-	18,181,073

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2020
Վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ				
Ստանդարտ	1,190,761	-	-	1,190,761
Համախառն հաշվեկշռային արժեք	1,190,761	-	-	1,190,761
Արժեզրկումից պահուստ	(10,892)	-	-	(10,892)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,179,869	-	-	1,179,869
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	51,457,933	-	-	51,457,933
Ստանդարտ	716,527	333,979	-	1,050,506
Ոչ ստանդարտ	-	1,175,404	-	1,175,404
Չաշխատող	-	-	3,266,392	3,266,392
Համախառն հաշվեկշռային արժեք	52,174,460	1,509,383	3,266,392	56,950,235
Արժեզրկումից պահուստ	(716,271)	(770,661)	(2,044,324)	(3,531,256)
Զուտ հաշվեկշռային արժեք	51,458,189	738,722	1,222,068	53,418,979
Առևտրային վարկեր				
Բարձր	56,852,087	-	-	56,852,087
Ստանդարտ	11,191	1,375,049	-	1,386,240
Ոչ ստանդարտ	-	32,000	-	32,000
Չաշխատող	-	-	586,170	586,170
Համախառն հաշվեկշռային արժեք	56,863,278	1,407,049	586,170	58,856,497
Արժեզրկումից պահուստ	(276,832)	(62,187)	(220,109)	(559,128)
Զուտ հաշվեկշռային արժեք	56,586,446	1,344,862	366,061	58,297,369
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	20,174,453	-	-	20,174,453
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	20,174,453	-	-	20,174,453
Արժեզրկումից պահուստ	(79,469)	-	-	(79,469)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	524,985	-	-	524,985
Համախառն հաշվեկշռային արժեք	524,985	-	-	524,985
Արժեզրկումից պահուստ	(1,370)	-	-	(1,370)
Զուտ հաշվեկշռային արժեք	523,615	-	-	523,615
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ				
Բարձր	9,207,362	-	-	9,207,362
Համախառն հաշվեկշռային արժեք	9,207,362			9,207,362
Արժեզրկումից պահուստ*	(17,213)	-	-	(17,213)

*Արժեզրկումից պահուստը ներկայացնում է Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստները: Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պահուստներում:

38.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Բանկը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում պարտազանցում տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Բանկը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցման տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները

չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալուհավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած B2 մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Բանկի կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Բանկը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են պարտազանցում տեղի ունենալու ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում վարկերի ժամկետանց օրերով պայմանավորված՝ ոչ ժամկետանց ֆինանսական ակտիվները սահմանվում են որպես բարձր վարկանիշ ունեցող, մինչև 30 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ստանդարտ վարկանիշ ունեցող, ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ոչ ստանդարտ կամ ցածր և ավելի քան 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ չաշխատող վարկանիշ ունեցող) գործոններով, որոնք մատնանշում են պատազանցում տեղի ունենալու ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հաճախորդներին տրված վարկերի, փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորությունների համար միջին 12-ամսյա PD-ները ըստ յուրաքանչյուր վարկանիշի.

Հազար ՀՀ դրամ	Վարկանիշ	2021 12-ամսյա PD –ի միջակայք	2020 12-ամսյա PD –ի միջակայք
Հիփոթեքային և սպառողական վարկեր	Բարձր, Ստանդարտ	0.54-9.21%	1.47-9.5%
	Ոչ ստանդարտ	4.75-75.61%	26.70-62.03%
	Չաշխատող	76.31-100%	94.98-100%
Վարկեր կոմերցիոն հաճախորդներին	Բարձր, Ստանդարտ	1.61-11.13%	0.43-4.59%
	Ոչ ստանդարտ	22.96-40.79%	7.23-78.41%
	Չաշխատող	89.84-100%	76.82-100%

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի գնահատման համակարգի քարտեզագրումը և գործընկերների արտաքին վարկանիշները.

Միջազգային արտաքին վարկանիշային գործակալության (S&P) վարկանիշ	Վարկանիշ	2021 12-ամսյա PD	2020 12-ամսյա PD
AAA -ից A-	Բարձր	0.001-0.025%	0.001-0.040%
BBB+ -ից B-	Ստանդարտ	0.043-3.472%	0.059-7.207%
CCC+ to CC	Ոչ ստանդարտ	6.003-31.025%	12.834-23.604%
D	Չաշխատող	100%	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Բանկը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապափակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Բանկը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Պարտրազանցման սահմանում և «առողջացում»

Բանկը համարում է ֆինանսական գործիքը պարտազանցման ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Բանկը միջբանկային հաշիվները համարում է պարտազանցման ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտազանցման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն պարտազանցման ենթարկված է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում պարտազանցման սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Բանկի՝ ակնկալվող

պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Բանկը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Բանկը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Բանկի՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Բանկը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Բանկը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.4 ծանոթագրությունում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Փուլ 2-ում և Փուլ 3-ում ներառված ակտիվները, որոնք փոփոխվել են, և, հետևաբար, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համարվում են վերանայված՝ Բանկի կողմից փոփոխությունների գծով կրած կորուստների հետ միասին:

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեք	34,894	54,300
Փոփոխությունից զուտ վնաս	(11,813)	(12,690)

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են պարտազանցումից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար պարտազանցման տեղի ունենալու ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում պարտազանցման տեղի ունենալու պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ

սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի պարտազանցումների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Բանկը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Ակնկալվող պարտքային կորուստների մակրոտնտեսական ճշգրտումը հաշվարկելու համար Բանկն օգտագործում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակ՝ որպես իր մոդելների տնտեսական ներածություն, ներառյալ.

- ՀՆԱ-ի աճ,
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանֆերտներ (արտահայտված ԱՄՆ դոլլարով)
- Գործազրկության մակարդակ, ընդամենը (ընդհանուր աշխատուժի տոկոս)
- Բանկի չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում (%)
- Առևտուր (աճի տեմպ %)
- Արդյունաբերություն (աճի տեմպ %)
- Արտարժույթի փոխարժեք
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

38.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն հիմնականում տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

Արդյունաբերության ճյուղեր

Վարկային ներդրումների վերլուծությունը ըստ ճյուղերի ներկայացված է 20 ծանոթագրությունում:

38.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը նաև երաշխիքներ է ստանում մայր ընկերություններից իրենց դուստր ընկերությունների վարկերի համար: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Անշարժ գույք	101,676,433	67,045,128
Շարժական գույք և այլ հիմնական միջոցներ	1,227,609	1,212,684
Ընթացիկ հաշիվներ և ժամկետային ավանդներ	4,213,007	5,884,680
Պաշարներ	1,857,220	3,140,741
Երաշխավորություններ	13,905,900	6,899,219
Ոսկյա զարդեր և ոսկյա այլ իրեր	1,791,072	1,515,356
Այլ	440,309	235,661
Ապահովվածություն չունեցող	16,958,936	29,873,263
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	142,070,486	115,806,732

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

2021 թ. դեկտեմբերի 31-ին Բանկը ունի 26,406,720 հազար դրամ (2020թ.՝ 20,662,173 հազար դրամ) զուտ հաշվեկշռային արժեքով հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխատվություններ, որոնք ապահովված են գրավով, և գրավի արժեքը գերազանցում է այդ վարկերի և փոխատվությունների հաշվեկշռային արժեքը: Նշված վարկերի դիմաց գրավի (հիմնականում կոմերցիոն գույք) գումարը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 91,141,038 հազար դրամ (2020թ՝ 68,335,576 հազար դրամ):

38.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

38.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով:

Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով եկամտաբերության կորի ենթադրվող փոփոխությունները:

Հազար ՀՀ դրամ — **2021**

Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն	Ընդամենը
ՀՀ դրամ	+1	(8,151)	(670,822)	(678,973)
ՀՀ դրամ	(1)	8,151	670,822	678,973

Հազար ՀՀ դրամ — **2020**

Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն	Ընդամենը
ՀՀ դրամ	+1	34,750	(579,074)	(544,324)
ՀՀ դրամ	(1)	(34,750)	579,074	544,324

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի

31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

Հազար ՀՀ դրամ	2021			2020		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	9.2	2.8	-	6.2	2.8	-
Բանկերին տրամադրված վարկեր	-	5.0	-	-	6.8	-
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ	-	-	7.8	-	-	-
Ներդրումային արժեթղթեր	8.7	8.2	-	8.0	7.0	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	14.0	8.8	8.3	15.7	8.7	-
Տոկոսաբեր պրտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	8.5	-	-	5.6	1.5	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	8.3	-	-	5.6	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	9.9	4.8	5.9	9.6	4.9	5.9
Թողարկված պարտքային արժեթղթեր	10.4	5.6	-	-	-	-
Այլ փոխառություններ	6.1	5.3	-	5.8	3.3	-
Ստորադաս փոխառություններ	-	9.3	-	-	9.3	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական

արդյունքի մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
Ազատ փոխարկելի	+5	26,567	+5	48,530
Ոչ ազատ փոխարկելի	+5	(1,058)	+5	187

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2021			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,151,429	24,292,703	944,944	43,389,076
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	19,465,594	882,417	-	20,348,011
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	623,501	1,111,944	558,770	2,294,215
Ներդրումային արժեթղթեր	26,394,781	678,209	-	27,072,990
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	54,929,235	85,028,116	603	139,957,954
Այլ ֆինանսական ակտիվներ	470,856	626,308	125,763	1,222,927
	120,035,396	112,619,697	1,630,080	234,285,173
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	1,400,626	9,746	13	1,410,385
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,010,497	-	-	16,010,497
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	61,758,686	88,386,573	2,864,368	153,009,627
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,005,685	4,816,412	-	5,822,097
Այլ փոխառություններ	14,902,415	12,704,946	-	27,607,361
Ստորադաս փոխառություններ	-	4,872,881	-	4,872,881
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,105,987	82,657	1,990	2,190,634
	97,183,896	110,873,215	2,866,371	210,923,482
Կանոնավոր գնման պայմանագրեր-սփոթ գործարքների ազդեցությունը	-	(1,215,138)	1,215,138	-
Զուտ դիրք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,851,500	531,344	(21,153)	23,361,691

Հազար ՀՀ դրամ				2021
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ 2021թ. դեկտեմբերի 31-ին	8,489,200	4,492,516	-	12,981,716
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	94,404,092	93,193,182	1,692,092	189,289,366
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	73,566,720	90,188,569	2,886,219	166,641,508
Կանոնավոր գնման պայմանագրեր-սփոթ գործարքների ազդեցությունը	-	(1,197,872)	1,197,872	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	768,800	(836,144)	-	(67,344)
Զուտ դիրք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,606,172	970,597	3,745	22,580,514
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին	6,412,592	2,794,770	-	9,207,362

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

38.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 15-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության

նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2021, %	2020, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	31.29	26.00
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	161.04	152.21

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 37-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	1,411,011	-	-	-	1,411,011	1,410,385
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,028,001	-	-	-	16,028,001	16,010,497
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	51,819,624	57,268,307	50,814,465	11,589	159,913,985	153,009,627
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	364,077	6,077,699	-	6,441,776	5,822,097
Այլ փոխառություններ	249,868	2,120,240	22,288,248	8,958,297	33,616,653	27,607,361
Ստորադաս փոխառություններ	23,914	408,681	6,487,497	-	6,920,092	4,872,881
Այլ ֆինանսական պարտավորություններ	799,731	734,738	618,687	367,223	2,520,379	2,190,634
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	70,332,149	60,896,043	86,286,596	9,337,109	226,851,897	210,923,482
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ0	312,968	2,940,380	9,011,581	716,787	12,981,716	12,981,716

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,753,134	-	-	-	2,753,134	2,749,926
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,544,173	-	-	-	16,544,173	16,524,178
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	38,747,693	51,201,986	40,359,518	6,421	130,315,618	124,226,407
Այլ փոխառություններ	77,593	1,455,242	12,094,374	5,842,381	19,469,590	15,739,784
Ստորադաս փոխառություններ	25,226	444,302	1,883,643	5,648,554	8,001,725	5,303,185
Այլ ֆինանսական պարտավորություններ	702,640	652,913	653,412	501,926	2,510,891	2,098,028
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	58,850,459	53,754,443	54,990,947	11,999,282	179,595,131	166,641,508
Ածանցյալ ֆինանսական գործիքներ						
Արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրեր						
Ներհոսք	-	384,000	384,800		768,800	768,800
Արտահոսք	-	(418,072)	(418,072)		(836,144)	(836,144)
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ	331,033	4,179,474	4,370,072	326,783	9,207,362	9,207,362

38.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Խորհուրդը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

39 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

	Ստորադաս փոխառություններ	Այլ երկարաժամկետ փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Պարտավորություններ շահաբաժինների գծով	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,261,764	6,097,777	480,323	426,000	-	17,265,864
Մուտքեր	-	9,478,520	-		-	9,478,520
Մարումներ	(5,716,940)	(872,023)	(125,337)	(426,000)	-	(7,140,300)
Արտարժութային փոխարկումներ	758,361	1,000,840	-	-	-	1,759,201
Այլ	-	34,670	556,917	481,842	-	1,073,429
Հաշվեկշռային արժեք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,303,185	15,739,784	911,903	481,842	-	22,436,714
Մուտքեր	-	14,714,560	-	-	6,276,715	20,991,275
Մարումներ	-	(1,656,317)	(167,329)	(481,842)	-	(2,305,488)
Արտարժութային փոխարկումներ	(430,813)	(1,362,158)	-	-	(475,756)	(2,268,727)
Այլ	509	171,492	81,019	571,000	21,138	845,158
Հաշվեկշռային արժեք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,872,881	27,607,361	825,593	571,000	5,822,097	39,698,932

«Այլ» տողում ներառված են նոր ձևավորված վարձակալության գծով պարտավորությունները և անկանխիկ շարժում հանդիսացող վարձակալության վերանայումները: Այն նաև ներառում է թողարկված պարտքային արժեթղթերի, այլ երկարաժամկետ փոխառություններ, ստորադաս փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսները: Բանկը դասակարգում է վժարված տոկոսները որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

40 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Բանկերի համար ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանվում է 30.000.000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Հիմնական կապիտալ	27,119,945	29,266,068
Լրացուցիչ կապիտալ	7,411,734	8,779,820
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	34,531,679	38,045,888
Ռիսկով կշռված ակտիվներ	232,205,321	192,308,841
Կապիտալի համարժեքության նորմատիվ	14.87%	19.78%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

41 Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտներ

Բանկի գործունեությունը կազմակերպվում է երեք հիմնական գործառնական սեգմենտներով: Այս գործառնական սեգմենտները համակարգվում են, և դրանց արդյունքների հիման վրա կայացվում են ռազմավարական որոշումներ:

Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ – տվյալ բիզնես-սեգմենտը ներառում է հաճախորդներին ընթացիկ հաշիվների բացման և վարման, ավանդների ներգրավման գծով բանկային ծառայությունների մատուցումը, դեպո հաշիվների վարումը, բանկային քարտերի սպասարկումը, սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրումը:

Կազմակերպություններին մատուցվող ծառայություններ – տվյալ բիզնես-սեգմենտը ներառում է կազմակերպությունների հաշվարկային և ընթացիկ հաշիվների սպասարկումը, ավանդների ընդունումը, վարկերի և այլ ֆինանսավորման տեսակների տրամադրումը, արտարժույթով գործառնությունները և ածանցյալ գործիքների հետ գործարքները:

Բանկային ներդրումային ծառայություններ – տվյալ բիզնես-սեգմենտը ներառում է ֆինանսական ակտիվների հետ գործողությունները, համակարգված ֆինանսավորման տրամադրումը, վարձակալությունը, կազմակերպությունների միաձուլման և դադարեցման հարցերով խորհրդատվությունների տրամադրումը:

Բիզնես-սեգմենտների միջև գործողությունները կատարվում են առևտրային պայմաններով: Տեղի է ունենում բիզնես-սեգմենտների միջև ֆինանսական ռեսուրսների վերաբաշխում, ինչի արդյունքում գործառնական եկամուտներում արտացոլվում է ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման արժեքը: Վերոնշյալ ռեսուրսների գծով տոկոսադրույքը հաշվարկվում է Բանկի կապիտալի արժեքի հիման վրա: Բիզնես-սեգմենտների միջև առկա չեն եկամուտի և ծախսերի այլ էական հոդվածներ: Սեգմենտների ակտիվները և պարտավորությունները ներառում են գործառնական ակտիվները և պարտավորությունները, որոնք կազմում են Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծ մասը, բացառությամբ այնպիսի հոդվածների, ինչպիսիք են՝ հարկումը և այլ փոխառու միջոցները: Ներքին ծախսերը և ճշգրտումները՝ վերաբաշխված ֆինանսական ռեսուրսների արժեքի հաշվարկով, հաշվի են առնվել յուրաքանչյուր բիզնես-սեգմենտի ֆինանսական արդյունքի որոշման ժամանակ: Արտաքին հաճախորդների հետ գործարքներից եկամուտները բաշխվում են ըստ գործունեության ոլորտների՝ եկամուտների բաժանման վերաբերյալ համաձայնություններին համապատասխան բավարար հիմքերի առկայության դեպքում:

Ստորև ներկայացված է վերոնշյալ բիզնես-սեգմենտների գծով սեգմենտային տեղեկատվությունը՝

Հազար ՀՀ դրամ	2021			
	Ֆիզիկական անձանց մատուցված ծառայություններ	Կազմակերպություններին մատուցված ծառայություններ	Բանկային ներդրումային ծառայություններ	Ընդամենը
Զուտ տոկոսային եկամուտներ	1,268,826	2,982,416	2,215,693	6,466,935
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ	781,270	745,957	261,067	1,788,294
Միջսեգմենտային եկամուտ	319,524	(287,503)	(32,021)	-
Գործառնական եկամուտ	2,369,620	3,440,870	2,444,739	8,255,229
Արժեզրկման ծախս	(2,101,076)	16,701	(3,798)	(2,088,173)
Անձնակազմի գծով ծախսեր	(1,214,159)	(1,124,458)	(88,986)	(2,427,603)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(386,093)	(346,301)	(27,405)	(759,799)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(783,463)	(666,897)	(52,776)	(1,503,136)
Շահույթ մինչև հարկումը	(2,115,170)	1,319,915	2,271,773	1,476,518
Շահութահարկի գծով ծախս	499,229	(311,530)	(536,191)	(348,492)
Տարվա շահույթ	(1,615,942)	1,008,385	1,735,583	1,128,026
Սեգմենտային ակտիվներ	64,885,978	75,071,976	105,757,038	245,714,992
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	64,885,978	75,071,976	50,804,433	190,762,387
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	114,944,451	60,224,114	35,998,158	211,166,723

42 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

- 2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով համաշխարհային տնտեսության վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի դեմ: Արևմտյան ուժերը քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանը Հայաստանի գլխավոր առևտրատնտեսական գործընկերն է, ուստի ներկայումս կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման: Իրավիճակի անմիջական ազդեցությունը դժվար է հստակորեն կանխատեսել, սակայն ղեկավարության գնահատմամբ այն նշանակալի ազդեցություն չի ունենա Բանկի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա:
- 2022թ.-ի մարտի 28-ին Բանկը բաց տեղաբաշխմամբ թողարկել է պարտատոմսեր 2 մլրդ. ՀՀ դրամ և 10 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով: Պարտատոմսերի արժեկտրոնային

տարեկան եկամտաբերությունը՝ 11% և 5% է, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ եռամսյակային, շրջանառության ժամկետը՝ 30 ամիս: